UNITED NATIONS GEORGIA

World Vision GEORGIA



# ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԸ

## ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԺԱՄԱՆԱԿ

### ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

2021

World Vision
GEORGIA

UNITED NATIONS
GEORGIA

# ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԸ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԺԱՄԱՆԱԿ

**Գործնական ուղեցույց**
**մանկապարտեզների համար**

***(փորձնական տարբերակ)***

საქართველოს განათლების,
მეცნიერების, კულტურისა
და სპორტის სამინისტრო

**2021**

**Ուղեցույցի վրա աշխատել են.**

**Ցիրա Բարքաիա**՝ հոգեբան, ներառական և վաղ կրթության մասնագետ, «WV Վրաստանի» Վաղ տարիքում երեխայի զարգացման ծրագրի համակարգող, Ուղեցույցի փորձագետ

**Զուրաբ Ալխանիշվիլի**՝ առողջապահության աջակցության մագիստրոս, «WV Վրաստանի» խորհրդատու, Ուղեցույցի առողջապահության փորձագետ

**Նանա Գոչիաշվիլի**՝ սոցիալական աշխատող, իրավաբան, «WV Վրաստանի» փորձագետ, Ուղեցույցի երեխաների պաշտպանության փորձագետ

**Թեոնա Ջուլուխաձե**՝ հանրային քաղաքականության և կառավարման մասնագետ, նախադպրոցական կրթության մասնագետ, «WV Վրաստանի» խորհրդատու, նախադպրոցական կրթության կառավարման փորձագետ

**Նինո Կիկնավելիձե**՝ հոգեբան, վաղ կրթության մասնագետ, «WV Վրաստանի» մասնագետ, Ուղեցույցի նախադպրոցական կրթության փորձագետ

**Մարիամ Խվադագիանի**՝ նյարդահոգեբան, «WV Վրաստանի» խորհրդատու, Ուղեցույցի հոգեբան

**Մայա Բագրատիոնի-Գրուզինսկի**՝ ներառական կրթության խորհրդատու, նյարդահոգեբանության մագիստրոս, «WV Վրաստանի» խորհրդատու, սահմանափակ հնարավորությունների հարցերով փորձագետ

Խմբագիր՝ **Ճաբուկի Քիրիա**
Շապիկի ձևավորումը՝ **Նիկոլոզ Լոմիձե**
Դիզայնը՝ **Գվանցա Մախաթաձե**
Հայերեն թարգմանությունը՝ **Զոյա Մխիթարյանի**

World Vision Վրաստան
Թբիլիսի, 2021 թ

Սույն Ուղեցույցի վրացերեն տեքստի հայերեն թարգմանությունը պատրաստվել է World Vision Վրաստանի  (WVG) կողմից, Վրաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգողի գրասենյակի (RCO) աջակցությամբ։

**«World Vision Վրաստանը»** 20 տարի շարունակ հոգ է տանում երեխաների պաշտպանության համակարգերի հզորացման և հասարակության դերի ակտիվացման մասին՝ երեխաների բարեկեցության համար ներառական, հանդուրժող, արդար և հավասար միջավայր խթանելու նպատակով:

Այս նպատակին հասնելու համար կազմակերպությունն օգտագործում է համալիր մոտեցում, որը ներառում է ընտանիքի ամրապնդում, կրթական հաստատությունների աջակցություն և համայնքի ներգրավվածության մեծացում:

COVID-19-ի համավարակն առանձնահատուկ մարտահիրավերների առջև կանգնեցրեց կրթական համակարգն ամբողջ աշխարհում: Վրաստանում առկա նախադպրոցական և հանրակրթական հաստատությունները ևս բացառություն չէին: Վտանգի առջև կանգնեցին ինչպես հաստատությունների պատշաճ գործունեությունը և ուսումնական գործընթացի հեռավար վարումը, այնպես էլ կրթության մատչելիությունը:

2020 թվականի նոր ուսումնական տարվանից պետության կողմից մշակված կանոնակարգերի և հանձնարարականների նախատեսման համար նախադպրոցական հաստատությունները լրացուցիչ աջակցության կարիք ունեն:

Այդ նպատակով **«World Vision Վրաստանի»** նախաձեռնությամբ կազմվեց տարբեր մասնագիտությունների փորձագետների խումբ ինչպես դպրոցական, այնպես էլ նախադպրոցական կրթության ուղղությամբ:

Միջառարկայական թիմի նպատակն էր Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Հիվանդությունների վերահսկման ու հանրային առողջության ազգային կենտրոնի հետ համագործակցությամբ ստեղծել գործնական ուղեցույց դպրոցների և նախադպրոցական հաստատությունների համար, որը կնպաստի կրթական գործընթացը վարելուն՝ համաձայն առողջապահական կանոնակարգերի:

Նշենք նաև, որ ուղեցույցի ստեղծման և կատարելագործման գործընթացում ներգրավված էին ինչպես գործող ղեկավարները, այնպես էլ ոլորտի մասնագետներ:

Համավարակի պայմաններում կրթական հաստատությունների գործունեությունը բավականին բարդ և փոփոխական գործընթաց է: Վրաստանում գործող դպրոցներն ու նախակրթական հաստատությունները տարբեր մարտահիրավերների առջև են կանգնել:

Սույն փաստաթուղթը՝ «Մանկապարտեզները համավարակի ժամանակ: Գործնական ուղեցույց նախադպրոցական հաստատությունների համար», փորձնական տարբերակ է: Այն կատարելագործելու համար ընթացիկ կիսամյակում կհավաքվեն տվյալներ, գործնական աշխատողների արձագանքներ, որոնք հնարավորինս կարտացոլվեն ուղեցույցում, և դրանից հետո այն վերջնական տեսքի կբերվի:

Այստեղ ցանկանում ենք նաև համագործակցության և կոնկրետ հանձնարարականների համար շնորհակալություն հայտնել Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը և Հիվանդությունների վերահսկման ու հանրային առողջության ազգային կենտրոնին:

Հատկապես կարևոր էին այն արձագանքները և գործնական խորհուրդները, որոնք խորհրդատվական խմբի անդամները մեզ են տրամադրել Ուղեցույցի մշակման տարբեր փուլերում, ինչի համար խորապես շնորհակալ ենք:

World Vision Վրաստանը շնորհակալություն է հայտնում Վրաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգողիգրասենյակին (RCO)՝ սույն Ուղեցույցի թարգմանությանն աջակցելու համար:

Հուսով ենք, որ Ուղեցույցը զգալի աջակցություն կցուցաբերի հաստատություններին՝ համավարակի պայմաններում կրթական գործընթացը վերսկսելու և վարելու մեջ:

Ուղեցույցը կատարելագործելու նպատակով ուղարկե՛ք մեզ ձեր առաջարկությունները, մարտահիրավերները, հարցերը էլ.փոստի միջոցով՝ tsira_barkaia@wvi.org կամ էլեկտրոնային նամակով մեզ ֆեյսբուքյան էջին՝ World Vision Georgia

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ COVID 19-Ի ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ** 6

Քովիդ 19-ի կանխարգելումը և կազմակերպումը 6

Այց նախադպրոցական հաստատություն 7

Վարակների վերահսկման միջոցառումներ 8

Երեխաների և անձնակազմի մեկուսացման անհրաժեշտություն 9

**ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՄԻՏՎԱԾ ՄՈՏԵՑՈՒՄԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ** 12

Երեխայի իրավունքների պաշտպանությունը COVID 19-ի համավարակի պայմաններում 12

Վաղ կրթության նշանակությունը 13

Նախադպրոցական հաստատության դերը երեխաների իրավունքների պաշտպանության ուղղությամբ 13

Առողջության իրավունքի պաշտպանություն 15

Անձնական տվյալների պաշտպանությունը 15

Երեխայի իրազեկվածությունը և ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացի մեջ 17

**ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ՆՊԱՍՏՈՒՄԸ, ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ COVID 19-Ի ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ** 20

Հանձնարարականներ մունիցիպալիտետներին 20

Հանձնարարականներ Վրաստանի գրավյալ տարածքներից տեղահանված անձանց աշխատանքի, առողջապահության և սոցապահովման նախարարությանը 24

Հանձնարարականներ նախադպրոցական հաստատություններին 24

Հանձնարարականներ ծնողներին/օրինական ներկայացուցիչներին 27

Հանձնարարականներ Վրաստանի կրթության, գիտության և սպորտի նախարարությանը 28

**ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՁԵՎԵՐԸ COVID 19-Ի ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԱԽԱՏԵՍՄԱՄԲ** 30

Նախադպրոցական կրթական ծառայություններ մատուցելու առկա ձևը 30

Նախադպրոցական կրթական ծառայության տրամադրման հեռավար ձևը 33

Նախադպրոցական կրթական ծառայության տրամադրման հիբրիդային ձևը 37

**ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀՈՒԶԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ COVID 19-ՈՎ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ** 40

Ինչպես է դաստիարակը նախապատրաստվում կրթության մեկնարկին 46

Ինչպես է երեխան ծնողի աջակցությամբ պատրաստվում նախադպրոցական հաստատություն հաճախելուն 47

Ինչպե՞ս է ծնողը պատրաստում երեխային նախադպրոցական հաստատության համար: 48

Կրթական գործընթացում ինչպե՞ս ստեղծենք առավելագույնս բարյացակամ հուզական միջավայր: 49

Եթե երեխան խմբում գտնվելու ժամանակ ունի բարձր ջերմություն ($37^0$ կամ ավելի) 50

**ԿՐԹԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀՈՒԶԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ** 52

Հանձնարարականներ կրթական անձնակազմի հուզական բարեկեցության պահպանման համար 52

**Հանձնարարականներ հատուկ կրթական կարիք ունեցող երեխաների կրթական գործընթացի կազմակերպման համար** 54

Նախադպրոցական կրթության առկա ձևը հատուկ կրթական կարիք ունեցող երեխաների համար 54

Նախադպրոցական կրթության հեռավար ձևը հատուկ կրթական կարիք ունեցող երեխայի համար 59

Հատուկ մանկավարժի դերը հեռավար կրթական գործընթացի կազմակերպման և իրականացման ժամանակ 63

Աջակցող ծառայությունների տրամադրման անհրաժեշտություն 65

**Հավելվածներ** 66

Հավելված №1 Նախադպրոցական հաստատության մաքրման պրոտոկոլի նմուշ 66

Հավելված №2 Աշխատակիցների համար կազմված նշման թերթիկի նմուշ 68

Հավելված №3 Նախադպրոցական հաստատության կառավարիչների համար կազմված նշման թերթիկի նմուշ 75

Հավելված №4 Ծնողների համար ստեղծված նշման թերթիկի նմուշ 85

Հավելված №5 Երեխայի պատրաստակամությունը հեռավար կրթական գործընթացի նկատմամբ 90

**Օգտագործած գրականություն** 91

# ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ COVID 19-Ի ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

## Քովիդ 19-ի կանխարգելումը և կազմակերպումը

**Սույն գլխում ներկայացված են հանձնարարականներ առողջապահական առումով, որոնք վերաբերում են նախադպրոցական կրթական ծառայության առկա կամ հիբրիդային ձևով իրականացմանը (տե՛ս Գլուխ. «Նախադպրոցական կրթական ծառայությունների տրամադրման ձևերը COVID 19-ի պայմանների նախատեսմամբ) նախադպրոցական հաստատություններում:**

COVID 19-ի կանխարգելման համար յուրաքանչյուր նախադպրոցական հաստատությունից պահանջվում է անցկացնել մի շարք միջոցառումներ, որոնք հիմնված են հանրային առողջության պահպանման խնդիրները կարգավորող համաշխարհային և տեղական հանձնարարականների վրա: Հաշվի առնելով նախադպրոցական հաստատությունների գործառույթը՝ նախապատվությունը պետք է տրվի կանխարգելիչ միջոցառումներին, հետևելիության արդյունավետ մեխանիզմի ստեղծմանը և շփումների կրճատմանը: Սույն Ուղեցույցում ներկայացված հանձնարարականները տրամադրվում են այն դեպքերի համար, երբ կրթական գործընթացը առկա կամ հիբրիդային ձևով է ընթանում:

Կարևոր է, որ նախադպրոցական հաստատությունը գիտակցի պատասխանատվությունը, որ ունի երեխաների և աշխատակիցների նկատմամբ: Յուրաքանչյուր աշխատողի պետք է մանրամասն տեղեկատվություն տրամադրվի COVID 19-ի համավարակի պայմաններում առկա մարտահրավերների, ցանկալի և անցանկալի վարքագծի, ներքին պրոտոկոլների, կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ: Ճիշտ նախակրթարանի պատասխանատվությունն է որոշում որոշակի խմբի կամ նախադպրոցական հաստատության կրթական գործընթացի իրականացման և կառավարման առօրյա ընթացքի պահպանման հարցը, քանի որ անձնակազմի կամ երեխաների COVID 19-ով վարակվելու դեպքում կրթական գործընթացը շարունակելու, կասեցնելու կամ ձևափոխելու մասին որոշումը կայացվում է համաճարակաբանական հետազոտության հիման վրա: Ուսումնասիրվելու են և հաշվի առնվելու նախադպրոցական հաստատության տարածքում շփումները, շփումների ինտենսիվությունը, պաշտպանության միջոցների և առկա հանձնարարականների որակն ու այլ խնդիրներ: Ուստի կարևոր է հաշվի առնել և գործնականում կիրառել այնպիսի գործողություններ, որոնք ապահովում են, որ յուրաքանչյուր խմբի հետ աշխատի միայն միևնույն թիմը, պակաս լինի տարբեր խմբերում դաստիարակների/օգնականների շարժունակությունը: Անձնակազմի վերաբաշխման և ներքին կառավարման փոփոխությունների դեպքում կարևոր է նախատեսել, որ խմբում հատուկ կրթական կարիք ունեցող երեխայի առկայության դեպքում դաստիարակի հետ մեկտեղ անպայման աշխատի դաստիարակի օգնական կամ այլ օգնական մասնագետ:

Կարևոր է, որ նախադպրոցական հաստատությունը սահմանի այն պատասխանատու անձին, ով կհամակարգի հետևյալ հարցերը.

- Այցելուների (այցելու է ցանկացած անձ, որը մուտք է գործում հաստատություն) ջերմաչափում և օրենքով սահմանված փաստաթղթերի վարում համավարակի պայմաններում:

- Անձնական պաշտպանիչ միջոցների մատակարարում, այցելուների կողմից դրանց պատշաճ և ճիշտ օգտագործում:
- Աշխատակիցների կողմից անձնական պաշտպանիչ միջոցների օգտագործում:
- Աշխատակիցների միջև ֆիզիկական / սոցիալական հեռավորության ապահովում (ֆիզիկական և սոցիալական հեռավորության պահպանման պարտավորություն չկա երեխաների միջև կամ կապված երեխաների հետ: Պատշաճ ֆիզիկական/սոցիալական հեռավորության պահպանումը պարտադիր է բոլոր մեծահասակների միջև):
- Մակերեսների ախտահանման պրոտոկոլի պահպանում և մշտադիտարկում:
- Երեխաներին ընդունելու/ճանապարհելու գործընթացի պլանավորում, կառավարում և մշտադիտարկում:
- Բնական կամ արհեստական օդափոխության համակարգի արդյունավետ շահագործում:
- Անձնակազմի նախապատրաստում կարգավորող մարմինների կողմից տրված հանձնարարականները նախատեսելու և կանոնակարգերն իրականացնելու համար:
- Կարգավորող մարմինների կողմից տրված հանձնարարականների և կանոնակարգերի պահպանման ու վերահսկողության ապահովում, մասնավորապես.
  - Ապահովել հավաքման, մաքրման, ախտահանման, սննդի և ջրի սպառման պրոտոկոլների պահպանումն ու վերահսկումը:
  - Կառավարել խոհանոցի սանիտարահիգիենիկ վիճակը և սննդի հետ կապված խնդիրները:
  - COVID 19-ի համավարակի պայմաններում գործող նախադպրոցական հաստատությունների հետ կապված այլ հանձնարարականների և պահանջների իրականացում և մշտադիտարկում:
- Ծնողների իրազեկում COVID 19-ի համավարակի հետ կապված մարտահրավերների և նախադպրոցական հաստատությունում իրականացված կամ/և պլանավորված գործառնական փոփոխությունների մասին:

Վերոնշյալ պարտականությունները կարող են վերաբաշխվել տարբեր պաշտոններում աշխատող անձնակազմի միջև:

## Այց նախադպրոցական հաստատություն

Անհրաժեշտ է հնարավորինս սահմանափակել կողմնակի անձանց մուտքը նախադպրոցական հաստատության տարածք: Երեխաներին ընդունելն ու ճանապարհելը իրականացվում է նախակրթարանի մուտքի մոտ: Գործընթացին ներգրավված է նախադպրոցական հաստատության ներկայացուցիչը, որը շփվում է ծնողի/օրինական ներկայացուցչի հետ և պարտավորություն է ստանձնում երեխային ընդունելու/ճանապարհելու համար:

Ցանկացած նորություն մարտահրավեր է երեխայի համար, նոր միջավայրը, ռեժիմը և կանոնները կարող են նույնիսկ որոշակի սթրես առաջացնել: Այս մարտահրավերին բախվում են ինչպես նախադպրոցական հաստատությունները, այնպես էլ երեխան և նրա ծնողները նախադպրոցական հաստատություն իրենց առաջին այցելությունների ժամանակ: Այդ պատճառով ծնողների համար սովորական պրակտիկա է ներգրավվել նախադպրոցական հաստատությանը ընտելանալու գործընթացի մեջ, ինչը նշանակում է ծնողների ներգրավում ուսումնական գործընթացի մեջ և դաստիարակին օգնություն ցուցաբերելը, երբ նա գտնվում է հաստատությունում երեխաների միջավայրում: COVID 19-ի համավարակի պայմաններում հիշյալ պրակտիկան վարակի կանխարգելման և վերահսկման տեսանկյունից որոշակի ռիսկեր է պարունակում, և ծնողների և/կամ այլ անձանց (բացառությամբ հաստատության անձնակազմի) մուտքը հաստատության շենք սահմանափակ է, երաշխավորվում է նախադպրոցական կրթության ուսումնական տարին սկսելու փուլում առաջին հանդիպումները (օրինակ՝ երեխաներին ընդունելը) տեղի ունենան բաց տարածքում, որի համար

պետք է օգտագործվեն հաստատության բաց տարածքները՝ բակը, ծածկապատշգամբը և այլն: Վերոնշյալ պրակտիկայի իրականացման ընթացքում մեծահասակների միջև պետք է պահպանվի առնվազն 1 մետր ֆիզիկական/սոցիալական հեռավորություն, և մեծահասակները պետք է դիմակ կրեն, անհրաժեշտ է ապահովել գործունեությանը մարդկանց մասնակցության ողջամիտ քանակ: Պետք է նախատեսված լինեն նախադպրոցական հաստատության համար COVID 19-ի համավարակի պատճառով ստեղծված առողջապահության կանոնակարգերը:

Առաքող ընկերությունների ներկայացուցիչները շենք են մտնում միայն դիմակով: Բախիլներ հագնելը պարտադիր պահանջ է, եթե նախադպրոցական հաստատությունը չունի ախտահանիչ արգելագորգիկ:

Բոլոր այցելուներն անցնում են ջերմադիտարկում՝ օգտագործելով անհպում ջերմաչափ: Եթե այցելուի մոտ արձանագրվում է ավելացած ջերմություն (37⁰C կամ ավելի բարձր), նա չի մտնում նախադպրոցական հաստատության շենք: Հարկ է նշել, որ տարբեր պատճառներով կարող է դիտվել ջերմության ժամանակավոր բարձրացում, ուստի խորհուրդ է տրվում այն վերստուգել 15-30 րոպե անց: Այցելուին պետք է տրվի հանգստանալու հնարավորություն, և շենքի մուտքի մոտ պետք է ապահովված լինի համապատասխան տարածք:

Բոլոր անձինք շենք են մտնում անցնելով ախտահանիչ արգելագորգիկով, ջերմադիտարկում և ձեռքի հիգիենա անցնելուց հետո: Բոլոր անձինք, բացառությամբ երեխայի, շենք են մտնում դիմակով:

Եթե այցելուի մոտ ավելացած ջերմություն է արձանագրվում, և նրան թույլ չեն տալիս մուտք գործել նախադպրոցական հաստատություն, նրան պետք է խորհուրդ տրվի չօգտվել հասարակական տրանսպորտից և դիմել ընտանեկան բժշկի կամ տենդի կենտրոն:

Եթե հատուկ հանգամանքների պատճառով կողմնակի անձի շենք մուտք գործելը պարտադիր է, պետք է նա ապահովվի դիմակով, դիմավահանով կամ պաշտպանության այլ միջոցներով՝ այցի նպատակի ու առանձնահատկությունների նախատեսմամբ:

## Վարակների վերահսկման միջոցառումներ

Երաշխավորվում է, որ վարչակազմն աշխատակիցների համար ապահովի տեղեկատվական հանդիպումներ վարակների կանխարգելման հարցերի վերաբերյալ (ինչպիսիք են՝ձեռքի հիգիենան, հագի և փռշտալու հետ կապված վարվելակարգը, դիմակի օգտագործման կանոնները, վարակի փոխանցման ուղիները), ծանոթացնի կանխարգելիչ մեթոդները և առկա կանոնակարգերը: Կարևոր է ապահովել այս տեղեկատվական հանդիպումների շարունակականությունը:

Ցանկալի է տեղեկատվական հանդիպումներ անցկացնել ծնողների, երեխաների և այլ շահագրգիռ/ներգրավված կողմերի հետ:

Նախադպրոցական հաստատություն (շենք) բոլոր այցելուները (ներառյալ երեխաները) մտնում են միայն ջերմաչափման և ձեռքերի հիգիենայի ընթացակարգեր անցնելուց հետո: Ձեռքերի ախտահանման համար նախատեսված հակասեպտիկ միջոցները պետք է լինեն 70%-անոց ալկոհոլային հիմքով, և դրանց դիսպենսերները պետք է տեղադրվեն նախադպրոցական հաստատության շենքի մուտքի, ընդհանուր օգտագործման տարածքների մոտ (մեկուսանալու համար նախատեսված սենյակ, ճաշասենյակ և այլն) հասանելի լինեն բոլորի համար, և պետք է կից տրված լինի ձեռքերի մշակման հրահանգ:

Ընդունարանի տարածքում և անձնակազմի հավաքման տեղերում պետք է տեղադրված լինեն տեղեկատվական պաստառներ COVID 19-ի հետ կապված կանխարգելիչ միջոցառումների մասին,

սանհանգույցներում՝ ձեռքերը լվանալու և հակամանրէային միջոցների օգտագործման հրահանգ: Շենքի մուտքում առկա ախտահանիչ արգելագորգիկի մոտ պետք է տեղադրված լինի դրա օգտագործման հրահանգ: Պաստառները պետք է լինեն հնարավորինս ըմբռնելի և մատչելի բոլոր անձանց, այդ թվում՝ երեխաների համար:

Պետք է նշել, որ մանրէազերծող լուծույթով ձեռքերի մշակումը չի հանդիսանում օճառով ձեռքերը լվանալու այլընտրանք: Ձեռքերի մանրէազերծող միջոցներն օգտագործվում են այն դեպքում, երբ որոշակի պատճառներով անհնար է ձեռքերը լվանալ: Հետևաբար, լվացարանակոնքերը/սանհանգույցները և հակամանրէային միջոցների դիսպենսերները պետք է ողջամտորեն բաշխվեն շենքի տարածքներում:

Ձեռքերը լվանալու համար պետք է ապահովված լինեն՝ լվացարանակոնք, հոսող ջրի շարունակական մատակարարում, հեղուկ օճառ և մեկանգամյա անձեռոցիկներ: Անցանկալի է օգտագործել ձեռքի էլեկտրաչորացման սարքեր և չի թույլատրվում օգտագործել բազմանգամյա սրբիչներ: Լվացարանների մոտ պետք է փակցված լինի պաստառ. «Ձեռքերի լվացման քայլեր» (ցուցադրական նյութ):

Սանհագույցների թաց կարգով մշակման և մաքրման համար նախադպրոցական հաստատությունը պետք է կազմի պրոտոկոլ, որում նկարագրված կլինեն մաքրման պարբերականությունը, օգտագործված սանիտարահիգիենիկ միջոցների, լվացարանների, զուգարանների և այլ մակերեսների մշակման կանոնները: Կարևոր է, որ բոլոր մակերեսները տեսանելի աղտոտման առկայության դեպքում անմիջապես մաքրվեն, իսկ պարբերական մաքրումը երաշխավորվում է խմբերը փոխելու կամ դասամիջոցի ժամանակ (տե՛ս՝ Հավելված №1. Նախադպրոցական հաստատությունը մաքրելու պրոտոկոլի նմուշ):

Նախադպրոցական հաստատություններում չպետք է լինեն այնպիսի խաղալիքներ, որոնք անհնար է թաց մշակման ենթարկել: Կրթական ռեսուրսների (խաղալիքների և այլնի) խնամքն իրականացվում է Վրաստանի գրավյալ տարածքներից տեղահանված անձանց, աշխատանքի, առողջապահության և սոցապահովման նախարարության կանոնակարգերով սահմանված հանձնարարականներին համապատասխան:

Մաքրելու համար հատկացված պարագաները (օրինակ՝ կտոր, զուգարանի մաքրման խոզանակ և այլն) պետք է լվացվեն և չորացվեն: Չի թույլատրվում դրանք փակ տարածքում տեղադրել թաց վիճակում:

Հավաքարարն աշխատանքային գործընթացում օգտագործում է անհատական պաշտպանության հետևյալ միջոցները.

- բազմակի օգտագործման ձեռնոցներ,
- դիմավահան,
- անջրանցիկ մեկանգամյա խալաթ,
- բժշկական դիմակ,
- փակ կոշիկներ:

## Երեխաների և անձնակազմի մեկուսացման անհրաժեշտություն

Երեխաներն ու անձնակազմն օրվա ընթացքում կարող են զգալ ջերմության բարձրացում (37°C և ավելի բարձր), որի ընթացքում անհրաժեշտ է նրանց մեկուսացնել հատուկ առանձնացված սենյակում: Երեխաների մեկուսացման ժամանակ անպայման պետք է հաշվի առնվեն հոգեբանական, սոցիալական կարիքները (տե՛ս՝ Գլուխ. «COVID 19-ի համավարակի դեպքում

նախադպրոցական կրթական ծառայություններ տրամադրելու գործընթացում երեխաների հուզական բարեկեցությունը»):

Մեկուսացման սենյակն անպայման պետք է ունենա բնական կամ արհեստական օդափոխության համակարգ: Եթե սենյակում մեկից ավելի երեխա կա, ապա պետք է հնարավոր լինի նրանց միջև պահպանել 1 մետրանոց ֆիզիկական հեռավորություն, և եթե նկատվում են այնպիսի ախտանշաններ, ինչպիսիք են հազը և փռշտոցը, կարող են օգտագործվել տարանջատող պատնեշներ։

Մեկուսացման սենյակում պետք է լինի. աթոռ/բազկաթոռ/բազմոց, լվացարան, մեկանգամյա անձեռոցիկներ, հեղուկ օճառ և ձեռքերը մանրէազերծող միջոցներ:

Բարձր ջերմության արձանագրման պես, հաստատության ներկայացուցիչը պետք է կապվի ծնողի հետ, տեղեկություններ տրամադրի երեխայի առողջական վիճակի մասին, խնդրի նրան տանել երեխային նախադպրոցական հաստատությունից և խորհուրդներ տա հետագա քայլերի վերաբերյալ, մասնավորապես.

- Ծնողը պետք է դիմի ընտանեկան բժշկի /տենդի կենտրոն։
- Ծնողը երեխայի փոխադրման ընթացքում չպետք է օգտվի հասարակական տրանսպորտից:

Երեխային մեկուսացման սենյակից հանելիս՝ հաստատությունը պետք է գործի ընդհանուր կանոնակարգերով և ցանկալի է, որ ծնողին կամ նրա օրինական ներկայացուցչին երեխային փոխանցեն առանց հաստատության շենք մուտք գործելու:

Շտապ օգնության բրիգադ կարելի է կանչել միայն երեխայի բժշկական կարիքների (բժշկական ցուցման) պատճառով։ Շենքում նրանց տեղաշարժին խոչընդոտներ չպետք է լինեն: Կարևոր է, որ շտապ օգնություն կանչելու մասին տեղեկացվի ծնողը կամ նրա օրինական ներկայացուցիչը:

Չի թույլատրվում երեխային / երեխաներին մենակ թողնել մեկուսացման սենյակում: Երեխան պետք է գտնվի պատասխանատու անձի հսկողության ներքո, ինչը պետք է ապահովի նախադպրոցական հաստատությունը։ Պատասխանատու անձը (գերադասելի է սա լինի անձ, որի հետ երեխան իրեն հարմարավետ է զգում տվյալ իրավիճակում) պետք է հագեցած լինի հետևյալ անհատական պաշտպանության միջոցներով.

- դիմակ,
- պաշտպանիչ դիմավահան,
- մեկանգամյա անջրանցիկ խալաթ։

Կարևոր է հիշել, որ երեխաների մոտ ավելացած ջերմություն կարող է արձանագրվել նաև ֆիզիկական ակտիվության և հուզական ֆոնի պատճառով, ուստի ցանկալի է նրանց 15-30 րոպե հանգստանալու հնարավորություն տալ, ապա նորից չափել ջերմությունը: Եթե կրկնակի չափումից հետո երեխայի մոտ չարձանագրվի 37⁰C կամ ավելի բարձր ջերմություն, նա կարող է վերադառնալ խումբ: Նույն կերպ ենք գործում, եթե ջերմություն է գրանցվում նախակրթարանի աշխատակիցների մոտ:

Երեխային մեկուսացման սենյակ տեղափոխելու դեպքում կարևոր է նկատի ունենալ, որ խումբը չպետք է մնա առանց մեծահասակի հսկողության: Երեխային խմբից դուրսբերումը պետք է տեղի ունենա հանգիստ միջավայրում, այնպես, որ դա որևէ երեխայի համար սթրեսային չլինի, պետք է պահպանել ուսումնական գործընթացը:

Աշխատակազմից որևէ մեկի մոտ բարձր ջերմության արձանագրման դեպքում (37⁰C կամ ավելի) աշխատակիցը պարտավոր է տուն գնալ (արդյոք նա մեկուսացման սենյակ չի՞ տեղափոխվում, եթե

տեղափոխվում է մեկուսացման սենյակ, այնտեղ չափում է ջերմությունը, իսկ եթե ունի ջերմություն, ապա գնում է տուն):

Նախադպրոցական հաստատությունը պարտավոր է պահպանել բարձր ջերմություն (37⁰C կամ ավելի բարձր) ունեցող երեխայի և անձնակազմի ինքնության և նրա առողջական վիճակի մասին տեղեկատվության գաղտնիությունը: Սա նշանակում է, որ նախադպրոցական հաստատությունը չպետք է տարածի տեղեկատվությունը այլ անձանց, այդ թվում, երեխաների/ծնողների շրջանում, երեխայի կամ անձնակազմի առողջական վիճակի մասին:

Նախադպրոցական հաստատությունը պարտավոր չէ այլ երեխաների ծնողներին/օրինական ներկայացուցիչներին տեղեկատվություն տրամադրել խմբում առկա ենթադրյալ դեպքի մասին:

Նախադպրոցական հաստատությունը պարտավոր է նախապես պահպանել գաղտնիությունը և պրոտոկոլների այլ կետերի վերաբերյալ, ապահովել երեխայի ծնողների կամ օրինական ներկայացուցչի իրազեկումը:

Կրթական գործընթացը շարունակվում է այնքան ժամանակ, մինչև շնչառական համակարգի հիվանդության ախտանիշներով երեխայի կամ անձնակազմի COVID 19-ի ախտորոշումը լաբորատոր եղանակով հաստատվի, իսկ դրանից հետո կրթական գործընթացը շարունակելու մասին որոշումը կայացվում է համաճարակաբանական խմբի եզրակացության և հանձնարարականի հիման վրա:

Մեկուսացման սենյակում կարևոր է ստեղծել երեխայակենտրոն, պաշտպանված և անվտանգ, առանց սթրեսի ֆիզիկական և սոցիալական միջավայր (տե՛ս Գլուխ. «COVID 19-ի համավարակի պայմաններում նախադպրոցական կրթական ծառայություններ տրամադրելու գործընթացում երեխաների հուզական բարեկեցությունը»):

Մեկուսացման սենյակը պետք է մշակվի խոնավ եղանակով և ախտահանվի այն ազատվելուն պես:

### *Ընդհանուր հանձնարարականներ.*

- Նախադպրոցական հաստատությունում աշխատակիցները պետք է պահպանեն 1 մետրանոց հեռավորություն, այդ թվում, ընդհանուր օգտագործման այնպիսի տարածքներում, ինչպիսիք են ճաշասենյակը կամ հանգստանալու սենյակը:
- Ընդհանուր օգտագործման տարածքներում (բակ, նախասրահ, ճաշասենյակ և այլն) գործողությունները պետք է իրականացվեն ըստ նախապես սահմանված ժամանակացույցի (աղյուսակի), որպեսզի մեկ տարածքում երեխաների և անձնակազմի թիվը առավելագույնս նվազագույնի հասցվի, այնպես, որ պահպանվի մեծահասակների միջև մեկ մետրանոց ֆիզիկական հեռավորության սկզբունքը:

# ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՄԻՏՎԱԾ ՄՈՏԵՑՈՒՄԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

## Երեխայի իրավունքների պաշտպանությունը COVID 19-ի համավարակի պայմաններում

**Սույն գլուխը վերլուծում է երեխայի իրավունքները, նրա հիմնական սկզբունքները, որոնց նախատեսումը կարևոր է յուրաքանչյուրի համար, ով աշխատում է և շփվում երեխաների հետ: Այս սկզբունքները կարևոր են ամենօրյա պրակտիկայում: Այն նաև վերլուծում է COVID 19-ի համավարակի ժամանակ նախադպրոցական հաստատությունների և, ընդհանուր առմամբ, մեծահասակների դերը երեխաների իրավունքները պաշտպանելու գործում:**

Երեխայի իրավունքների պաշտպանությունը նոր մարտահրավերների առջև հայտնվեց COVID 19-ի համավարակի պայմաններում, - դա անհրաժեշտ դարձրեց լրացուցիչ միջոցառումների անցկացում երեխաների առողջության և անձնական տվյալների պաշտպանության, կիբերանվտանգության ապահովման և կրթության իրավունքի իրականացման ուղղությամբ: Այդ պատճառով կարևոր է, որ նախադպրոցական կրթության տրամադրումը COVID 19-ի համավարակի պայմաններում հիմնվի երեխայի իրավունքների պաշտպանության հեռանկարի վրա:

Երեխայի իրավունքները բաժանված են չորս հիմնական կարգերի՝ կյանք, զարգացում, պաշտպանություն և մասնակցություն: Կյանքի իրավունքը նշանակում է, որ երեխային պետք է տրամադրվի համարժեք որակյալ բժշկական ծառայություն, ջուր և հիգիենայի պահպանության միջոցներ: Պաշտպանությունը նշանակում է պաշտպանել բոլոր երեխաներին խտրականության և շահագործման բոլոր ձևերից, ներառյալ երեխաների անվտանգության պաշտպանությունը ցանկացած միջավայրում, օրինակ, ինչպիսին է նախադպրոցական հաստատությունը:

Նախադպրոցական հաստատության վարչությունը պարտավոր է COVID 19-ի համավարակի պայմաններում առավելագույնս օգտագործել իր ռեսուրսները՝ երեխաների անվտանգությունը պաշտպանելու համար: Երեխաները վաղ տարիքից, ներառյալ նախադպրոցական տարիքի երեխաները, իրավունք ունեն տեղեկատվություն ստանալու իրենց հասկանալի լեզվով այն իրադարձությունների մասին, որոնք ազդում են իրենց վրա և վերաբերում են իրենց: Միևնույն ժամանակ, արտահայտել իրենց կարծիքը, որը պետք է հաշվի առնվի չափահասների կողմից որոշումներ կայացնելու ժամանակ: Օրինակ, եթե երեխաների մոտ հարց առաջանա, թե ինչու պետք է հետևեն նոր կանոններին, ինչ է COVID-19-ը, նրանք պետք է կարողանան այդ հարցերին պատասխաններ ստանալ իրենց տարիքին համապատասխան եղանակով: Ինչ վերաբերում է չորրորդ կարգին՝ երեխայի զարգացման իրավունքին, այն, ըստ էության, տարածվում է բոլոր մյուս իրավունքների վրա և ներառում է երեխային որակյալ նախադպրոցական կրթության տրամադրումը, նրա անհատական կարիքների նախատեսումը, խաղի և հանգստի հնարավորությունը:

## Վաղ կրթության նշանակությունը

Վաղ մանկությունը խիստ կարևոր ժամանակահատված է երեխայի զարգացման մեջ: Այս ժամանակ է, որ ձևավորվում են մարմինը և նյարդային համակարգը, ավելանում է շարժունակությունը, զարգանում են հաղորդակցման հմտություններն ու մտավոր ունակությունները: Փոքրիկների մոտ ձևավորվում են ուժեղ հուզական կապվածություններ ծնողների և խնամողների նկատմամբ, որոնցից նրանք ստանում են սնունդ, աջակցություն և պաշտպանություն: Այս կերպ նրանց մոտ ձևավորվում է անհատականությունը, և մեծանում են նրանց հնարավորությունները: Երեխաները կարևոր հարաբերություններ են ձևավորում իրենց տարիքի երեխաների և մեծահասակների հետ: Նման կապերով նրանք սովորում են բանակցել և կիսվել կարծիքներով, խնդիրներ լուծել, համաձայնություններ ձեռք բերել, ձևավորվում է պատասխանատվության զգացում ուրիշների հանդեպ:

Երեխայի զարգացումը կախված է տարբեր գործոններից, այդ թվում, նրան մատուցվող վաղ կրթության որակից և ձևից: Նախադպրոցական կրթությունը պետք է հնարավորություն ստեղծի երեխայի զարգացման համար և հաշվի առնի բոլոր երեխաների անհատական կարիքները՝ անկախ երեխայի ֆիզիկական, ճանաչողական, զգայական, սոցիալական, հուզական, լեզվական, էթնիկական, ռասայական, կրոնական, սեռական և այլ հատկանիշներից:

Հետևաբար, առանձնահատուկ կարևորություն ունի վաղ տարիքում երեխային մատուցված շարունակական և որակյալ նախադպրոցական կրթությունը: Չնայած հանրային առողջության ճգնաժամին՝ երեխայի այս հիմնարար իրավունքը չպետք է անտեսվի, և բոլոր համապատասխան գերատեսչությունները (ինչպես կենտրոնական, այնպես էլ համայնքային մակարդակում) պետք է ստեղծեն անվտանգ և մանկակենտրոն միջավայր՝ նախադպրոցական կրթության շարունակականությունը պահպանելու համար՝ տրամադրելով առկա, հիբրիդային կամ հեռավար ծառայություններ:

## Նախադպրոցական հաստատության դերը երեխաների իրավունքների պաշտպանության ուղղությամբ

Երեխայի իրավունքները պաշտպանելը նշանակում է ընկալել այն փաստը, որ երեխան բոլոր իրադարձությունների կենտրոնում է: Նախադպրոցական հաստատությունների այս պարտականու-թյուններն էլ ավելի հրատապ են COVID-19-ի համավարակի պայմաններում, երբ լրացուցիչ մարտահրավերներ են առաջացել երեխաներին նախադպրոցական կրթություն տրամադրելու և այս գործընթացում նրանց առողջության իրավունքը պաշտպանելու ուղղությամբ:

Կարևոր է, որ նախադպրոցական հաստատություններն իրենց ռեսուրսներն առավելագույնս ուղղորդեն երեխաներին որակյալ նախադպրոցական կրթություն տրամադրելու ուղղությամբ և հանրային առողջության ճգնաժամի պայմաններում անվտանգ միջավայր ստեղծեն, որպեսզի հնարավորինս կանխարգելվի COVID 19-ի տարածումը: Օրինակ՝ նկատի ունենալ հանրային առողջության հարցերը կարգավորող բոլոր հանձնարարականները և երեխաների համար ստեղծել անվտանգ ֆիզիկական և սոցիալական միջավայր:

Եթե համավարակի պատճառով հեռավար ծառայությունների մատուցման անհրաժեշտություն առաջանա, նախադպրոցական հաստատությունները այս ծառայությունը պետք է որակյալ ապահովեն և փորձեն, որ հեռավար ծառայությունը հնարավորինս շատ երեխաների համար լինի հասանելի: Տվյալ գործընթացում հատկապես կարևոր է տեղական մունիցիպալիտետների աջակցությունն ու ներգրավվածությունը:

Հանրային առողջության ճգնաժամի պայմաններում երեխայի զարգացման իրավունքը, որը, ի թիվս այլ իրավունքների, ենթադրում է որակյալ և անհատական կարիքներին հարմարեցված նախադպրոցական կրթության ստացում, բախվել է նոր դժվարությունների: Ուսումնական գործընթացի հեռավար ձևը առաջացրել է տանը երեխաների համար համապատասխան միջավայր ստեղծելու անհրաժեշտություն, որպեսզի հեռավար նախադպրոցական կրթություն ստանալու համար ստեղծվի երեխայակենտրոն միջավայր, օրվա ընթացքում ապահովվի առօրյա կյանքի, քնի, ուտելու, պարապելու և բակում ակտիվությունների հետևողական ժամանակացույց:

Կանոնավոր և հետևողական ժամանակացույցը կօգնի երեխաներին բարելավել քունը: Պատշաճ կերպով կառուցքավորումը կապահովի կայունություն, բարելավվում է երեխաների վարքը և, ի վերջո, նրանց առողջությունը:

Նախապես սահմանված և կայուն միջավայրը կարևոր նախապայման է երեխաներին հեռավար նախադպրոցական կրթություն ստանալու գործընթացի մեջ արդյունավետ ներգրավման համար: Առաջարկվում է, որ առցանց միացումներն իրականացվեն մեկ որոշակի նախապես սահմանված տեղից, որտեղ երեխային հնարավորություն կտրվի հանգիստ, առանց արտաքին անհարկի միջամտությունների մասնակցել առցանց գործողություններին:

Նախադպրոցական հաստատության պարտավորությունն է երեխաների համար ստեղծել ցանկալի միջավայր խաղալու, հանգստանալու և զարգանալու համար: Դրա համար անհրաժեշտ է, որ նախակրթարանի միջավայրը լինի սթրեսից առավելագույնս ազատ, ֆիզիկական միջավայրն այնպես կազմակերպվի, որ երեխաների համար լրացուցիչ խոչընդոտներ չստեղծվեն նախադպրոցական հաստատության շենքում ազատ տեղաշարժվելու մեջ: Երեխաների հետ շփումը պետք է նախատեսի նրանց զարգացման առանձնահատկություններն ու կարիքները, ինչը նշանակում է ընտելանալ նոր միջավայրին՝ ավելի քիչ սթրեսով: Չնայած COVID 19-ի համավարակի պայմաններում նախադպրոցական հաստատությունը պարտավոր է կանխարգելել վիրուսի տարածումը և հնարավորինս սահմանափակել այցելուների մուտքը հաստատություններ՝ երեխայի հուզական կարիքներից ելնելով, անհրաժեշտ է ծնողներին թույլատրել կանոնների պահպանմամբ մուտք գործել հաստատության տարածք: Սա կօգնի երեխաներին ընտելանալ նոր միջավայրին:

Երեխայակենտրոն միջավայր ստեղծելը հատկապես կարևոր է երեխային մեկուսացման սենյակ տեղափոխելու դեպքում: Այս ժամանակ անհրաժեշտ է, որ ամբողջ գործընթացը հիմնված լինի երեխայի համար սթրեսը նվազագույնի հասցնելու վրա: Դրա համար կարևոր է ինչպես մեկուսացման սենյակի ֆիզիկական միջավայրը, այնպես էլ երեխայի հետ շփումը, նրա համար պաշտպանված և անվտանգ միջավայրի ստեղծումը:

Նախադպրոցական կրթություն տրամադրելիս անհրաժեշտ է հաշվի առնել երեխաների անհատական կարիքները, և միջավայրը լինի հնարավորինս ներառական: Այս պահանջը վերաբերում է ինչպես առկա, այնպես էլ հեռավար կրթական գործընթացին: Օրինակ՝ սահմանափակ հնարավորություն ունեցող երեխաների դեպքում պետք է տրամադրվեն լրացուցիչ մարդկային և ֆինանսական ռեսուրսներ, որպեսզի նրանք կարողանան նախադպրոցական կրթություն ստանալ այլ երեխաների հետ հավասար պայմաններում: Կարևոր է հիշել, որ սահմանափակ հնարավորություն ունեցող երեխաների համար ոչ միայն կրթություն ստանալու մերժումն է խտրականություն, այլ նաև այն, որ մենք պատշաճ պայմաններ չենք ստեղծում նրանց կրթություն ստանալու համար:

## Առողջության իրավունքի պաշտպանություն

Երեխային վերաբերող ցանկացած գործողություն իրականացնելիս՝ հիմնական ուշադրությունը կենտրոնանում է երեխայի լավագույն շահերի պաշտպանության վրա: Չնայած նրան, որ երեխաներն ընդհանուր առմամբ ունեն ընդհանուր ունիվերսալ կարիքներ, այդ կարիքների արտահայտումը կախված է անհատական, ֆիզիկական, սոցիալական և մշակութային ասպեկտներից, այդ թվում՝ նրանց զարգացման հնարավորություններից:

Երեխայի լավագույն շահերի մասին խոսելիս պետք է նկատի ունենալ ինչպես անհատական երեխայի լավագույն շահը, այնպես էլ երեխաների՝ որպես խմբի: Երեխայի առողջության իրավունքի պաշտպանությունը երեխայի լավագույն շահերը գնահատելու կենտրոնական խնդիրներից մեկն է: Առողջության իրավունքի մեջ ենթադրվում է ինչպես երեխայի ֆիզիկական, այնպես էլ հոգեկան առողջությունը: Առողջության իրավունքի պաշտպանության ժամանակ պետք է նախատեսվեն այն ռիսկերն ու կողմնակի ազդեցությունները, որոնք կարող են վնասել ինչպես մեկ կոնկրետ երեխայի առողջությունը, այնպես էլ երեխաների խմբի առողջությունը:

Խորհուրդ է տրվում, որ COVID-19-ի համավարակի պայմաններում նախադպրոցական հաստատության ցանկացած որոշում հիմնվի հենց երեխայի լավագույն շահերի պաշտպանության, նրա առողջության պահպանման կարիքների նախատեսման և վիրուսի տարածումը կանխելու վրա:

Հանրային առողջության ճգնաժամի պայմաններում կրթական գործընթացը հեռավար կարգով տրամադրելու անհրաժեշտության հետ մեկտեղ նոր մարտահրավերներ են առաջացել երեխաների առողջության իրավունքը պաշտպանելու ուղղությամբ: Մասնավորապես, երեխաների և դեռահասների զարգացման և նրանց կրթության իրավունքի պաշտպանության ուղղությամբ էլ ավելի արդիական է դարձել համակարգչային և հեռուստակրթական ծրագրերի օգտագործումը: Ճիշտ է, տեղեկատվության փոխանակման նշված միջոցները օգնում են երեխային զարգացնել տարբեր հմտություններ ու կարողություններ, բայց համակարգչի և հեռուստացույցի էկրանի առջև շատ ժամանակ անցկացնելն ունի իր բացասական ազդեցությունը երեխայի հուզական զարգացման, ֆիզիկական և մտավոր առողջության առումով (օրինակ՝ տեսողության խնդիրներ, վարքային խանգարումներ, անքնություն, քաշի ավելացում և այլն): Ահա, թե ինչու է պետք առանձնահատուկ ուշադրություն դարձնել երեխաների կողմից համակարգիչների օգտագործման և հեռուստացույցի էկրանի առջև անցկացրած ժամանակի կարգավորմանը:

Հետևաբար, վաղ տարիքի երեխայի ֆիզիկական և մտավոր առողջությունը պաշտպանելու նպատակով երեխաների կողմից օր ու գիշերվա ընթացքում էկրանի մոտ անցկացրած ժամանակն այսպիսին է.
- Մինչև 2 տարեկանը՝ 0 րոպե:
- 3-7 տարեկանը՝ 30 րոպե:

## Անձնական տվյալների պաշտպանությունը

Յուրաքանչյուր ոք ունի անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունք, այդ թվում նաև երեխաները: Նախադպրոցական հաստատությունն այն վայրն է, որտեղ երեխան անցկացնում է օրվա մեծ մասը, և նրա մասին շատ տվյալներ են պահվում: Նախադպրոցական հաստատությունը պարտավոր է պաշտպանել երեխայի անձնական տվյալները և գործել՝ ելնելով երեխայի լավագույն շահերից, ինչը բոլոր դեպքերում նշանակում է երեխայի շահերը այլ անձանց / կազմակերպությունների շահերից վեր դասել: Միևնույն ժամանակ, երեխայի լավագույն շահերի գնահատումը պետք է տեղի ունենա բոլոր կոնկրետ դեպքերում անհատապես՝ հաշվի առնելով այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք

են երեխայի հայացքներն ու նկրտումները, տարիքը, անձնական պատմությունը, անվտանգության շահերը, ընտանեկան միջավայրը, բարեկեցությունը, հասակակիցների և մեծահասակների հետ հարաբերությունները և այլն:

COVID 19-ի համավարակի պայմաններում երեխաներին նախադպրոցական կրթություն տրամադրելու նպատակով օրակարգ է բերվել առցանց հարթակների օգտագործման անհրաժեշտությունը, ինչը լրացուցիչ մարտահրավերներ է առաջացրել՝ կապված երեխաների անհատական տեղեկությունների և անվտանգության պաշտպանության հետ:

Երեխան, որպես տվյալների սուբյեկտ, իրավունք ունի, որ իր անձնական տվյալները մշակվեն օրինական, արդար և առանց արժանապատվության ոտնահարման: Նա իրավունք ունի իմանալու, թե ով և ինչ տեսակի տվյալներ է մշակում իր մասին, ինչ նպատակով և ինչ հիմքով:

## Ի՞նչ են անձնական տվյալները:

Անձնական տվյալները ցանկացած տեսակի տեղեկատվությունն է, որը կարող է օգտագործվել երեխային նույնականացնելու համար: Օրինակ՝ անունը, ազգանունը, անձնական համարը, լուսանկարը և տեսագրությունը, սոցիալական ցանցի հաշիվը, անձնական նամակագրությունը, որ դպրոցում և դասարանում է սովորում, տեղեկություններ նրա նախասիրությունների, առողջական վիճակի և այլնի մասին:

## Ի՞նչ են առանձնահատուկ կատեգորիայի անձնական տվյալները:

Գոյություն ունեն նաև առանձնահատուկ կատեգորիայի տվյալներ: Սա նշանակում է, որ դրանց պաշտպանության համար սահմանվում է բացառապես բարձր չափորոշիչ, քանի որ այդպիսի տվյալների բացահայտման դեպքում երեխային հասցված վնասի չափն ավելի մեծ է: Այս կատեգորիան ներառում է տեղեկություններ՝ կապված երեխայի ռասայական կամ էթնիկական ծագման, առողջական վիճակի, վարչական կալանքի, խափանման միջոց սահմանելու հետ, ընթացակարգային համաձայնագրի կնքման, հանցագործության օբյեկտից մեկուսացնելու, հանցագործության զոհ ճանաչելու, տուժած ճանաչելու հետ և այլն:

## Ինչպե՞ս պետք է պաշտպանենք երեխայի առողջական վիճակի մասին տեղեկությունները:

Առողջությունը մեզանից յուրաքանչյուրի համար առանձնահատուկ արժեք է, և դրա վերաբերյալ տեղեկատվությունը պատկանում է տվյալների հատուկ կատեգորիայի: Սրա պատճառն այն է, որ մեր առողջության վերաբերյալ տվյալները (այդ թվում, ախտորոշումը, բժշկական պատմությունը, դեղատոմսը կամ բուժման պլանը) կարող են պարունակել բավականին ծավալուն և զգայուն տեղեկություններ մեր անձնական կյանքի մասին, իսկ դրանց բացահայտմամբ կարող է լուրջ վնաս հասցվել մեզ: Միայն համապատասխան համաձայնությամբ կարող է այն փոխանցվել երրորդ կողմի, չնայած դա պետք է արտահայտվի գրավոր:

Անձնական տվյալների մշակումն էլ ավելի խնդրահարույց է դառնում հանրային առողջության ճգնաժամի պայմաններում: Մենք բոլորս իրավունք ունենք տեղեկություններ ստանալու վիրուսի տարածման վտանգների և այլ կանխարգելիչ միջոցառումների մասին: Սակայն, ոչ պակաս կարևոր է յուրաքանչյուր անձի իրավունքների, այդ թվում անձնական տվյալների պաշտպանությունը: Ահա թե

ինչու, եթե նախադպրոցական հաստատությունում երեխայի ջերմությունը բարձրանա (37⁰ և ավելի), անհրաժեշտ է պահպանել գաղտնիությունը և չհրապարակել այդ տեղեկատվությունը:

Կարևոր է հիշել, որ պարտադիր չէ երեխայի անունն ու ազգանունը նշելը, բավական է այնպիսի տեղեկատվության տարածումը, որը տալիս է անձի նույնականացման հնարավորություն:

### *Ինչպե՞ս պաշտպանել երեխայի անձնական տվյալները կրթական գործընթացը հեռավար վարելիս:*

COVID 19-ի համավարակի ընթացքում հրատապ դարձավ կրթական գործընթացի հեռավար ձևով ապահովումը: Առցանց կրթական գործընթացներին զուգահեռ սոցիալական ցանցերում տարածվում էին առցանց հանդիպումներ արտացոլող լուսանկարչական նյութեր և տեսանյութեր:

Առցանց հանդիպումներ արտացոլող նյութերը (լուսանկարներ, տեսանյութեր) անձի անձնական տվյալներն են, ինչը պետք է հաշվի առնել դրանք հանրայնացնելիս, քանի որ երեխաների տվյալները համացանցում հասանելի ձևով հրապարակելը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ նրա վրա (դառնա բռնության կամ այլ վատ վերաբերմունքի օբյեկտ):

Հետևաբար, կրթական հաստատությունները, այդ հաստատություններում աշխատող անձինք, ինչպես նաև անչափահասների ծնողներն ու ընտանիքի անդամները պետք է ավելի մեծ պատասխանատվությամբ մոտենան երեխաների տվյալների հանրայնացմանը և գործեն երեխայի լավագույն շահերի նախատեսմամբ:

### *Ի՞նչ պարտականություններ ունի նախադպրոցական հաստատությունը երեխաների անձնական տվյալների պաշտպանության ուղղությամբ:*

- Երեխայի անձնական տվյալների վերաբերյալ տեղեկությունները չբացահայտել այլ անձանց:
- Ուղղել ոչ ճիշտ տվյալները և ոչնչացնել անհիմն հավաքած տվյալները: Օրինակ՝ սոցիալական ցանցում լուսանկարներ և տեսանյութեր:
- Ծնողի պահանջով ջնջել երեխայի անձնական տվյալներ պարունակող տեղեկատվությունը: Օրինակ՝ եթե ծնողը թույլ է տվել նախադպրոցական հաստատության կայքում/սոցիալական ցանցում տեղադրել իր երեխայի լուսանկարը, և այնուհետև մտափոխվել է, նա իրավունք ունի նշված լուսանկարը ջնջել տալ, առանց որևէ բացատրություն պահանջելու:
- Պաշտպանել երեխայի անձնական տվյալների անվտանգությունը:
- Վերահսկել այցելուների մուտքն ու ելքը շենք, ինչպես նաև գրանցել նրանց անունը և ազգանունը, նույնականացման փաստաթղթի համարը և տեսակը, հասցեն, մուտքի և ելքի ամսաթվերը և ժամանակը, ինչպես նաև շենք մուտք գործելու և դուրս գալու պատճառները:

## Երեխայի իրազեկվածությունը և ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացի մեջ

Երեխաների կարծիքների ունկնդրումը և որոշումների կայացման գործընթացի մեջ նրանց ներգրավվածությունը այն թեմաների վերաբերյալ, որոնք նրանց են վերաբերում, երեխաների իրավունքների կարևորագույն սկզբունքներից մեկն է: Այս սկզբունքը պետք է նկատի առնվի ցանկացած իրավունքի իրականացման ընթացքում, հատկապես առողջության և կրթության

իրավունքների պաշտպանության գործում: Երեխայի կարծիքը լսելը միաժամանակ նախատեսում է նրան տեղեկատվության տրամադրում նրա համար հասկանալի եղանակով:

## Ինչպե՞ս աջակցել երեխային ՝ արտահայտելու իր կարծիքը:

- Մենք միշտ պետք է ցույց տանք նրան, որ մեզ հետաքրքրում է նրա կարծիքը և ուշադիր լսենք:
- Նրա համար ստեղծենք այնպիսի միջավայր, որտեղ իրեն հարմարավետ է զգում կամ սիրում է լինել:
- Նախքան երեխային կխնդրենք արտահայտել իր կարծիքը, պետք է բացատրենք, թե ինչու ենք հարցնում այս տեղեկատվությունը և ինչի համար են դա մեզ անհրաժեշտ:
- Խոսելիս անընդհատ պետք է զգացնել տանք, որ հարգում ենք նրան:

> **Օրինակ՝**
>
> «Գիտեմ, որ դուրդ չի գալիս այն փաստը, որ չես կարող հյուրընկալվել ընկերներիդ, սակայն շատ ավելի զվարճալի կլինի, երբ կրկին կհանդիպեք»:
>
> «Որոշ մարդիկ հիվանդանում են: Մենք բոլորս հիմա պետք է տանը մնանք, որպեսզի առողջ լինենք»:
>
> «Որոշ մարդիկ կարող են դիմակով զվարճալի տեսք ունենալ, բայց դա պաշտպանում է ինձ ու քեզ»:
>
> «Շատ բժիշկներ և բուժքույրեր ամեն օր շատ քրտնաջան աշխատում են, որ բոլորս պաշտպանված լինենք»:

Երեխայի իրազեկման և նրա կարծիքը լսելու իրավունքը COVID 19-ի համավարակի պայմաններում լրացուցիչ նշանակություն է ստացել: Օրինակ, նրանք պետք է տեղեկատվություն ունենան այն մասին, թե ինչպիսի բուժում է իրականացվում, ինչ ազդեցություն և հետևանքներ կունենա այն:

Հնարավոր է որոշ երեխաներ, օրինակ՝ հատուկ կարիք և/կամ հնարավորություն ունեցողը, կարող է դժվարանալ բանավոր հաղորդակցվելիս, այսինքն՝ բառերով իր տեսակետներն արտահայտելու առումով, և նախընտրել այլ ՝ այլընտրանքային ձևեր: Օրինակ՝ խաղ, մարմնի շարժում, նկարչություն և ծեփակերպում:

Կարևոր է երեխաների հարցերին անկեղծ պատասխանել, բայց դրանք պետք է տրամադրվեն պատշաճ չափաբաժնով և մանրամասներով: Չափից շատ կամ վախեցնող տեղեկատվությունը կարող է անհարկի վախ կամ անհանգստություն առաջացնել: Եթե նրանք վիրուսի մասին հարցեր չեն տալիս, գուցե ավելի լավ է չսկսեք խոսել այդ թեմայի շուրջ:

Կարող եք օգտագործել ստորև տրված պատասխանները, որպեսզի երեխաներին պարզ և հասկանալի ձևով տեղեկատվություն տրամադրեք COVID 19-ի համավարակի հետ կապված թեմաների վերաբերյալ, օրինակ.

## Ի՞նչ է կորոնավիրուսը:

Կորոնավիրուսը մանրէ է, որը հիվանդացնում է մարդուն: Մանրէներն այնքան փոքր են, որ մենք չենք կարող տեսնել դրանք, բայց նրանք կարող են շարժվել օդում, երբ մարդը փռշտում է կամ հազում:

## Ես կհիվանդանա՞մ:

Բոլոր մարդիկ երբեմն հիվանդանում են, բայց երեխաները բավականին ուժեղ են, որպեզի պայքարեն կորոնավիրուսի նման մանրէների դեմ: Եթե հիվանդանաք, մեծահասակները, ովքեր հոգ են տանում ձեր մասին, կպաշտպանեն ձեր անվտանգությունը:

## Ինչո՞ւ չեմ կարող այցելել իմ տատիկին և պապիկին:

Երբեմն մանրէները կարող են տատիկ-պապիկներին ավելի հիվանդացնել, և մենք ուզում ենք, որ բոլորը առողջ լինեն: Նրանք կրկին սիրում են քեզ և հոգ են տանում քո մասին, և դու կարող ես նրանց հետ կրկին խոսել հեռախոսով կամ համակարգչով:

## Ինչո՞ւ են մարդիկ դիմակ կրում:

Դիմակ կրելն այն է, ինչ մենք անում ենք միմյանց համար: Երբեմն մարդիկ ավելի զվարճալի տեսք են ունենում դիմակով, բայց նրանց դիմակները պաշտպանում են ինձ և քեզ, որ չհիվանդանանք, և մեր դիմակը պաշտպանում է նրանց հիվանդությունից:

## Երեխային բռնությունից պաշտպանելը

Երեխայի նկատմամբ բռնություն է համարվում ցանկացած գործողություն, դաստիարակության բռնություն պարունակող ձև, որը սպառնում է նրա զարգացմանը, ֆիզիկական և հոգեկան բարեկեցությանը: Բռնությունը երեխայի իրավունքների ոտնահարում է: Այս ժամանակ նշանակություն չունի գործողությունն իրականացվում է դիտավորյալ, թե ոչ դիտավորյալ: Ելակետը այն վնասակար ազդեցությունն է, որը երեխան ունենում է բռնության հետևանքով:

Հանրային առողջության ճգնաժամի պայմաններում, ի թիվս այլ մարտահրավերների, մեծանում է նաև երեխաների նկատմամբ բռնության ռիսկը, ինչն անմիջականորեն կապված է նման ճգնաժամերի հետևանքով առաջացած սոցիալական, տնտեսական և հուզական մարտահրավերների հետ: Ուստի հատուկ ուշադրություն պետք է դարձնել երեխաների խնամքի մեջ ներգրավված անձանց կողմից բռնության նշանների դրսևորմանը և համապատասխան պատասխանատու մարմիններին այդպիսի դեպքերի հաղորդմանը:

Բռնության նշանների դիտարկումը և որոշումը պետք է իրականացվի ինչպես նախադպրոցական կրթության առկա ծառայությունների մատուցման, այնպես էլ հիբրիդային կամ հեռավար ծառայությունների մատուցման գործընթացում: Հեռավար նախադպրոցական կրթության իրականացման դեպքում վաղ կրթության մասնագետները պետք է ուշադրությունը կենտրոնացնեն բռնության այնպիսի նշանների վրա, որոնք հնարավոր է տեսնել և լսելով հասկանալ: Օրինակ՝ նախադպրոցական կրթության մասնագետի ներկայությամբ ծնողը հոգեբանական բռնության է ենթարկում երեխային, բղավում նրա վրա, ցնցում նրան, կմշտում, սպառնում մարմնական պատժով, անարգանք հասցնում երեխային, հարվածում նրան և այլն:

# ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ՆՊԱՍՏՈՒՄԸ, ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ COVID 19-Ի ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

**COVID 19-ի պայմաններում նախադպրոցական կրթության որակյալ և անվտանգ կրթական գործընթացն ապահովելու համար կարևոր է ուժեղացնել նշված գերատեսչությունների միջև համակարգումը: Ստորև տրված են հանձնարարականներ, որոնք կօգնեն պետական մարմիններին և մունիցիպալիտետներին իրենց իրավասության շրջանակներում խթանել կամ ապահովել նախադպրոցական կրթական ծառայությունների տրամադրումը COVID 19-ի պայմաններում:**

## Հանձնարարականներ մունիցիպալիտետներին

Երաշխավորվում է մունիցիպալիտետի համար որպես պարտավորություն սահմանվի.

- Նախադպրոցական հաստատություններում ուսումնական գործընթացի մեկնարկից առաջ կարիքների հետազոտություն և վերլուծություն:
- COVID 19-ի պայմաններում տարբեր ձևերով կրթական գործընթացի հավասար մատչելիության ապահովում:
- Նախադպրոցական հաստատությունների համակարգիչներով կահավորում և համացանցի հասանելիություն:
- Նախադպրոցական հաստատությունների կառավարիչների/ղեկավարների խորհրդատվություն և աջակցություն նախադպրոցական կրթական ծառայության տրամադրման համապատասխան ձևի ընտրության (ձևերը տե՛ս համապատասխան գլխում) և իրականացման նպատակով:
- Նախադպրոցական հաստատությունների կողմից համապատասխան ռեսուրսներով ուսումնական գործընթացի սահուն և անվտանգ իրականացում:
- Նախադպրոցական հաստատություններին աջակցություն և նրանց համապատասխան ռեսուրսների տրամադրում՝ Վրաստանի գրավյալ տարածքներից տեղահանված անձանց աշխատանքի, առողջապահության և սոցապահովման նախարարության կողմից տրված հանձնարարականները կատարելու նպատակով:
- Նախադպրոցական հաստատություններում ուսումնական գործընթացի մշտադիտարկում և գնահատում, իսկ նույնականացված կարիքների դեպքում՝ հաստատությունների աջակցություն (դասընթացներ, սեմինարներ, աջակցող սուպերվիզիաներ և այլն):
- «Վաղ և նախադպրոցական կրթության մասին» Վրաստանի օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի իրագործում:

Նախադպրոցական կրթական համակարգի համար մինչև օրս մեծ մարտահրավեր են մնում միասնական կրթական վիճակագրության առկայությունը և նախադպրոցական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի ստեղծումը: «Վաղ և նախադպրոցական կրթության մասին» օրենքի համաձայն, մունիցիպալիտետի մարմինը պարտավոր է վարել հաստատությունների գրանցամատյան, հավաքել և նրանում արտացոլել տվյալներ Վրաստանի կառավարության կողմից հաստատված մունիցիպալիտետի կողմից հաստատությունների գրանցամատյանների վարման

կարգի և այդ գրանցամատյանում ընդգրկվելիք տվյալների և ստուգիչների ցանկի համաձայն, ապահովել տվյալների հանրայնություն և դրանք տրամադրել հանրային իրավունքի իրավաբանական անձ Վրաստանի ազգային վիճակագրության ծառայությանը՝ սույն օրենքի 12-րդ հոդվածի համաձայն: Միևնույն ժամանակ, հանրային իրավունքի իրավաբանական անձ Վրաստանի ազգային վիճակագրության ծառայությունը պարտավոր է հրապարակել նախադպրոցական կրթության ոլորտում մունիցիպալիտետներից ստացված վիճակագրական տեղեկությունները:

Ներկայումս Վրաստանի վիճակագրության ազգային ծառայության կողմից վարած վիճակագրությունը ամբողջական պատկեր չի տալիս նախադպրոցական կրթության համակարգում տիրող իրավիճակի մասին, իսկ COVID 19-ի պայմաններում սկզբունքորեն կարևոր է ճշգրիտ վիճակագրության առկայությունը: Ելնելով առկա իրավիճակից՝ նպատակահարմար է ոչ միայն համապարփակ վիճակագրության ստեղծումը, այլ նաև նախադպրոցական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի ստեղծումը:

## *Երաշխավորվում է, որ այս նպատակով մունիցիպալիտետն ապահովի.*

- Նախադպրոցական հաստատությունների թվի հաշվառում:
- Հաստատության կրթական ծրագրում ներգրավված երեխաների, այդ թվում այն երեխաների հաշվառում, ովքեր ունեն հաստատված սահմանափակ հնարավորության կարգավիճակ, հատուկ կարիք կամ այսպիսի ռիսկի տակ են գտնվում: Դրանց քանակի և տվյալների հաշվառում:
- Հաստատությունում աշխատողների անձնական տվյալների հաշվառում:
- Ծնողների/օրինական ներկայացուցիչների անձնական տվյալների հաշվառում:
- Կրթական գործընթացի զարգացման խթանում՝կառավարման գործընթացների ժամանակին, համապատասխան և ճշգրիտ տեղեկատվական ապահովմամբ:
- Նախադպրոցական կրթության համակարգում առկա էլեկտրոնային տվյալների հավաքագրում, պահպանում և վարչարարություն, այդ թվում նախադպրոցական հաստատությունների կառավարման տեղեկատվական համակարգերի ստեղծում, ներդրում և վարչարարություն:
- Կրթական գործընթացում նորարարական կրթական տեխնոլոգիաների ներդրման խթանում:
- Նախադպրոցական հաստատություն ընդունելու ենթակա երեխայի էլեկտրոնային գրանցման գործընթաց:
- Նախադպրոցական կրթության համակարգում ընդգրկված մարմիններում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության և էլեկտրոնային ստորագրության համակարգի ներդրում:
- Երեխայի ծնողի/օրինական ներկայացուցչի և աշխատակցի համար նախապես սահմանված էլեկտրոնային հարթակի համար (նախադպրոցական հաստատությունների կառավարման համակարգ, էլեկտրոնային մատյան, համագործակցության համակարգ և այլն) օգտատերերի պրոֆիլների ստեղծում:
- Նախապես սահմանված էլեկտրոնային հարթակների (նախադպրոցական հաստատության կառավարման համակարգ, էլեկտրոնային մատյան, համագործակցության համակարգ և այլն) ներդրմանն աջակցում:
- Կրթական գործընթացում օգտագործվելիք հարթակների տեխնիկական վերլուծություն և հանձնարարականների պատրաստում:
- Կրթական գործընթացում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ուղղությամբ՝ ըստ ի հայտ եկած կարիքների, համապատասխան սոցիալական արշավների և գործունեության պլանավորում-իրականացում:
- Հաճախումների էլեկտրոնային մատյանի պատշաճ վարում:
- Հեռավար ձևով ընթացող կրթական գործընթացին առնչվող վիճակագրության վարում:

Նախադպրոցական հաստատություններ ընդունվելու երեխաների էլեկտրոնային գրանցման գործընթացի ապահովումը կնպաստի երկրի մասշտաբով նախադպրոցական կրթության

համակարգում երեխաների ընդգրկման միասնական համակարգի ստեղծմանը, տվյալների միասնական համակարգում հավաքմանը, երեխաների գրանցման միասնական և արդար համակարգի ստեղծմանը, մունիցիպալիտետների մակարդակով նախադպրոցական հաստատությունների միավորումների/գործակալությունների պարտականությունների ձևափոխմանը*: Ավելին, COVID 19-ի պայմաններում ապահովում է համակարգում ներգրավված անձանց անվտանգություն: Ծնողները/օրինական ներկայացուցիչները ստիպված չեն լինի ներկայանալ նախադպրոցական հաստատություն՝ դիմում գրելու համար՝ այդպիսով նվազագույնի հասցնելով մարդկանց միջև շփումը և վարակի տարածման վտանգը:

Նախադպրոցական կրթության համակարգում երեխաների ընդգրկման միասնական համակարգ ստեղծելու նպատակով երեխաների ընդունումը խորհուրդ է տրվում իրականացնել հետևյալ առաջնահերթություններով: Բացի այդ, նպատակահարմար է սահմանել ըստ առաջնահերթության երեխայի գրանցման տարբեր ժամկետներ:

***Նախադպրոցական հաստատություն երեխային ընդունելու առաջնահերթությունը.***

| | |
|---|---|
| **I փուլ** | • սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ<br>• միայնակ ծնողների երեխաներ<br>• սահմանափակ հնարավորություն ունեցող երեխաներ, հատուկ կարիք ունեցող երեխաներ |
| **II փուլ** | • նախադպրոցական հաստատության աշխատակիցների երեխաներ<br>• հաստատություն հաճախող երեխաների քույր-եղբայրներ |
| **III փուլ** | • նույն շրջանում գրանցված երեխաներ, որտեղ տեղակայված է նախադպրոցական հաստատությունը<br>• այլ մնացած դիմումներ |

COVID 19-ի պայմաններում նորարարական կրթական տեխնոլոգիաների ներդրումը զգալիորեն կբարձրացնի նախադպրոցական կրթության մատչելիությունն ու որակը: Նախադպրոցական կրթության համակարգում ընդգրկված մարմիններում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության և էլեկտրոնային ստորագրության համակարգի ներդրումը ոչ միայն կպարզեցնի և կդարձնի համակարգն ավելի ճկուն, այլ նաև կապահովի համակարգում ներգրավված անձանց անվտանգությունը:

***Առաջարկ քննարկման համար*.**

Ամբողջական վիճակագրական և նախադպրոցական կրթության կառավարման տեղեկատվական համակարգ ստեղծելու նպատակով հնարավոր է նախադպրոցական կրթության համակարգը ինտեգրել կրթության կառավարման տեղեկատվական համակարգին (EMIS)՝օգտագործելով հետևյալ սխեման.

Կրթության կառավարման տեղեկատվական համակարգին (EMIS) նախադպրոցական կրթության համակարգը ինտեգրելու գործընթացին նպաստելու համար, Նախադպրոցական կրթության զարգացման վարչության և կրթական ռեսուրս-կենտրոնների նպատակներից և գործառույթներից ելնելով, առանց լրացուցիչ համակարգային օղակների և ֆինանսական ծախսերի, հնարավոր է վերոնշյալ այս երկու օղակները ներգրավել նախադպրոցական կրթության կառավարման տեղեկատվական

* Հետագայի համար.Այն ժամանակ, երբ «Վաղ և նախադպրոցական կրթության մասին» օրենքի համաձայն, նախադպրոցական հաստատությունները դառնան անկախ իրավաբանական անձինք, միավորումների/գործակալությունների պարտականությունները պետք է փոխվեն: Նրանցից պետք է վերցվեն նախադպրոցական հաստատության կառավարմանն առնչվող խնդիրները, գրանցման միասնական համակարգի ստեղծումը կնպաստի այս գործընթացին: Ինչպես նաև, դա կլինի առաջընթաց քայլ դեպի նախադպրոցական հաստատությունների ինքնավարություն:

համակարգի ստեղծման/զարգացման գործընթացի մեջ: Մասնավորապես, կրթական ռեսուրս-կենտրոններում նախադպրոցական կրթության համակարգողները ապահովում են EMIS-ի համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում մունիցիպալիտետների մակարդակում ստեղծված միջանկյալ օղակներից (մունիցիպալիտետների մանկապարտեզների միավորումներ/ Թբիլիսիի մսուր-մանկապարտեզների կառավարման գործակալություն) և տեղեկատվություն տրամադրեն Նախադպրոցական կրթության զարգացման վարչությանը: Իսկ վերջինս, իր հերթին, կապահովի տվյալ տեղեկությունների տրամադրում EMIS-ին: Նշված սխեմայով կստեղծվի նախադպրոցական կրթության կառավարման տեղեկատվական համակարգ և, անհրաժեշտության դեպքում, տեղի կունենա EMIS-ում կուտակված տեղեկատվության վերլուծում և այդ տեղեկատվության տարածում/փոխանցում համակարգում ընդգրկված օղակներին, ինչպես նաև շահագրգիռ կողմերին՝ Նախադպրոցական կրթության զարգացման վարչության կողմից:

## Կարիքների հետազոտություն և վերլուծություն

Նախադպրոցական հաստատությունների գործունեության վերականգնումը պետք է հիմնված լինի երեխայի լավագույն շահերի վրա և ընդհանրապես ապահովի համակարգում ներգրավված բոլոր անձանց անվտանգությունը: COVID 19-ի պայմաններում, մինչև ուսումնական գործընթացը սկսելը, կարևոր է կատարել կարիքների գնահատում տարբեր նպատակային խմբերի մոտ (ծնողներ / օրինական ներկայացուցիչներ, նախադպրոցական հաստատությունների վարչության ներկայացուցիչներ և աշխատակիցներ, ինչպես կրթական գործընթացի համար պատասխանատու, այնպես էլ տեխնիկական անձնակազմը: Կարևոր է ուշադրությունը կենտրոնացնել հատուկ կարիք/ սահմանափակ հնարավորություն ունեցող երեխաների և նրանց ծնողների լրացուցիչ կարիքների վրա): Վերոհիշյալ հետազոտության վերլուծությունը որոշումներ կայացնող անձանց հնարավորություն կտա արդյունավետ և գործուն պլանավորել ու իրականացնել ուսումնական գործընթացի վերսկսումը նախադպրոցական հաստատություններում և նվազագույնի հասցնել ռիսկերը: Հարկ է նշել նաև, որ անվտանգության նկատառումներից ելնելով՝ նախընտրելի է կատարել առցանց (կամ հեռախոսով) հետազոտություն:

Հիմնվելով կարիքների վերլուծության արդյունքում հայտնաբերված հնարավորությունների և կարիքների վրա, ելնելով կոնկրետ նախադպրոցական հաստատության վիճակից, մունիցիպալիտետները պետք է որոշում կայացնեն ինչպես նախադպրոցական կրթության բացման ժամկետների, այնպես էլ նախադպրոցական կրթական ծառայության տրամադրման ձևերի և ռազմավարության վերաբերյալ (տե՛ս Գլուխ. «Նախադպրոցական կրթական ծառայության տրամադրման ձևերը COVID 19-ի պայմանների նախատեսմամբ»): Նշված որոշումը կայացնելու համար կարևոր է, որ մունիցիպալիտետը որոշումները չկայացնի միասնական մոտեցումով, այլ այն իրականացվի նախադպրոցական հաստատության համատեքստային վերլուծության և անհատական հնարավորությունների նախատեսմամբ (հետազոտության իրականացման համար պահանջվող նշման թերթիկի նմուշները տեսե՛ք՝ Հավելված №2. Աշխատակիցների համար կազմված նշման թերթիկի նմուշ, Հավելված №3. Նախադպրոցական հաստատությունների ղեկավարների համար ստեղծված նշման թերթիկի նմուշ, Հավելված №4. Ծնողների համար ստեղծված նշման թերթիկի նմուշ):

## Կրթական գործընթացում ձեռքբերումների և մարտահրավերների ուսումնասիրություն և աջակցություն

Սույն ուղեցույցը գործնականում ներդնելու նպատակով կարևոր է ինչպես ուսումնական գործընթացից առաջ, այնպես էլ դրանից հետո որոշակի պարբերականությամբ աջակցել գործընթացում ներգրավված գործակալություններին և դրանց ներկայացուցիչներին: Վերջինս կարող է իրականացվել

աշխատանքային հանդիպումների, դասընթացների, աջակցող սուպերվիզիաների և այլ տեսքով: Այս գործընթացը պետք է իրականացվի ոլորտի փորձագետների ներգրավմամբ, որոնք կօգնեն համակարգում աշխատող անձանց հաղթահարել և լուծել այն խնդիրները, որոնց բախվելու են ուսումնական գործընթացի վերսկսման ժամանակ: Ինչպես նաև՝ լավ կլինի հանդիպումների ընթացքում քննարկել հաջող և անհաջող գործնական օրինակներ, որպեսզի գործընթացում ներգրավված անձինք ավելի հեշտ կայացնեն որոշումներն ու կարգավորեն խնդիրները:

## Հանձնարարականներ Վրաստանի գրավյալ տարածքներից տեղահանված անձանց աշխատանքի, առողջապահության և սոցապահովման նախարարությանը

«Վաղ և նախադպրոցական կրթության մասին» Վրաստանի օրենքի համաձայն, Վրաստանի աշխատանքի, առողջապահության և սոցապահովման նախարարությունը և հանրային իրավունքի իրավաբանական անձ Պարենամթերքի ազգային գործակալությունը լիազորությունների շրջանակներում ապահովում են իրենց պարտավորությունների կատարում, մասնավորապես, նախադպրոցական հաստատություններում սանիտարահիգիենիկ նորմերի պահպանության և սննդամթերքի անվտանգության վերահսկման տեխնիկական կանոնակարգերի և Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգի համաձայն:

COVID 19-ի պայմաններում հանձնարարականներ են տրվում, որ վերոնշյալ գերատեսչությունները ապահովեն նաև նախադպրոցական հաստատությունների վերահսկողություն՝ համաձայն Վրաստանի գրավյալ տարածքներից տեղահանված անձանց, աշխատանքի, առողջապահության և սոցապահովման նախարարության կողմից տրված COVID 19-ի հետ կապված հանձնարարականների:

## Հանձնարարականներ նախադպրոցական հաստատություններին

Երաշխավորվում է նախադպրոցական հաստատությունը.

- Ապահովի մունիցիպալիտետի աջակցություն նախադպրոցական հաստատություններում ուսումնական գործընթացի մեկնարկից առաջ կարիքների հետազոտման և վերլուծության գործընթացում:
- Ապահովի նախադպրոցական հաստատությունների անձնակազմի խորհրդատվություն/ ուսուցում/ աջակցության տրամադրում նախադպրոցական հաստատության անխափան և անվտանգ գործունեության նպատակով:
- Ապահովի Վրաստանի գրավյալ տարածքներից տեղահանված անձանց, աշխատանքի, առողջապահության և սոցապահովման նախարարության կողմից տրված հանձնարարականների կատարում:
- Պլանավորի կրթական գործընթացը՝ հաստատության ռեսուրսների և յուրաքանչյուր երեխայի հետաքրքրությունների ու կարողությունների նախատեսմամբ:
- Առավելագույն ջանքեր գործադրի նախադպրոցական կրթական ծառայության որևէ ձևով տրամադրման և իրականացման մեջ:
- Ապահովի ծնողներին/օրինական ներկայացուցիչներին պարբերաբար տեղեկատվության տրամադրում՝ իրենց պարտականությունների և լիազորությունների վերաբերյալ:
- Ապահովի ծնողների/օրինական ներկայացուցիչների պարբերական խորհրդատվություն/ վերապատրաստում / աջակցություն նախադպրոցական հաստատության անխափան և անվտանգ գործունեության և այս գործընթացում նրանց ներգրավվածության նպատակով:
- Ապահովի նախադպրոցական հաստատության խորհրդատվական խորհրդի օժանդակությամբ

ժամանակին և համամասնակցային սկզբունքի վրա հիմնված որոշումների կայացում՝ կապված COVID 19-ով հարուցված հարցերի հետ։

- Կանոնավոր կերպով վարի երեխաների հաճախման գրանցում՝ ըստ ընտրված ընթացիկ ձևի (ձևերի) անցկացված ուսումնական գործընթացում։
- Որոշի ընտրված տարբեր ընթացիկ ձև(եր)ով անցկացված ուսումնական գործընթացից երեխայի բացակայելու պատճառները։

Եթե դա պայմանավորված է երեխայի/օրինական ներկայացուցչի կողմից համապատասխան տեխնիկական աջակցության (սարքի և ինտերնետի հասանելիության) բացակայությամբ, տեղեկատվություն տրամադրի հաստատության ղեկավարին, և մինչև խնդիրը կարգավորելը գործընկերների հետ անհատապես քննարկի առկա հնարավորություններն ու պլանավորի այլընտրանքային միջոցառումներ՝ երեխային կրթական գործընթացում ներգրավելու համար ինչպես առկա, այնպես էլ հեռավար կարգով։

Եթե երեխայի՝ առկա կրթական գործընթացում մասնակցության խափանման պատճառ է համարվել երեխայի առողջական վիճակով հարուցված ավելացված ռիսկը կամ նրա սահմանափակ հնարավորությունը, ակտիվ մասնակցի հեռավար ուսումնական գործընթացում, քննարկի կրթական գործընթացում երեխայի ներգրավման այլընտրանքային տարբերակներ և նրա լավագույն շահի պահպանմամբ կայացնի համապատասխան որոշում։

- Ապահովի համապատասխան տարածքի տրամադրում համապատասխան աշխատակազմի կողմից (մանկավարժներ, հատուկ մանկավարժներ և այլ կրթական անձնակազմեր) գործունեության պլանավորման / իրականացման համար, այն դեպքում, եթե՝
  ա) կրթական անձնակազմը չի կարողանում տանից միանալ,
  բ) կրթական անձնակազմը չունի համապատասխան տեխնիկական սարքավորում / ինտերնետ։
- Ապահովի երեխաների կարիքների, հնարավորությունների, հետաքրքրությունների և ռեսուրսների նույնականացում։
- Մշակի և իրականացնի միջոցառումներ հեռավար կրթական գործընթացի մշտադիտարկման համար, ինչը նախատեսում է.
  ա) հեռավար ակտիվությունների սահմանված ժամանակին և սահմանված տևողությամբ անցկացման վերահսկում,
  բ) հեռավար ուսուցման գործընթացում ներգրավված երեխաների հաճախումների հաշվառման վերահսկում,
  գ) հեռավար կրթական գործընթացից դուրս մնացած երեխաների հաշվառում և պատճառների հետազոտում,
  դ) էթիկայի և վարքագծի ընդհանուր նորմերի և անվտանգության պահպանման վերահսկում։
- Հեռավար կրթական գործընթացում որևէ ձևով բռնություն պարունակող գործողության արձանագրման պես, իրեն շնորհված լիազորությունների շրջանակներում գործի առկա Օրենսդրության համաձայն։

## *Հաղորդակցություն ընտանիքի, աշխատակիցների և վերադաս կառույցների հետ*

Նախադպրոցական հաստատության համար կարևոր է պահպանել ակտիվ կապը երեխայի ընտանիքի, անձնակազմի և վերադաս կառույցների հետ, հատկապես COVID 19-ի պայմաններում։ Այդ նպատակով կարող են օգտագործվել տարբեր աղբյուրներ, ինչպիսիք են հանդիպումները բաց տարածության մեջ (առողջության և անվտանգության կանոնների պահպանմամբ), տարբեր առցանց հարթակների օգտագործումը, սոցիալական լրատվամիջոցները և այլն։

Հնարավոր է ի հայտ գա լրացուցիչ անհատական հանդիպումներ կազմակերպելու անհրաժեշտություն հատուկ կրթական կարիք և սահմանափակ հնարավորություն ունեցող երեխայի ծնողների հետ՝ նրանց կարիքները և ուսումնական գործընթացը անհատապես քննարկելու և պլանավորելու համար:

## Գործընկերություն և հաղորդակցություն ծնողների / օրինական ներկայացուցիչների հետ.

Այս հանդիպումները նախընտրելի է անցկացնել խմբերով:

- Խոսե՛ք ծնողների/օրինական ներկայացուցիչների հետ այն մասին, թե ինչ միջոցառումներ և ինչու է անցկացնում նախադպրոցական հաստատությունը՝ իրենց երեխաների անվտանգ վերադարձն ապահովելու համար: Ինչպես նաև այն լրացուցիչ միջոցառումների մասին, որոնք մտադիր է իրականացնել նախադպրոցական հաստատությունը հատուկ կրթական և սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաների դեպքում:
- Ծնողների/օրինական ներկայացուցիչների հետ խոսե՛ք այն մասին, թե որքան կարևոր է նրանց ներգրավվածությունն ու աջակցությունը կրթական գործընթացն անխափան վարելու և անվտանգության ապահովման գործում:
- Ծնողների/օրինական ներկայացուցիչների հետ խոսե՛ք իրենց պարտականությունների և վերջիններիս կատարման անհրաժեշտության մասին:
- Խոսե՛ք ծնողների/օրինական ներկայացուցիչների հետ այն մասին, որ նրանց հետ կունենաք կանոնավոր հաղորդակցություն/առցանց հանդիպում տարբեր միջոցների օգտագործմամբ: Խնդրե՛ք նրանց, որ հետևեն ձեր հաստատության կայքէջին, ֆեյսբուքյան խմբերին և այլն: Բացատրե՛ք, որ նրանք կարող են ձեզ դիմել ցանկացած հարցերով:
- Խոսե՛ք ծնողների/օրինական ներկայացուցիչների հետ հետազոտության հետևանքով բացահայտված կարիքների, խնդիրների և այս խնդիրները լուծելու ուղիների մասին: Լսե՛ք նրանց և փորձե՛ք նկատի ունենալ նրանց հետադարձ կապը:
- Խոսե՛ք ծնողների/օրինական ներկայացուցիչների հետ COVID 19-ի ախտանշանների և դրանց նույնականացման դեպքում՝ համապատասխան պրոտոկոլի մասին: Նրանց տեղեկություններ տրամադրե՛ք այն պաշտոնական գերատեսչությունների և աղբյուրների մասին, որոնցից նրանք հետաքրքրության դեպքում կկարողանան տեղեկատվություն ստանալ/ճշգրտել:
- Խոսե՛ք ծնողների/օրինական ներկայացուցիչների հետ այն մասին, որ ընտանիքում կորոնավիրուսի փաստի հայտնաբերման դեպքում նրանք չեն կարողանա երեխային բերել հաստատություն և այդ մասին անհապաղ պետք է տեղեկացնեն հաստատությանը:
- Խոսե՛ք ծնողների/օրինական ներկայացուցիչների հետ այն մասին, որ կարևոր է իրենց երեխաների մոտ մրսածության փոքր նշաններ ի հայտ գալուն պես, նրանց պահեն տանը:
- Խոսե՛ք ծնողների/օրինական ներկայացուցիչների հետ երեխային բերելու և տանելու ընթացակարգերի մասին, որ այդ փաստը սթրեսային չլինի ո՛չ ծնողի, ո՛չ էլ երեխայի համար: Բացի այդ, ճշտե՛ք, որ, անվտանգության նկատառումներից ելնելով, ծնողներին թույլ չի տրվի մուտք գործել շենք, և որ երեխային հաստատություն չբերի ընտանիքի տարեց անդամ, որպեսզի նվազագույնի հասցվի ռիսկ-խմբում գտնվող անձի վարակումը:
- Ծնողներին փոխանցե՛ք գրավոր հանձնարարականներ, թե ինչպես բացատրել երեխային COVID 19-ի հետ կապված փոփոխությունները և պատրաստել երեխային նախադպրոցական հաստատություն հաճախելուն:

## Գործընկերություն և աշխատակիցների հետ հաղորդակցություն.

- Խոսե՛ք անձնակազմի հետ այն մասին, թե նախադպրոցական հաստատությունը ինչ միջոցառումներ և ինչու է անցկացնում անվտանգ բացվելու նպատակով:

- Աշխատակիցների հետ խոսե՛ք իրենց պարտավորությունների և վերջիններիս կատարման անհրաժեշտության մասին:
- Աշխատակիցներին ծանոթացրե՛ք փոփոխությունները՝ կապված ուսումնական գործընթացի հետ:
- Աշխատակիցների հետ խոսե՛ք այն մասին, թե որքան կարևոր է նրանց աջակցությունը անվտանգության և որակյալ կրթական գործընթաց ապահովելու համար:
- Խոսե՛ք COVID 19-ի ախտանշանների մասին և դրանց նույնականացման դեպքում՝ համապատասխան պրոտոկոլի մասին: Տեղեկատվություն տրամադրե՛ք պաշտոնական գերատեսչությունների և աղբյուրների մասին, որտեղից նրանք հետաքրքրության դեպքում կկարողանան տեղեկատվություն ստանալ/հստակեցնել:
- Խոսե՛ք այն մասին, որ աշխատակիցները հնարավորինս ներգրավված կլինեն ձեր կողմից որոշումների կայացման գործընթացում, և ամեն անգամ կտեղեկացնեք ընդունված նորություններն ու փոփոխությունները:
- Պլանավորե՛ք նրանց հետ կանոնավոր հանդիպումներ և օրեր հատկացրեք այդ հանդիպումների համար:
- Խոսե՛ք հետազոտության արդյունքում ի հայտ բերված կարիքների, խնդիրների և այս խնդիրները լուծելու ուղիների մասին: Լսե՛ք և փորձե՛ք նկատի ունենալ նրանց հետադարձ կապը:
- Խոսե՛ք անձնակազմի հետ այն մասին, որ ընտանիքում կորոնավիրուսի փաստի հայտնաբերման դեպքում նրանք չեն կարողանա գալ հաստատություն և այդպիսի ժամանակ պետք է անհապաղ տեղեկացնեն հաստատության վարչակազմին:
- Բացատրե՛ք հաստատություն գալու և գնալու կանոնները և անվտանգության այն կանոնները, որոնք պետք է պահպանվեն աշխատանքային գործընթացի ընթացքում:
- Բացատրե՛ք երեխաներին ընդունելու և տուն ճանապարհելու ընթացակարգերը:
- Խոսե՛ք աշխատակիցների հետ՝ ծնողների/օրինական ներկայացուցիչների հետ նրանց հաղորդակցության կարևորության և ձևերի մասին:

### *Գործընկերություն և հաղորդակցություն վերադաս կառույցների հետ.*

- Պահպանե՛ք պարբերական հաղորդակցություն վերադաս կառույցների հետ:
- Ապահովե՛ք վերադաս կառույցների կողմից տրամադրված տեղեկատվության ժամանակին և ճշգրիտ տարածում:

### *Տեսանելիություն*

- COVID 19-ից պաշտպանվելու կանոնների մասին տեղեկատվական պաստառներ տեղադրե՛ք ինչպես առջանց տարածքներում, այնպես էլ փակցրե՛ք աչքի ընկնող տեղերում:
- Տեղեկատվությունը նախադպրոցական հաստատությունների շրջանակներում մշակված պրոտոկոլների (սաների ընդունման և տուն ուղարկելու կանոններ, շենք մուտք գործելու կանոններ և այլն) վերաբերյալ տեղադրե՛ք ինչպես առջանց տարածքում, այնպես էլ փակցրե՛ք աչքի ընկնող տեղերում:

## Հանձնարարականներ ծնողներին/օրինական ներկայացուցիչներին

Ծնողը/օրինական ներկայացուցիչը ուսումնական գործընթացին նպաստելու համար նպատակահարմար է.

- Հնարավորության սահմաններում ապահովի երեխայի ներգրավվում ուսումնական գործընթացի մեջ և նպաստի դրան:
- Համագործակցի նախադպրոցական հաստատության հետ և օգնի երեխային հասնել

հաստատության կողմից սահմանված կրթական նպատակներին: Անհրաժեշտության դեպքում դաստիարակի հանձնարարականի նախատեսմամբ ապահովի լրացուցիչ աշխատանք երեխայի հետ՝ նախանշված նպատակներին և առաջընթացի հասնելու համար:
- Հետևի երեխային և ժամանակին տեղեկացնի նախադպրոցական հաստատությանը հեռավար կրթական գործընթացում բռնության ցանկացած ձևի, ներառյալ՝ կիբերբուլիինգի արձանագրման դեպքի մասին:
- Ողջամիտ ժամկետում նախադպրոցական հաստատությանը տեղեկացնի երեխայի կրթական գործընթացից բացակայելու պատճառը, հաստատության համապատասխան ներկայացուցիչներին՝ երեխայի առողջական վիճակի հետևանքով առաջացած լրացուցիչ ռիսկերի մասին, և ներկայացնի համապատասխան բժշկական փաստաթղթերը (օրինակ՝ բուժող բժշկի եզրակացությունն ու հանձնարարականը):
- Տեղեկացնի նախադպրոցական հաստատությանը հեռավար կրթական գործընթացում ներգրավվածության հետ կապված դժվարությունների մասին և համագործակցի հաստատության հետ՝ դժվարությունը հաղթահարելու իրատեսական ուղի գտնելու և լուծման գործընթացի մեջ ներգրավվելու համար:
- Լրացնի նշման թերթիկ ծնողների համար (տե՛ս՝ Հավելված № 4. Ծնողների համար ստեղծված նշման թերթիկ):

## Հանձնարարականներ Վրաստանի կրթության, գիտության և սպորտի նախարարությանը

### *Հեռուստամանկապարտեզ*

2018 թվականին անցկացված հետազոտության (Վրաստանում նախադպրոցական կրթության որակի հետազոտություն) արդյունքների համաձայն՝ վաղ տարիքի երեխաների նախադպրոցական հաստատություններում ընդգրկվածության ցուցանիշը կազմում էր 69.5%: Միևնույն ժամանակ, մանկապարտեզում գրանցման մակարդակը ազգային փոքրամասնությունների երեխաների շրջանում 33% էր, սոցիալապես խոցելի երեխաների շրջանում՝ 39,7%, իսկ գյուղական բնակավայրերի երեխաների համար՝ 46,8%: Հաշվի առնելով այս վիճակագրությունը, հեռուստամանկապարտեզի հիմնումը սկզբունքորեն կարևոր է այն երեխաների կրթական տարածք ներգրավման համար, ովքեր, ցավոք, մինչ COVID 19-ի վարակի տարածումն էլ չէին կարողանում նախադպրոցական հաստատություններ հաճախել, իսկ առկա իրավիճակում այդ թիվն էլ ավելի է աճել:

Խորհուրդ է տրվում, որ հեռուստամանկապարտեզը եթեր հեռարձակվի Վրաստանի հանրային հեռուստաալիքով և նախադպրոցական տարիքի երեխաներին առաջարկի կրթական ծրագրով նախատեսված հեռուստագործողություններ: Հեռուստամանկապարտեզը, անկախ նախադպրոցական ուսումնական գործընթացի այս կամ այն կերպ իրականացումից, կդառնա հեռավար աջակցության ձևաչափերից մեկը, որը հարմարեցված կլինի նախադպրոցական տարիքի բոլոր երեխաներին և հասանելի կլինի ամբողջ Վրաստանում: Անկախ այն բանից, թե արդյոք նրանք ունեն ինտերնետի հասանելիություն, երեխաներին կտրվի հասանելիություն հետաքրքիր զարգացնող գործողություններին:

Ընդհանուր ցանցը հագեցած կլինի բոլոր տարիքային խմբերի կարիքներին համապատասխան գործողություններով: Կրթական ծրագրով նախատեսված հեռուստատեսային գործողությունները պլանավորվելու և վարվելու են ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածի մասնագետների կողմից: Նշենք նաև, որ հեռուստամանկապարտեզի ակտիվությունների թարգմանությունը կապահովվի ժեստերի լեզվի թարգմանչի կողմից: Ազգային փոքրամասնությունների համար կապահովվեն ադրբեջաներեն և հայերեն լեզուներով հեռուստատեսային միջոցառումներ:

Ակտիվությունները կանցկացվեն երկուշաբթիից ուրբաթ օրը ներառյալ: Հեռուստատամանկապարտեզին շաբաթ և կիրակի օրերին կավելանան տարբեր ճանաչողական-ժամանցային ծրագրեր: Հեռուստամանկապարտեզի գործունեության ժամանակացույցը և այլ մանրամասն տեղեկություններ կտեղադրվեն հետևյալ կայքերում ՝ www.mes.gov.ge, www.inclusion.ge, www.el.ge և այլն:

Հեռուստամանկապարտեզի համար կօգտագործվեն նաև տարբեր մեդիահարթակներ՝ 1tv.ge վեբ-պորտալ, Վրաստանի առաջին ալիքի Youtube և Facebook էջերը: Հեռուստամանկապարտեզը, ելնելով իր կարևորությունից, կլինի երկարաժամկետ և կարող է շարունակվել նույնիսկ կորոնավիրուսի սպառնալիքը հաղթահարելուց հետո:

Հեռուստամանկապարտեզն իր կառուցվածքով և բովանդակությամբ օժանդակ գործիք կլինի նախադպրոցական հաստատությունների անձնակազմի մասնագիտական զարգացման համար: Հիշյալ ռեսուրսը կօգնի նրանց ըստ հեռուստաակտիվությունների ճիշտ պլանավորել և իրականացնել չափորոշիչների վրա հիմնված և կրթական ծրագրով նախատեսված բազմազան ակտիվություններ:

- Հեռուստամանկապարտեզը կարևոր դեր կխաղա նաև ծնողների կրթության և իրազեկման բարձրացման գործընթացում: Կնպաստի ծնողի կողմից՝ նախադպրոցական կրթության կարևորության գիտակցմանը, երեխայի հետ հարաբերություններում ճիշտ մոտեցումների օգտագործմանը և հաղորդակցության ուղիների ձևավորմանը:

## Նախադպրոցական կրթության առցանց հարթակ

Ներկայումս երկրում չկա միասնական առցանց տարածք, որտեղ կրթական նյութեր են հավաքվում ինչպես նախադպրոցական կրթության ոլորտում ներգրավված մասնագետների, այնպես էլ ծնողների համար: Կորոնավիրուսի ռիսկը նվազագույնի հասցնելու, նախադպրոցական կրթության ուսումնական գործընթացի շարունակականությունն ու որակն ապահովելու համար կարևոր է նախադպրոցական կրթության առցանց հարթակի օգտագործումը, օրինակ՝արդեն գոյություն ունեցող www.mes.gov.ge, www.inclusion.ge, www.el.ge և այլ կայքերի, ակտիվացում, հարստացում, դրանցում նախադպրոցական կրթության հետ կապված ռեսուրսների մոբիլիզացում: Հարթակը կհամախմբի կրթական և օժանդակ նյութեր ինչպես նախադպրոցական կրթության ղեկավարների և անձնակազմի, այնպես էլ երեխաների և ծնողների համար: Ավելին, նշված տարածքում տեղակայված կլինեն դասընթացներ, ձեռնարկներ և վեբինարներ: Այստեղ կքննարկվեն հաջող և անհաջող իրավիճակային օրինակներ: Նախադպրոցական կրթության առցանց հարթակը, իր կարևորությունից ելնելով, կշարունակի գործել նաև կորոնավիրուսի սպառնալիքը հաղթահարելուց հետո:

# ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՁԵՎԵՐԸ COVID 19-Ի ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԱԽԱՏԵՍՄԱՄԲ

**Տվյալ գլխում նկարագրված են նախադպրոցական կրթական ծառայության տրամադրման ձևեր ու ռազմավարություններ: Դրանք հաստատություններն իրենք կարող են ընտրել ու իրականացնել՝ համաճարակաբանական իրավիճակի նախատեսմամբ՝ Վրաստանի գրավյալ տարածքներից տեղահանվածների, աշխատանքի, առողջապահության և սոցապահովման նախարարության կողմից սահմանված կանոնակարգերին համապատասխան: Ցանկալի է, որ նախադպրոցական հաստատությունը, ծնողների հետ խորհրդակցության հիման վրա, ինքն ընտրի լավագույն տարբերակը տրված ձևերից և ռազմավարություններից:**

Ստորև ներկայացված են նախադպրոցական կրթական ծառայության մատուցման երեք ձևեր. առկա, հեռավար և հիբրիդային: Տվյալ ձևերի շրջանակներում առաջարկում ենք համապատասխան ռազմավարություններ:

## Նախադպրոցական կրթական ծառայություններ մատուցելու առկա ձևը

Նախադպրոցական կրթական ծառայության մատուցման առկա ձևը կրթական գործընթաց է, որի ժամանակ երեխան և դաստիարակը գտնվում են նույն տարածքում, նախադպրոցական կրթական հաստատության միջավայրում, որտեղ պահպանված է կրթական գործընթացի սովորական ռճը՝ համավարակի պայմաններով սահմանված կանոնակարգերին համապատասխան:

Առկա ձևով նախադպրոցական կրթական ծառայությունների մատուցումը կարող է տրամադրվել լրիվ (երկուշաբթիից ուրբաթ ներառյալ, 9-ժամյա կրթական գործընթաց) կամ կես դրույքաչափով (ամեն օր երկու դրույքով՝ երկուշաբթի-ուրբաթ, յուրաքանչյուր դրույքը՝ 5 ժամ): Նախադպրոցական հաստատության կողմից դրույքի հարմարեցումը կախված է նրա ֆիզիկական միջավայրից, մարդկային ռեսուրսներից, երեխաների թվից և նրանից, թե որքանով է այն կարող համապատասխանել սահմանված կանոնակարգերին:

### *Շաբաթվա ժամանակացույցի մշակում և տրամադրում*

Ամեն շաբաթվա ուրբաթ օրը, մինչև ժամը 18:00-ն, նախադպրոցական հաստատությունը պարտավոր է ծնողին տրամադրել երեխայի խմբի կրթական անձնակազմի կողմից (դաստիարակ, դաստիարակի օգնական) կազմված հաջորդ շաբաթվա գործունեության ժամանակացույցը: Շաբաթվա ժամանակացույցի ծանոթացումը ծնողին և երեխային հնարավորություն է տալիս նախապես պատրաստվել և տրամադրվել այն կրթական գործողությունների համար, որոնք հարմարեցված են երեխայի տարիքային հետաքրքրություններին ու հնարավորություններին: Շաբաթվա ժամանակացույցի վերաբերյալ տեղեկատվությունն օգնում է ծնողին, որ մի կողմից իմանա, թե ինչ ակտիվությունների մեջ է ներգրավված իր երեխան, յուրաքանչյուր օրվա վերջում լսի օրվա տպավորությունները (այս պահին աճում է ծնողների ներգրավվածությունն ու հետաքրքրությունը),

| Ծառայության ձևը/ ռազմավարություններ | Շաբաթվա ժամանակացույցի տրամադրում | Կրթական գործընթացի իրականացում նախադպրոցական հաստատությունում | Առցանց փոքր խմբերում հանդիպում երեխաների հետ, ծնողների աջակցությամբ և ներգրավվածությամբ | Առցանց կամ հեռախոսային անհատական հանդիպում երեխայի հետ՝ ծնողի աջակցությամբ և ներգրավվածությամբ | Առցանց կամ հեռախոսային անհատական հանդիպում ծնողի հետ | Առցանց խմբային հանդիպում ծնողների հետ | Առցանց խմբային հանդիպում երեխաների հետ՝ ծնողի աջակցությամբ և ներգրավմամբ | Շաբաթ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հեռավար նախադպրոցական կրթական ծառայություն | Յուրաքանչյուր շաբաթվա ուրբաթ օրը, մինչև ժամը 18:00 | | Ամեն օր, 20-30 րոպե փոքր խմբերի հետ, փոքր խմբերում երեխաների քանակը՝ 2-5 | Ամիսը ոչ պակաս, քան 4 հանդիպում | Ամիսը ոչ պակաս, քան 4 հանդիպում, պլյուս՝ ըստ անհրաժեշտության | • Երկու նստաշրջանով կողմնորոշիչ հանդիպում. ա) հեռավար նախադպրոցական կրթական ծառայության վարչական մասի ծանոթացում՝ 90 րոպե բ) ծրագրային մասի ծանոթացում՝ 90 րոպե<br>• 3 ամիսը մեկ խորհրդատվական հանդիպում կրթական գործընթացը սկսվելուց ոչ ուշ, քան 1 շաբաթ առաջ | Ամիսը ոչ ավելի, քան 1 հանդիպում | երկուշաբթի-ուրբաթ |
| Լրիվ դրույքով կոնտակտային | Յուրաքանչյուր շաբաթվա ուրբաթ օրը, մինչև ժամը 18:00 | Ամեն օր լրիվ դրույք (լրիվ դրույքը = 9 ժամ (ներառյալ ընդմիջման ժամանակը) | | | Ըստ անհրաժեշտության | • Երկու նստաշրջանով կողմնորոշիչ հանդիպում. ա) հեռավար նախադպրոցական կրթական ծառայության վարչական մասի ծանոթացում՝ 90 րոպե բ) ծրագրային մասի ծանոթացում՝ 90 րոպե<br>• 3 ամիսը մեկ խորհրդատվական հանդիպում կրթական գործընթացը սկսվելուց ոչ ուշ, քան 1 շաբաթ առաջ | | երկուշաբթի-ուրբաթ |
| Կես դրույքով կոնտակտային | Յուրաքանչյուր շաբաթվա ուրբաթ օրը, մինչև ժամը 18:00 | Ամեն օր 2 դրույքով (1 դրույք = 5 ժամ) | | | Ըստ անհրաժեշտության | • Երկու նստաշրջանով կողմնորոշիչ հանդիպում. ա) հեռավար նախադպրոցական կրթական ծառայության վարչական մասի ծանոթացում՝ 90 րոպե բ) ծրագրային մասի ծանոթացում՝ 90 րոպե<br>• 3 ամիսը մեկ խորհրդատվական հանդիպում կրթական գործընթացը սկսվելուց ոչ ուշ, քան 1 շաբաթ առաջ | | երկուշաբթի-ուրբաթ |
| Հիբրիդային 1 (Կոնտակտային + հեռավար) | Յուրաքանչյուր շաբաթվա ուրբաթ օրը, մինչև ժամը 18:00 | Ամեն օր 2 դրույքով. (1 դրույք = 5 ժամ) | | Ամիսը ոչ պակաս, քան 2 հանդիպում | Ըստ անհրաժեշտության | • Երկու նստաշրջանով կողմնորոշիչ հանդիպում. ա) հեռավար նախադպրոցական կրթական ծառայության վարչական մասի ծանոթացում՝ 90 րոպե բ) ծրագրային մասի ծանոթացում՝ 90 րոպե<br>• 3 ամիսը մեկ խորհրդատվական հանդիպում կրթական գործընթացը սկսվելուց ոչ ուշ, քան 1 շաբաթ առաջ | | երկուշաբթի-ուրբաթ |
| Հիբրիդային 2 (կոնտակտային + հեռավար) | Յուրաքանչյուր շաբաթվա ուրբաթ օրը, մինչև ժամը 18:00 | Մանկապարտեզի հաստիքակազմը շաբաթվա ընթացքում վերաբաշխված է երեք դրույքների. 2 օր կոնտակտային, լրիվ դրույք + 3 օր հեռավար | Ամեն օր, 20-30 րոպե փոքր խմբերի հետ, փոքր խմբերում երեխաների քանակը՝ 2-5 | | Ամիսը ոչ պակաս, քան 2 հանդիպում, պլյուս ըստ անհրաժեշտության | • Երկու նստաշրջանով կողմնորոշիչ հանդիպում. ա) հեռավար նախադպրոցական կրթական ծառայության վարչական մասի ծանոթացում՝ 90 րոպե բ) ծրագրային մասի ծանոթացում՝ 90 րոպե<br>• 3 ամիսը մեկ խորհրդատվական հանդիպում կրթական գործընթացը սկսվելուց ոչ ուշ, քան 1 շաբաթ առաջ | | երկուշաբթի-ուրբաթ-երկուշաբաթի-շաբաթ (մեծ խմբերի գոյության դեպքում) |

իսկ մյուս կողմից՝ խրախուսի երեխայի մոտիվացիան, նրա մոտ ստեղծի պատրաստակամություն՝ կապված հաջորդ օրվա պլանի մասին։

Շաբաթվա ժամանակացույցը հաստատությունը կազմում է Ազգային ուսումնական պլանի հիման վրա (թեմատիկ ուսումնական պլան, խաղ) կամ այն ծրագրերի վրա հիմնվելով, որոնցով առաջնորդվում էր սովորական համատեքստում։

Ստորև առաջարկված է նախադպրոցական կրթական ծառայության տրամադրման երեք ձև՝ առկա, հեռավար և հիբրիդային։ Նշված ձևերի շրջանակներում առաջարկում ենք համապատասխան ռազմավարություններ (Տե՛ս աղյուսակը այստեղ տրված էքսելի ֆայլում)։

Շաբաթական գրաֆիկ կազմելիս դաստիարակը պետք է հաշվի առնի հատուկ կրթական կարիք ունեցող երեխայի հետ լրացուցիչ հանդիպման անհրաժեշտությունը, հետևաբար, այն արտացոլի իր և ծնողի համար սահմանված ժամանակացույցում։

## Առցանց անհատական հանդիպումներ ծնողի հետ

Նախադպրոցական ուսումնական գործընթացը առկա ձևով անցկացնելիս՝ կրթական անձնակազմը շփվում է ծնողի հետ և, անհրաժեշտության դեպքում, կազմակերպում առցանց կամ հեռախոսային հանդիպում նրա հետ։ Հանդիպման ընթացքում դաստիարակը ծնողին տեղեկացնում է իր երեխայի զարգացման դինամիկայան՝ խոսելով երեխայի ուժեղ կողմերի և այն կարիքների մասին, որոնցում նա բարելավման և աջակցության կարիք ունի։ Դաստիարակը պարտավոր է ըստ անհրաժեշտության կապվել ծնողի հետ և կիսվել երեխայի ձեռքբերումներով։ Այս հաղորդակցության նպատակն է բարձրացնել նրա տեղեկացվածությունը, ավելացնել նրա ներգրավվածությունը նախադպրոցական կրթական ծառայության գործընթացում և նպաստել նրան պոզիտիվ ծնող լինելու հարցում։

## Առցանց միացյալ հանդիպումներ ծնողների հետ

Առցանց միացյալ հանդիպումների ընթացքում ուսուցչական անձնակազմը (դաստիարակ, դաստիարակի օգնական, երեխայի հետ աշխատող այլ անձ) ծնողներից հետադարձ կապ է ստանում ուսումնական գործընթացի ընթացքի վերաբերյալ։ Դաստիարակը որոշում է ծնողների գոհունակության աստիճանը, հոգ է տանում նրանց ներգրավվածությունը մեծացնելու մասին և ծնողների դիմելու հիման վրա համապատասխան փոփոխություններ է կատարում կրթական գործընթացի պլանավորման կամ իրականացման մեջ։ Առցանց միացյալ հանդիպման շրջանակներում դաստիարակը նպաստում է ծնողների միջև հաղորդակցությանը, փորձի, ապրումների կամ տպավորությունների փոխանակմանը։

Նպատակահարմար է, որ ուսումնական տարվա կիսամյակի մեկնարկից ոչ ուշ, քան 1 շաբաթ առաջ նախադպրոցական հաստատությունը ծնողների հետ կազմակերպի երկու նստաշրջանով կողմնորոշիչ հանդիպում։ Հանդիպման նպատակն է նախապատրաստել ծնողներին նոր ուսումնական տարվան, որտեղ նրանք կծանոթանան նախադպրոցական կրթական ծառայության տրամադրման վարչական խնդիրներին, բոլոր այն պարտականություններին և լիազորություններին, որոնք կապված են հաստատության գործունեության հետ (հատկապես համավարակի պայմաններում)։ Մյուս կողմից, կարևոր է, որ նախադպրոցական հաստատությունը համոզվի, որ ծնողները մանրամասնորեն տեղեկացված են նախադպրոցական կրթական ծառայության մատուցման ձևերի և ռազմավարության մասին։

Անհրաժեշտության դեպքում նախադպրոցական հաստատությունը կարող է նշանակել լրացուցիչ անհատական հանդիպում սահմանափակ հնարավորություն կամ հատուկ կրթական կարիք ունեցող երեխայի ծնողի հետ՝ նրա երեխայի վիճակով սահմանված կարիքները հատուկ քննարկելու և կոնկրետ տեղեկություններ տրամադրելու նպատակով:

## Նախադպրոցական կրթական ծառայության տրամադրման հեռավար ձևը

Նախադպրոցական կրթական ծառայության տրամադրման հեռավար ձևը նորույթ է, որը պայմանավորել է համավարակային իրավիճակը: Հետևաբար, այն, որպես կրթական գործընթացի նոր ձև, կապված է բազմաթիվ մարտահրավերների հետ: Թեպետ, հեռավար ձևը մի շարք հարցերի նախատեսման և գործունեությունը ճիշտ վարելու դեպքում, նպաստում է երեխայի սովորելու և զարգացումը խթանելու գործընթացի պահպանմանը:

Նախադպրոցական կրթական ծառայության տրամադրման հեռավար ձևը վաղ տարիքի երեխայի զարգացման և նրա ծնողներին աջակցելու կրթական գործընթաց է, որն իրականացվում է համացանցի և էլեկտրոնային տարբեր ռեսուրսների միջոցով: Հեռավար ձևի ընթացքում երեխան տան միջավայրում, ծնողի բարձր ներգրավմամբ և նախադպրոցական կրթական ծառայություն տրամադրողի աջակցությամբ մասնակցում է նախադպրոցական հաստատության կողմից կազմակերպված գործողություններին (փոքր խմբեր, անհատական հանդիպումներ): Միևնույն ժամանակ, դաստիարակը հետևողական պարբերականությամբ ծնողներին տրամադրում է տարիքին համապատասխան գործողություններ / հանձնարարականներ:

Հեռավար ձևի իրականացման ընթացքում կրթական անձնակազմը հետևում է Ազգային ուսումնական պլանով/ծրագրով առաջարկված ակտիվություններին, իսկ հատուկ կրթական կարիք ունեցող երեխայի դեպքում՝ նրա համար կազմակերպում անհատական հանդիպումներ (նպատակներ և գործողություններ), ինչը պլանավորված և հետևողական գործընթաց է: Այս գործընթացը ծառայում է նպաստելու երեխայի (երեխաների) ուսմանը և զարգացմանը, կրթական գործընթացի և նախադպրոցական կրթական ծառայության և դրա հետ կապի շարունակականությանը: Միևնույն ժամանակ, հեռավար ձևը նպաստում է ծնողների մասնակցությանը կրթական գործողություններին, ինչն իր հերթին դրական ազդեցություն է ունենում երեխայի և ծնողի միջանձնային հարաբերությունների զարգացման, նախադպրոցական հաստատության կողմից առաջարկվող շաբաթական ժամանակացույցի համաձայն ծնողների կողմից գործողությունների իրականացման վրա և այլն: Այս եղանակով երեխան ծանոթանում է հաղորդակցության այլընտրանքային ձևերին և հարաբերություններ է պահպանում դաստիարակի և իր տարիքի երեխաների հետ:

### *Շաբաթվա ժամանակացույցի կազմում և տրամադրում*

Նախադպրոցական կրթական ծառայության տրամադրման գործընթացում էլ ավելի կարևոր է, որ ծնողին նախապես տրամադրվի յուրաքանչյուր շաբաթվա ժամանակացույցը, որը հավասարակշռված ամենօրյա ժամանակացույց է և առաջարկվող գործողություններ:

Նախադպրոցական կրթության հեռավար ծառայություն մատուցելիս դաստիարակը պարտավոր է ծնողին հաջորդ շաբաթվա գործունեության գրավոր ժամանակացույցը տրամադրել յուրաքանչյուր շաբաթվա ուրբաթ օրը, մինչև ժամը 18:00-ն: Այս գործունեությունն ապահովում է ծնողի և երեխայի իրազեկվածություն, նրանց պատրաստակամության և ներգրավվածության բարձրացում կրթական գործընթացում: Հաջորդ շաբաթվա գործունեությունը մշակելիս, անհրաժեշտության դեպքում,

դաստիարակը սահմանում է հատուկ կրթական կարիք ունեցող երեխայի համապատասխանաբար ձևափոխված ակտիվությունները և կիսվում դրանցով ծնողների հետ։

## Առցանց հանդիպումներ երեխաների փոքր խմբերի հետ

Այս տիպի խմբային հանդիպումների հիմնական նպատակը այն հուզական և սոցիալական կապի պահպանումն է, որն ամենակարևորն է երեխաների համար։ Այս հանդիպման ընթացքում դաստիարակը փորձում է խրախուսել շփումը երեխաների միջև, միմյանց հետ նորությունների, փորձի և հույզերի փոխանակումը։ Դաստիարակը երեխաներին առաջարկում է խմբային գործողություն, որը հիմնված է նախադպրոցական կրթական ծառայության ուսումնական պլանի/ծրագրի վրա։ Այս կերպ նա նպաստում է երեխաների շրջանում տեղեկատվության և իրավասության փոխանակմանը, տեղեկություններ է ստանում իրեն առաջարկվող ծրագրում երեխայի ներգրավվածության աստիճանի մասին։ Երեխաների հետ հանդիպումն իրականացվում է ծնողների բարձր ներգրավվածությամբ։

Փոքր խմբի առցանց հանդիպումներ պլանավորելիս՝ անհրաժեշտ է, որ դաստիարակն այնպես համալրի խմբերը և փոխի նրանց կազմը, որպեսզի յուրաքանչյուր երեխա որոշակի ժամանակահատվածում կարողանա շփվել իր խմբի բոլոր անդամների հետ (օր.՝ խմբի համալրումը կարող է փոխվել ամեն շաբաթ)։

Փոքր խմբային գործողություններ պլանավորելիս և հանդիպումներ անցկացնելիս՝ դաստիարակը չպետք է անտեսի հատուկ կրթական կարիք ունեցող երեխաների և նրանց ծնողների կարիքները։

Նույնիսկ այն դեպքում, եթե, երեխայի հնարավորությունների նախատեսմամբ, նա ի վիճակի չէ ակտիվորեն մասնակցել հեռավար ուսուցման գործընթացին, նա կարող է թեկուզ պասիվ հաճախել առցանց փոքր խմբում պլանավորված ակտիվությունների։ Սա դրական ազդեցություն կունենա նրա հոգե-հուզական վիճակի, սոցիալական կապերի շարունակականության և պատկանելության զգացողության վրա։ Միևնույն ժամանակ, խմբային ակտիվությանը երեխայի մասնակցության գնահատման հիման վրա դաստիարակն առավելապես կարող է որոշել երեխայի հետ լրացուցիչ անհատական հանդիպումների անհրաժեշտությունը կամ ծնողի կողմից անհատական աշխատանքի իրականացումը։

Այս հանդիպման համար առաջարկվող ժամանակը 15-20 րոպե է։ Երեխաների թիվն առցանց փոքր խմբում չպետք է գերազանցի հինգը։

**Իրավիճակային օրինակ**

Դաստիարակը կապվում է երեխաների հետ, ողջունում նրանց, հարցնում որպիսությունը, ներկայացնում օրվա թեման և տրամադրում տեղեկություններ տարբեր ձևերով (շնորհանդես, ցուցադրական ստեղծագործական գործունեություն և այլն)։ Այնուհետև դաստիարակը երեխաներին առաջարկում է «Ասոցիացիա» խաղը և օրվա թեմայից տալիս է երկու-երեք նախապես պատրաստված հարցեր/ասոցիացիաներ (օրինակ՝ կենդանու անուն տվեք, որն ունի փշեր ու խնձոր է սիրում)։

Դաստիարակը փոքր խմբի անդամներին պետք է հնարավորություն տա միմյանց հետ քննարկելու, համաձայնության գալու վերջնական պատասխանի շուրջ և միայն դրանից հետո պատասխանել դաստիարակի կողմից տրված հարցին։

Այս գործունեությունը դաստիարակին հնարավորություն է տալիս պարզել. որքանով է երեխան տնային միջավայրում զբաղվում իր առաջարկված գործողություններով, ինչում ունի երեխան ուժեղանալու և աջակցության կարիք, ինչպես է նա համագործակցում և շփվում իր տարիքի մարդկանց հետ, արդյոք նա կարող է դատողություն անել, արտահայտել իր սեփական կարծիքը և կիսվել դրանով, որքանով զգայուն է հաջողության և ձախողման նկատմամբ: Հանդիպման ավարտին մանկավարժը շնորհակալություն է հայտնում երեխաներին ներգրավվածության և մասնակցության համար, նրանց հրաժեշտ է տալիս:

## *Առցանց անհատական հանդիպում երեխայի հետ՝ ծնողի աջակցությամբ և ներգրավվածությամբ*

Կարևոր է, որ առցանց ձևի ժամանակ դաստիարակը երեխաների հետաքրքրությունն ու մոտիվացիան բարձրացնելու նպատակով նախատեսի նրանց տարիքային առանձնահատկություններն ու հետաքրքրությունները: Դաստիարակը պարտավոր է ծնողի ընդգրկմամբ առնվազն շաբաթը մեկ անգամ կազմակերպել առցանց անհատական հանդիպում երեխայի հետ և առաջարկել պատրաստել փոքրիկ նախագիծ՝ հիմնվելով ամսվա թեմայի վրա, որը ներկայացվում է խմբի առցանց հանդիպմանը:

- ***Տվյալ հանդիպման համար երաշխավորվող ժամանակը 10-20 րոպե է:***

## *Առցանց հանդիպումներ երեխաների մեծ խմբերի հետ*

Այսպիսի խմբային հանդիպման հիմնական նպատակը երեխաների և դաստիարակի միջև հուզական կապի պահպանումն է, տոնական տրամադրություն ստեղծելը, դրական հույզերով կիսվելը, ինքնադրսևորումը, ստեղծագործական հմտությունների զարգացումը, թիմային աշխատանքի զգացումը, ամսվա թեմայի ամփոփումը և ուսումնական պլանի բազմազանացումը: Ամիսը մեկ անգամ դաստիարակը պետք է տրամադրի ամսվա թեմային համապատասխան շնորհանդեսային ակտիվություն:

- ***Տվյալ հանդիպման համար երաշխավորվող ժամանակը 20-30 րոպե է ամիսը մեկ անգամ:***

**Իրավիճակային օրինակ**

Դաստիարակը պլանավորել է աշնանային թեմայով ակտիվություն՝ «Սիրելի միրգը»:

Դաստիարակը խմբի անդամներին հնարավորություն է տալիս ընտրել մրգերից որևէ մեկը և իրենց նախընտրելի ձևով (զգեստներ, պարագաներ, դիմահարդարում, ապլիկացիա և այլն) այն ներկայացնել խմբի անդամներին և դաստիարակին: Դաստիարակը պետք է յուրաքանչյուր երեխայի արտահայտվելու հնարավորություն տա: Նա հարցեր է տալիս. Ինչո՞ւ է սիրում իր ընտրած միրգը: Որո՞նք են դրա օգտակար հատկությունները, և ի՞նչ նյութեր են օգտագործվել դրա ստեղծման համար: Խորհուրդ է տրվում, որ դաստիարակը նշված ակտիվության համար ինքը ևս պատրաստվի, անվանի իր նախընտրած միրգը, դրա մասին շնորհանդես պատրաստի:

## Առցանց անհատական հանդիպումներ ծնողների հետ

Հեռավար ձևի ժամանակ կարևոր է կանոնավոր անհատական շփումը դաստիարակի և ծնողի միջև, որի նպատակն է ծնողին աջակցելն ու խրախուսելը: Այս տիպի հանդիպումները հատկապես կարևոր են հատուկ կրթական կարիք/սահմանափակ հնարավորություն ունեցող երեխաների ծնողների հետ: Դաստիարակը ծնողին տրամադրում է տեղեկատվություն երեխայի տարիքային և անհատական առանձնահատկությունների մասին, նրան առաջարկում զարգացնող ակտիվություններ և հանձնարարականներ, ինչը հետագայի համար կապահովի երեխայի նախապատրաստում դպրոցի համար: Հանդիպումը տեղի է ունենում այսպիսի հաճախականությամբ. ամսական առնվազն 2 հանդիպում, հնարավոր է նաև լրացուցիչ հանդիպում՝ ըստ անհրաժեշտության (հատկապես հատուկ կրթական կարիք ունեցող երեխաների դեպքում):

- ***Տվյալ հանդիպման համար առաջարկվող ժամանակը 10 րոպե է:***

Եթե ծնողը դասիարակի հետ կիսվում է մտահոգություններով այնպիսի հարցերի վերաբերյալ, որոնք կապված են երեխայի հուզական ոլորտի, վարքի, խոսքի հետ, ապա դաստիարակը պարտավոր է ծնողին ուղղորդել հոգեբանի/մանկաբույժի/հատուկ մանկավարժի մոտ (եթե հաստատությունը չունի այդպիսի մասնագետ, ապա պետք է գտնի և ուղղորդի արտաքին մասնագետների մոտ):

## Առցանց միացյալ հանդիպումներ ծնողների հետ

Ծնողներին աջակցելու և նրանց այդ առումով պատրաստելու նպատակով նախադպրոցական կրթական ծառայություններ մատուցող հաստատությունը պարտավոր է երեք ամիսը մեկ կազմակերպել կրթական, տեղեկատվական առցանց հանդիպումներ ծնողների հետ:

Նախադպրոցական հաստատության կրթական անձնակազմը և վարչակազմի ներկայացուցիչը պլանավորում են և հանդիպում ծնողների հետ՝ նրանց տեղեկացնելու կրթական գործընթացին վերաբերող փոփոխությունների կամ նորությունների մասին: Բացի այդ, դաստիարակը, նախադպրոցական հաստատության հոգեբանը, մանկաբույժը կամ հատուկ մանկավարժը կազմակերպում են կրթական նստաշրջան՝ ծնողներին աջակցելու համար (օրինակ ՝ շարժողական գործողություններ տան պայմաններում, սթրեսի կառավարում, վարքի կառավարում, երեխայի առողջական վիճակի որոշում և այլն):

Առցանց միացյալ հանդիպումների ընթացքում դաստիարակը ծնողներից հետադարձ կապ է ստանում՝ կապված ուսումնական գործընթացի առաջընթացի հետ, այնուհետև որոշում է ծնողների գոհունակության աստիճանը, հոգ է տանում նրանց ներգրավվածության ավելացման մասին և դիմելու հիման վրա փոփոխություններ է կատարում ծրագրային մասում:

Առցանց միացյալ հանդիպման շրջանակներում դաստիարակն օժանդակում է ծնողների միջև հաղորդակցությանը և հույզերով կիսվելուն:

- ***Տվյալ հանդիպման համար առաջարկվող ժամանակը 60-90 րոպե է:***

Կիսամյակի սկզբից ոչ ուշ, քան 1 շաբաթ առաջ, Նախադպրոցական կրթական ծառայությունների ծրագիրը պարտավոր է կազմակերպել երկու նստաշրջանով կողմնորոշիչ հանդիպում ծնողների հետ, որի նպատակն է նախապատրաստել ծնողներին նոր ուսումնական տարվա համար. օրակարգը հետևյալն է.
ա) նախադպրոցական կրթական ծառայությունների վարչական մասի հետ ծանոթացում՝ 90 րոպե,
բ) ծրագրային մասի ծանոթացում՝ 90 րոպե:

## Նախադպրոցական կրթական ծառայության տրամադրման հիբրիդային ձը

Նախադպրոցական կրթական ծառայությունը հիբրիդային ձևով տրամադրելիս մասամբ պահպանված է առկա ձևը, միևնույն ժամանակ, ծառայությունն ապահովված է նաև հեռավար ձևով:

Այստեղ առաջարկվում է հիբրիդային ձևի երկու տարբերակ, որոնք ենթադրում են երեխաների բաշխում ըստ շաբաթվա օրերի կամ օրվա հատվածների: Նախադպրոցական հաստատության կողմից ընդունելի հիբրիդային ձևի ընտրությունը կախված է ֆիզիկական միջավայրից, մարդկային ռեսուրսներից, երեխաների քանակից և նրանից, թե որքանով կարող է այն ապահովել սահմանված կանոնակարգերի կատարում:

Ստորև նկարագրված է հիբրիդային ձևի երկու տարբերակ.

**I տարբերակ**. Երեխաները շաբաթվա մեջ 5 օր ներգրավված են նախադպրոցական առկա ձևի ծառայությունների մեջ՝ կես դրույքանոց ժամանակացույցով: Յուրաքանչյուր դրույքի տևողությունն է օրական 5 ժամ՝ երկուշաբթիից ուրբաթը ներառյալ:

**II տարբերակ**. Երեխաները շաբաթական 2 օր ստանում են լրիվ դրույքով նախադպրոցական կրթության առկա ձևի ծառայություններ, իսկ մնացած 3 օրերը ներգրավված են հեռավար գործունեության մեջ (փոքր խմբեր, անհատական հանդիպումներ):

Երաշխավորվում է լրիվ դրույքով երեխաներին բաշխել շաբաթվա օրերի վրա՝ ըստ տարիքային խմբերի: Անհրաժեշտության դեպքում նախադպրոցական հաստատությունը պետք է գործի նաև շաբաթ օրը: Տե՛ս ստորև բերված նմուշային աղյուսակը.

| Խումբ | Հիբրիդային ձևի առկա մաս | Հիբրիդային ձևի հեռավար մաս |
|---|---|---|
| | Շաբաթվա օրեր | Շաբաթվա օրեր |
| 2-3 տարեկանների խումբ<br>3-4 տարեկանների խումբ | երկուշաբթի, երեքշաբթի | չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ |
| 4-5 տարեկանների խումբ | չորեքշաբթի, հինգշաբթի | երկուշաբթի, երեքշաբթի, ուրբաթ |
| 5-6 տարեկանների խումբ | ուրբաթ, շաբաթ | երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի |

### Շաբաթվա ժամանակացույցի մշակում և տրամադրում

Հիբրիդային կրթական գործընթացի ցանկացած տարբերակի յուրաքանչյուր շաբաթվա ուրբաթ օրը մինչև 18:00-ն նախադպրոցական հաստատությունը պարտավոր է ծնողին տրամադրել երեխայի խմբի կրթական անձնակազմի (դաստիարակ, դաստիարակի օգնական) կողմից գրված հաջորդ շաբաթվա ամենօրյա գործունեության գրավոր ժամանակացույցը: Շաբաթվա ժամանակացույցին ծանոթանալը ծնողին և երեխային հնարավորություն է տալիս նախապես պատրաստվել և տրամադրվել այն կրթական գործունեությունների համար, որոնք համապատասխանեցված են երեխայի տարիքային

հետաքրքրություններին և կարողություններին: Ծնողին շաբաթվա ժամանակացույցի մասին տեղեկացնելը օգնում է նրան ծանոթանալ, մի կողմից՝ թե ինչ ակտիվությունների մեջ է ներգրավված երեխան նախադպրոցական հաստատությունում, յուրաքանչյուր օրվա վերջում լսել օրվա տպավորությունները նրանից, իսկ մյուս կողմից՝ խրախուսել երեխայի մոտիվացիան, ստեղծել պատրաստակամություն ՝ կապված հաջորդ օրվա պլանի հետ։

Այս դեպքում նույնպես շաբաթվա ժամանակացույցը նախադպրոցական հաստատության կողմից սահմանվում է ուսումնական ծրագրի միջոցով (թեմատիկ ուսումնական պլան, խաղ) կամ հիմնվում է այն ծրագրերի վրա, որոնք իրականացվել են սովորական համատեքստում: Հատուկ կրթական կարիք ունեցող և սահմանափակ հնարավորություն ունեցող երեխայի դեպքում շաբաթվա ակտիվություններ են ստեղծվում՝ համաձայն նրա անհատական կարիքների և զարգացման ծրագրի:

Հիբրիդային ձևի առաջին տարբերակի համաձայն՝ դաստիարակն ամսական երկու անգամ անհատական առցանց հանդիպում է անցկացնում խմբի յուրաքանչյուր անդամի հետ՝ ծնողի բարձր ներգրավվածությամբ և օգնում է նրանց պատրաստել նախագիծ ամսվա թեմայի վերաբերյալ, որը նախատեսված է Ազգային ուսումնական պլանով: Շնորհանդեսը երեխան կանցկացնի նախադպրոցական հաստատությունում, խմբով (առկա մասի ժամանակ):

- ***Տվյալ հանդիպման համար առաջարկվող ժամանակը 10-20 րոպե է:***

## *Առցանց անհատական (հիբրիդային, 1-ին տարբերակ) կամ առցանց փոքր խմբերում հանդիպում երեխաների հետ (հիբրիդային, 2-րդ տարբերակ)՝ ծնողների աջակցությամբ և ներգրավվածությամբ*

Հիբրիդային ձևի երկրորդ տարբերակի համաձայն՝դաստիարակը շաբաթական 3 օր առցանց մասի իրականացման ժամանակ ծնողի բարձր ներգրավմամբ հանդիպում է երեխաներին փոքր խմբերում (յուրաքանչյուր խմբում մասնակիցների թիվը կազմում է 2-5 մասնակից): Առցանց փոքր խմբերում երեխաների ներգրավվածությունը նպաստում է դաստիարակի և երեխայի միջև, ինչպես նաև, երեխայի և նրա տարիքային խմբի անդամների միջև հուզական կապի պահպանմանը և տարրական ակադեմիական կարողությունների զարգացմանը:

Փոքր առցանց խմբերում ներգրավվելիս՝ մանկավարժը պետք է երեխաներին առաջարկի հատուկ գործողություններ, որոնք կրթական ծրագրով/պլանով ներառված են, ուսումնական պլանով նախատեսված են և համապատասխան են ամսվա թեմատիկային:

- ***Տվյալ հանդիպման համար առաջարկվող ժամանակը 10-20 րոպե է:***

## *Առցանց անհատական հանդիպումներ ծնողի հետ*

Նախադպրոցական կրթական գործընթացը հիբրիդային առաջին տարբերակի ձևով անցկացնելիս՝ ուսուցչական անձնակազմը շփվում է ծնողի հետ և, անհրաժեշտության դեպքում, պլանավորում առցանց կամ հեռախոսային հանդիպում նրա հետ: Հանդիպման ընթացքում դաստիարակը ծնողին ներկայացնում է իր երեխայի զարգացման դինամիկան, խոսում է երեխայի ուժեղ կողմերի և այն կարիքների մասին, որոնցում նա ուժեղացման և աջակցության կարիք ունի: Անհրաժեշտության դեպքում, դաստիարակը պարտավոր է կապվել ծնողի հետ և նրա հետ կիսվել երեխայի ձեռքբերումներով: Տվյալ հաղորդակցության նպատակն է բարձրացնել նրա տեղեկացվածությունը, ավելացնել նրա ներգրավվածությունը նախադպրոցական կրթական ծառայության գործընթացում և նպաստել նրան լինել պոզիտիվ դրական ծնող:

- ***Տվյալ հանդիպման համար առաջարկվող ժամանակը 10-20 րոպե է:***

Հիբրիդային ձևի երկրորդ տարբերակի համաձայն, դաստիարակի համար կարևոր է ծնողի հետ կանոնավոր, անհատական շփում ունենալը, որի նպատակն է ծնողին աջակցելը և խրախուսելը: Դաստիարակը ծնողին տրամադրում է տեղեկատվություն երեխայի տարիքի և անհատական առանձնահատկությունների վերաբերյալ, առաջարկում է նրան զարգացնող համապատասխան ակտիվություն և հանձնարարականներ, որոնք ապագայի համար կապահովեն երեխայի նախապատրաստում դպրոցի համար հետևյալ հաճախականությամբ. ամսական առնվազն 2 հանդիպում (անհրաժեշտության դեպքում լրացուցիչ):

## ***Առցանց միացյալ հանդիպումներ ծնողների հետ***

Հիբրիդային ձևի ցանկացած տարբերակի ներդրման դեպքում ծնողներին աջակցելու և ամրապնդելու նպատակով նախադպրոցական հաստատությունը պարտավոր է երեք ամիսը մեկ անգամ կազմակերպել կրթական, տեղեկատվական տիպի առցանց միացյալ հանդիպումներ ծնողների հետ:

Նախադպրոցական հաստատությունների ներկայացուցիչները (դաստիարակ և վարչակազմի ներկայացուցիչ) պլանավորում են հանդիպում և հանդիպում ծնողների հետ, ծանոթացնում նրանց ուսումնական գործընթացին վերաբերող փոփոխությունները և նորությունները։ Բացի այդ, դաստիարակը, հաստատության հոգեբանը, մանկաբույժը կամ հատուկ մանկավարժը կրթական նստաշրջան են կազմակերպում ծնողներին այդ առումով ուժեղացնելու համար (օրինակ՝ շարժողական ակտիվություններ տնային պայմաններում, սթրեսի կառավարում, վարքի կառավարում, երեխայի առողջական վիճակի նույնականացում և այլն):

Առցանց միացյալ հանդիպումների ընթացքում դաստիարակը ծնողներից հետադարձ կապ է ստանում կրթական գործընթացի վերաբերյալ: Դաստիարակը որոշում է ծնողների գոհունակության աստիճանը, հոգ տանում նրանց ներգրավվածության բարձրացման մասին և դիմելու հիման վրա փոփոխություն է կատարում ծրագրային մասում։ Առցանց միացյալ հանդիպման շրջանակներում դաստիարակը խթանում է ծնողների միջև շփումը և հույզերի փոխանակումը։

- ***Տվյալ հանդիպման համար առաջարկվող ժամանակը 60-90 րոպե է:***

Ուսումնական տարվա կիսամյակի մեկնարկից ոչ ուշ, քան 1 շաբաթ առաջ նախադպրոցական հաստատությունը պարտավոր է ծնողների հետ կազմակերպել երկու նստաշրջանով կողմնորոշիչ հանդիպում, որի նպատակն է նախապատրաստել ծնողներին նոր ուսումնական տարվան:

Օրակարգը հետևյալն է.
ա) նախադպրոցական կրթական ծառայությունների վարչական մասի ծանոթացում՝ 90 րոպե,
բ) ծրագրային մասի ծանոթացում՝ 90 րոպե:

# ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀՈՒԶԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ COVID 19-ՈՎ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

**Ուսումնական գործընթացի սկիզբը, դրա հետ կապված փոփոխությունները, ծնողից բաժանվելը, անծանոթ մարդկանց հետ ծանոթանալը, օտար միջավայրում մնալը, նոր կանոններին ընտելանալը, - սա ընդամենը մի փոքր ցանկն է նրա, ինչը երեխան հաղթահարում է առաջին անգամ կրթական հաստատություն գնալու դեպքում: COVID 19-ով հարուցված համավարակի պայմաններում տվյալ նորություններին ավելանում են լրացուցիչ սթրեսային գործոններ, ինչպիսիք են սրված ուշադրությունը որոշակի հարցերի նկատմամբ (ջերմության չափում, ախտահանիչ միջոցների օգտագործում), ծնողների անհանգստության ավելացում, դաստիարակի ավելացած անհանգստություն, մի շարք դեպքերում արդեն առկա սովորական առօրյա գործունեությունների խախտում (նրանց համար, ովքեր չէին հաճախում մանկապարտեզ) և արդյունքում երեխայի համար կրթական գործընթացն էլ ավելի սթրեսային է, քան այլ ժամանակ էր:**

Ինչպես նաև, ծնողների մեծ մասը անհանգիստ է երեխայի՝ կրթական հաստատություն (նախադպրոցական հաստատություն, դպրոց) գնալուց առաջ, հատկապես այն ժամանակ, երբ երեխան առաջին անգամ է հաճախելու հաստատություն: Ավելի քիչ անհանգստություն է բնորոշ այն ծնողներին, որոնց երեխաներն արդեն հաճախում էին նախադպրոցական հաստատություն կամ դպրոց: COVID 19-ի համավարակով հարուցված վիճակի պատճառով նույնիսկ այն երեխաները, որոնք հաճախում էին և ընտելացած էին նախադպրոցական հաստատության օրվա ռեժիմին, մի քանի ամսով դուրս են մնում իրենց սովորական միջավայրից, գործունեությունից, առօրեական գործողություններից, ինչը գրեթե հավասարվում է նրանց առաջին անգամ նախադպրոցական հաստատություն գնալուն, ուստի ծնողները նորից են անհանգստանում: Պետք է նկատի ունենալ նաև, որ այն միջավայրը, ուր պետք է վերադառնան երեխաները, որոշակիորեն տարբերվում է սովորական, ծանոթ միջավայրից: Հետևաբար, նոր ուսումնական տարվան նախապատրաստվող յուրաքանչյուր ծնող և երեխա որոշակի աջակցության կարիք ունի, որպեսզի նախապես ծանոթանան մի շարք հարցերի, ուսումնական գործընթացի հետ կապված պատշաճ սպասումներ ձևավորելու և պատրաստ լինի գործելու համավարակի ստեղծած անսովոր կանոնների և կանոնակարգերի շրջանակներում:

## *Ծնողի նախապատրաստում ուսուՃական գործընթացի համար*

Նախադպրոցական հաստատությունը պետք է ծնողին նախօրոք ծանոթացնի տեղեկատվությունը նախադպրոցական հաստատության կողմից առաջարկվող նախադպրոցական կրթական ծառայությունների ձևի և ռազմավարությունների մասին (տե՛ս «Նախադպրոցական կրթական ծառայության տրամադրման ձևերը՝ COVID 19-ի պայմանների նախատեսմամբ» գլուխը), ինչպես նաև, այն ընդհանուր կանոնները, փոփոխված աշխատանքային ռեժիմը, որը հիմնվում է Վրաստանի գրավյալ տարածքներից տեղահանված անձանց, աշխատանքի, առողջապահության և սոցապահովման նախարարության կանոնակարգերով սահմանված հանձնարարականներին:

COVID 19-ով հարուցված իրավիճակի նախատեսմամբ՝ նախադպրոցական կրթական ծառայության տրամադրման ձևը տարվա ընթացքում կարող է տարբեր լինել և նաև իրականացվել անսովոր ձևով (օրինակ, եթե հաստատությունը նախադպրոցական կրթություն է տրամադրել հեռավար ձևով՝ ոչ լրիվ առկա դրույքով կամ հիբրիդային ձևով): Էական է, որ երեխան և նրա մասին հոգ տանող անձինք պատշաճ կերպով իրազեկված լինեն սպասվող փոփոխությունների մասին, ինչն ավելի կանխատեսելի կդարձնի ամենօրյա կյանքը և կձևավորի ինչպես երեխայի ընտանիքի անդամների, այնպես էլ նախադպրոցական ուսումնական հաստատության կրթական անձնակազմի պատշաճ պատրաստվածություն ու մոբիլիզացում: Սա, իր հերթին, կպայմանավորի, որ վաղ տարիքի երեխաների համար ապահովված լինեն սոցիալ-հուզականորեն պաշտպանված և կանխատեսելի ֆիզիկական, վիրտուալ և սոցիալական տարածքներ/միջավայր:

## *Կրթական գործընթացի սկիզբը հնարավորինս առանց ցավի կառավարելու համար կարևոր է, որ նախադպրոցական հաստատությունը նախատեսի հետևյալ հանձնարարականները.*

- Ծնողին ծանոթացրե՛ք նախադպրոցական հաստատությունների այն ընդհանուր կանոնները, որոնք սահմանված են Վրաստանի գրավյալ տարածքներից տեղահանված անձանց, աշխատանքի, առողջապահության և սոցապահովման նախարարության կողմից:
- Ծնողին տեղեկություններ տրամադրե՛ք նախադպրոցական կրթական ծառայության տարբեր (առկա, հիբրիդային, հեռավար) ձևերով տրամադրման մասին: Բացատրե՛ք նրան, թե ինչու է հենց այս ձևը ընտրվել ձեր հաստատության համար, և տրամադրե՛ք մանրամասն տեղեկություններ ուսումնական գործընթացի իրականացման այն ձևի վերաբերյալ, որ կիրառվում է նախադպրոցական հաստատության կողմից:
- Ծնողին ծանոթացրե՛ք փոփոխված առօրյան, ռեժիմը՝ ըստ նախադպրոցական կրթական ծառայության տրամադրման ձևերի (առկա, հիբրիդային, հեռավար):
- Ծնողին նախապես ծանոթացրե՛ք այն միջավայրը, որում երեխան կանցկացնի իր ժամանակի հիմնական մասը: Եթե դուք չեք կարող ապահովել ծնողի մուտքը շենք՝ ելնելով գործող կանոնակարգերից, կարող եք միջավայրի մասին տեղեկատվություն տրամադրել՝ օգտագործելով լուսանկարներ կամ տեսանյութեր: Քանի որ համավարակային իրավիճակի պատճառով կսահմանափակվի ծնողի մուտքը հաստատություն ինչպես ուսումնական գործընթացի սկզբում, այնպես էլ ուսումնական գործընթացի ժամանակ, հնարավոր է դա իրականացնել մինչև կրթական գործընթացի սկսվելը: Որոշ դեպքերում հնարավոր է օգտագործել ինտերնետը՝ ծնողին ծանոթացնել խմբերի տարածքները, ինչպես նաև մեկուսացման սենյակը:
- Ծնողի հետ կիսվե՛ք, թե ինչ ռազմավարություններ են օգտագործվելու երեխաների անվտանգությունը պահպանելու համար:
- Ծանոթացրե՛ք, թե ինչպես պետք է երեխայի համար ստեղծվի խթանող միջավայր առկա փոփոխությունների լույսի ներքո և ինչպես է ընթանալու կրթական գործընթացը:
- Տեղեկատվություն տրամադրե՛ք նախադպրոցական կրթության ուսումնական պլանում կատարված փոփոխությունների մասին, օրինակ՝ հիգիենայի մասին խոսելիս, խմբում քննարկե՛ք բակտերիաներից և վիրուսներից պաշտպանվելու միջոցները:
- Նախապես ծանոթացրե՛ք, թե որ դեպքերում կարող է նախադպրոցական կրթական ծառայության տրամադրման մեկ ձևը փոխարինվել մեկ այլ ձևով (օրինակ ՝ առկայից անցնել հիբրիդայինի և նմ.):
- Հեռավար կամ հիբրիդային ձևով նախադպրոցական կրթական ծառայություն պլանավորելիս կամ իրականացնելիս՝ ծնողին տեղեկացրե՛ք համապատասխան ժամանակացույցի մասին: Նախադպրոցական կրթական ծառայության հեռավար կամ հիբրիդային ձևով ապահովման դեպքում նախադպրոցական հաստատությունը ծնողին մանրամասն ծանոթացնում է ռազմավարությունները և ստեղծում նրա համապատասխան պատրաստակամություն՝ կապված նրա դերի և ներգրավվածության ինտենսիվության հետ:

- Կրթական գործընթացը հեռավար կամ հիբրիդային ձևով իրականացման դեպքում համոզվե՛ք, որ ծնողը գիտի, թե ինչպես պետք է ներգրավվի ընթացիկ գործընթացի մեջ և, անհրաժեշտության դեպքում, աջակցի տեխնոլոգիական միջոցների յուրացման հարցում (նշե՛ք հատուկ ծրագրեր, հղումներ, կայքեր, տրամադրե՛ք բանավոր կամ գրավոր հրահանգներ և հանձնարարականներ)։
- Համոզվե՛ք, որ ծնողը տեղեկատվություն է ստացել իրեն անհրաժեշտ բոլոր հարցերի վերաբերյալ։

Նախադպրոցական կրթական ծառայության տրամադրման ձևեր և ռազմավարություններ առաջարկելիս (եթե նախադպրոցական հաստատությունը ինչ-ինչ պատճառներով ի վիճակի չէ ընտրել սովորական լրիվ դրույքով առկա ձևը), ցանկալի է անցկացնել ծնողների հարցում և համագործակցությամբ ընտրել ուսումնական գործընթացի վերջնական ձևը։ Տե՛ս նաև. «Նախադպրոցական կրթական ծառայության տրամադրման ձևերը COVID 19-ի պայմանների նախատեսմամբ», ինչպես նաև՝ Հավելված № 4. Ծնողների համար ստեղծված նշման թերթիկի նմուշ)։

Ծնողի հուզական բարեկեցության համար գերադասելի է, որ նա նախապես ծանոթանա երեխայի դաստիարակի հետ, որը նրան կտրամադրի տեղեկատվություն ուսումնական գործընթացի ձևերի և ռազմավարությունների մասին։ Ցանկալի է, որ դաստիարակը ծնողին տեղեկատվություն տրամադրի այն մասին, թե որքան կարևոր է երեխայի համար պլանավորել հավասարակշռված առօրյա և օրվա ժամանակացույց և հետևել դրան։

Ուսումնական գործընթացը հեռավար ձևով իրականացնելու դեպքում նպատակահարմար է, որ ծնողը լավ տեղեկացված լինի և հասկանա, թե ինչու է կարևոր ըստ տրամադրված շաբաթվա ժամանակացույցի պահպանել երեխայի առօրյան։ Էական է նաև, որ նախադպրոցական հաստատությունը ծնողին լավ բացատրի, թե ինչ է ենթադրում ուսումնական գործընթացի հեռավար ձևը, ինչպիսին է նրանց ներգրավվածության և մասնակցության աստիճանն ինչպես առցանց, փոքր խմբերով, այնպես էլ առցանց անհատական հանդիպումներում։ Ծնողի մոտ պետք է մնա զգացողություն, որ երեխան էկրանի մոտ չի անցկացնում երաշխավորվող ժամանակից ավելի շատ ժամանակ, և որ անհրաժեշտ է, որ ծնողը / խնամողը երեխայի հետ ներգրավված լինի այս գործընթացում։

Երաշխավորվում է, որ նախադպրոցական հաստատությունը ծնողին խորհուրդ տա, որ երեխայի համար հատկացված լինի կենտրոնացված տարածք, որ հնարավորինս մեկ տեղից ծնողն ու երեխան ներգրավվեն առցանց գործողություններում՝ դա իր ներդրումը կունենա առօրյա գործողություններին երեխայի պատրաստման և պատրաստակամության բարելավման մեջ։

Կարևոր է, որ նախադպրոցական հաստատության ներկայացուցիչը (հատկապես դաստիարակը) իմանա երեխայի առանձնահատկությունների և հետաքրքրությունների մասին։ Սա հատկապես էական է COVID 19-ի պայմաններում, քանի որ որոշ երեխաների մոտ (այդ թվում սահմանափակ հնարավորություն և/կամ հատուկ կրթական կարիք ունեցողները) անհանգստության պատճառով կարող է սոցիալ-հուզական փոփոխություններ տեղի ունենան։ Ստորև աղյուսակում բերված են ընդհանուր հանձնարարականներ, որոնք կօգնեն ինչպես դաստիարակին, այնպես էլ ծնողին՝ ուշադրության արժանի նշաններ հայտնաբերելու և պատշաճ արձագանքելու համար։

Ցանկալի է, որ նախադպրոցական հաստատությունը, մասնավորապես երեխայի դաստիարակը ծնողին հանձնարարականներ տա՝ կապված երեխային նախապատրաստելու հետ։

Աղյուսակում նկարագրված են 1-18 տարեկան երեխաների և դեռահասների արձագանքները սթրեսային իրավիճակին և դրանց հաղթահարման տարբեր ռազմավարություններ։ Աղյուսակում բերված տեղեկատվությունը հիմնված է Կոլումբիայի համալսարանի և SAVE THE CHILDREN-ի կողմից հրատարակված մի փաստաթղթի վրա՝ «Երեխաների (1-18) կողմից վերապրած սթրեսին արձագանքելու սովորական արձագանքներ սթրեսից/ճգնաժամային իրավիճակից հետո կիրառվելիք հաղթահարման ռազմավարություններ»։

| Տարիք | Արձագանք սթրեսին | Աջակցության ռազմավարություններ |
|---|---|---|
| **1-5 տարեկան** | • **Ռեգրեսիվ արձագանքներ.** գիշերային էնուրեզ (քնի մեջ մեզի անզսպություն), մատների լիզում, մթության վախ, կենդանիների վախ, «հրեշներից» վախ, անծանոթ մարդկանց վախ:<br>• **Ֆիզիոլոգիական արձագանքներ.** ախորժակի կորուստ, շատակերություն, մարսողական համակարգի և միզուղիների խնդիրներ (լուծ, միզուղիների խնդիրներ), սրտխառնոց, քնի դժվարություններ և մղձավանջներ:<br>• **Զգացմունքային / վարքային արձագանքներ.** նյարդայնություն, դյուրագրգռություն, կամակորություն, անհնազանդություն, գերակտիվություն, տիկեր, խոսքի դժվարություններ, ծնողից բաժանվելու պատճառով անհանգստություն, կենտրոնանալու դժվարություն, ագրեսիվ վարք, տրավմատիկ իրավիճակի կամ փորձի ուռճացում կամ խեղաթյուրում: Տրավմատիկ /ճգնաժամային իրավիճակի փորձի մասին կրկնակի խոսել, օրինակ ` ես վախեցա, բժիշկը որ եկավ, բժիշկը որ եկավ, առաջ վախեցա, և այլն): | • Տրամադրե՛ք լրացուցիչ բանավոր աջակցություն և անհրաժեշտության դեպքում ապահովե՛ք ֆիզիկական հարմարավետություն (օրինակ` գրկել, կրծքին սեղմել):<br>• Ապահովե՛ք երեխային հարմարավետ քնի հետ կապված հարմար ռեժիմ (քնի ընթացքում, քնից առաջ գործողություններ և այլն):<br>• Հնարավորությո՛ւն տվեք և խրախուսեք՛ նրանց, որ արտահայտեն հույզերը խաղի և այնպիսի գործողությունների միջոցով, ինչպիսիք են նկարչությունը, դերախաղը, տիկնիկով խաղը, պատմվածքներ պատմելը իրենց փորձի մասին:<br>• Թո՛ւյլ տվեք երեխաներին անհրաժեշտության դեպքում ժամանակավորապես փոխել իրենց վարքը, օրինակ` խմբում նստել դաստիարակի կողքին, նստել ծնողների սենյակում:<br>• Հնարավորինս արագ վերականգնե՛ք ձեր երեխայի սովորական ռեժիմը:<br>• Անհրաժեշտության դեպքում ծնողի հետ կիսվե՛ք երեխայի հուզական վիճակի վերաբերյալ ձեր մտահոգություններով և խորհո՛ւրդ տվեք դիմել մասնագետի: |
| **5-11 տարեկան** | • **Ռեգրեսիվ արձագանքներ.** քույր-եղբայրների հետ մրցակցության կամ այլ երեխայի հետ ծնողի կամ այլ ավագի ուշադրություն գրավելու նպատակով չափազանցված կապվածություն, հաճախակի լաց, ղժգոհություն, խնդրում է մեծահասակների օգնություն և ներգրավվածություն այն ամենի մեջ, ինչն ինքնուրույն էր կատարում, օրինակ` խնդրում է, որ հագցնեն, կերակրեն:<br>• **Ֆիզիոլոգիական արձագանքներ.** գլխացավ, լսողության և տեսողության հետ կապված բողոքներ, հաճախ քորի առաջացում, սրտխառնոց, քնի խանգարում, մղձավանջներ,<br>• **Զգացմունքային / վարքային արձագանքներ.** դպրոցական ֆոբիա, հեռացում ընկերներից և փոքր խմբերից, ընտանիքի անդամների հետ շփման նվազում, դյուրագրգռություն, կանոնների չպահպանում, տարբեր տեսակի վախեր (օրինակ, որ ընտանիքի անդամներից մեկը կհիվանդանա, ինքը կհիվանդանա), ագրեսիվ վարք, կրկնակի խոսել իրեն տրավմա հարուցող երևույթի, փաստի, փործառության, կորստի կամ հույզերի մասին: | • Լրացուցիչ ուշադրությո՛ւն դարձրեք և ապահովե՛ք նրա ֆիզիկական հարմարավետությունը:<br>• Դրականորեն ամրապնդե՛ք երեխայի համար տարիքին համապատասխան վարքագիծը:<br>• Ժամանակավորապես մեղմե՛ք կամ նվազեցրե՛ք առաջադիմության և այլ ակտիվությունների հետ կապված պահանջները դպրոցում:<br>• Երեխային վստահեցրե՛ք, որ կարողությունները և կատարման որակը կվերադառնան (օրինակ, եթե նա դժվարանում է կենտրոնանալ և սովորել տագնապի պայմաններում, գովաբանե՛ք նրան և ասե՛ք, որ տվյալ գործողությունը միշտ իր մոտ լավ էր ստացվում, և համոզված եք, որ նա շուտով կրկին լավ կանի դա):<br>• Ապահովե՛ք կառուցքավորված, բայց ոչ խիստ պահանջող առօրյա գործունեություններ և պարտականություններ:<br>• Խրախուսե՛ք երեխային զբաղվել ֆիզիկական գործունեությամբ:<br>• Խմբում քննարկե՛ք հույզերի տարբեր տեսակներ և դրանց հաղթահարման ռազմավարություններ (օրինակ` խմբում քննարկե՛ք վախը և երեխաների ներգրավվածությամբ և քննարկմամբ դատողությո՛ւն արեք դրա հաղթահարման ռազմավարությունների մասին):<br>• Ապահովե՛ք խաղային ակտիվություններ հասակակիցների և մեծահասակների հետ:<br>• Դերախաղի ընթացքում խաղարկե՛ք հիգիենայի պահպանման և անվտանգության կանոնները:<br>• Անհրաժեշտության դեպքում ծնողի հետ կիսվե՛ք երեխայի հուզական վիճակի վերաբերյալ ձեր |

| Տարիք | Արձագանք սթրեսին | Աջակցության ռազմավարություններ |
|---|---|---|
| | | մտահոգություններով և խորհո՛րդ տվեք դիմել մասնագետի: |
| **11-14 տարեկան** | • **Ռեգրեսիվ արձագանք.** ավելացած շփում քույր-եղբայրների կամ այլ երեխայի հետ, ծնողի կամ այլ մեծահասակի ուշադրությունը գրավելու նպատակով, առօրյա գործունեություններին հետևելու և պատասխանատվությունները կատարելու դժվարություն:<br>• **Ֆիզիոլոգիական արձագանքներ.** գլխացավ, անհասկանալի ցավի գանգատ, չափից ավելի սնվել կամ ախորժակի կորուստ, աղեստամոքսային համակարգի բարդություններ, մաշկի խանգարումներ, քնի խանգարումներ:<br>• **Զգացմունքային / վարքային արձագանքներ.** հասակակիցների հետ գործունեություն ծավալելու դժվարություններ, ուսման ձեռքբերման մակարդակի անկում, դեստրուկտիվ վարք, նախասիրության և հանգստի նկատմամբ հետաքրքրության կորուստ (չի հետևում օրենքներին և կանոններին): Հասակակիցների, քույր-եղբայրների և ծնողների հետ շփման դժվարություններ, ձանձրույթ, ընկճախտ, հակասոցիալական վարք (օրինակ՝ գողություն, ստախոսություն և այլն): | • Լրացուցիչ ուշադրությո՛ւն դարձրեք, որը կարտահայտվի դրական շփման և տրամադրվածության մեջ, այլ ոչ թե՝ վերահսկողության:<br>• Սովորելու մեջ խափանման դեպքում երեխային համոզե՛ք, որ կվերադառնան նրա կարողունակությունը և կատարման որակը:<br>• Ժամանակավորապես մեղմացրե՛ք կամ փոխե՛ք պահանջները դպրոցում և տանը:<br>• Ապահովե՛ք կառուցքավորված, բայց ոչ խիստ պահանջող առօրյա գործունեություններ և պարտականություններ:<br>• Խրախուսե՛ք երեխային զբաղվել ֆիզիկական գործունեությամբ:<br>• Խմբում քննարկե՛ք հույզերի տարբեր տեսակներ և դրանց հաղթահարման ռազմավարություններ (օրինակ՝ խմբում քննարկե՛ք վախը և երեխաների ներգրավվածությամբ և քննարկմամբ դատողությո՛ւն արեք դրա հաղթահարման ռազմավարությունների մասին):<br>• Խրախուսե՛ք երեխային զբաղվել ֆիզիկական գործունեությամբ:<br>• Խրախուսե՛ք երեխային արտահայտել իր հույզերը բանավոր և գրավոր:<br>• Խրախուսե՛ք երեխային, որ մասնակցի տարբեր խմբային կամ դպրոցական գործողությունների, որոնք օգտակար կլինեն նրա հուզական բարեկեցությանը:<br>• Խրախուսե՛ք երեխայի սոցիալական փոխգործակցությունը:<br>• Հասակակիցների կամ մեծահասակների հետ խաղարկե՛ք անձնական հիգիենայի և անվտանգության կանոններ (երեխաների տարիքային խմբին համապատասխան խաղերով):<br>• Անհրաժեշտության դեպքում ծնողի հետ կիսվե՛ք երեխայի հուզական վիճակի վերաբերյալ ձեր մտահոգություններով և խորհո՛րդ տվեք դիմել մասնագետի: |
| **14-18 տարեկան** | • **Ռեգրեսիվ արձագանք.** պատասխանատու վարքի նվազում, տարիքին համապատասխան ծնողի վերահսկողության դեմ պայքարի նվազում, սոցիալական հետաքրքրությունների և գործունեության նվազում:<br>• **Ֆիզիոլոգիական արձագանքներ.** մարսողական համակարգի և միզապարկի գործողությունների հետ կապված բողոքներ, գլխացավ, մաշկի ցան, քնի խանգարում, անհասկանալի ֆիզիկական բողոքներ կամ ֆիզիկական խնդիրների հնարավոր գոյության չափազանցված վախ: | • Խրախուսե՛ք երեխային խոսել իր փորձի մասին ծնողների հետ:<br>• Ժամանակավորապես կրճատե՛ք նվաճումների ակնկալիքները դպրոցում և տանը:<br>• Խրախուսե՛ք ներգրավվածությունը / վերադարձը սոցիալական գործունեությանը:<br>• Խրախուսե՛ք երեխայի սոցիալական փոխգործակցությունը հասակակիցների կամ մեծահասակների հետ:<br>• Խրախուսե՛ք երեխային մասնակցել տարբեր խմբային կամ դպրոցական գործողությունների, որոնք կօգնեն նրա հուզական բարեկեցությանը: |

| Տարիք | Արձագանք սթրեսին | Աջակցության ռազմավարություններ |
|---|---|---|
| | • **Զգացմունքային / վարքային արձագանք.** ֆիզիկական գործունեության նկատելի փոփոխություն, օրինակ՝ կտրուկ ավելացված և նվազեցված ակտիվություն: Անլիարժեքության և անապահովության զգացողություններ, անօգնականության զգացողություն, հակասոցիալական վարք (գողություն կամ վանդալիզմ), պլանավորված գործունեության նկատմամբ կենտրոնացվածության խանգարում, ընկճախտ, մեկուսացում: | • Անհրաժեշտության դեպքում ծնողի հետ կիսվե՛ք երեխայի հուզական վիճակի վերաբերյալ ձեր մտահոգություններով և խորհո՛ւրդ տվեք դիմել մասնագետի: |

Յուրաքանչյուր երեխա անհատական է, ուստի, այս վարքագծերից բացի, հնարավոր է դրսևորվի այլ տեսակի վարք, որը նշված չէ թվարկման մեջ: Հետևաբար, դաստիարակը պետք մշտապես ուշադիր լինի, որպեսզի երեխայի թեկուզ չնչին փոփոխությունը աչքից չվրիպի:

Կարևոր է հիշել: Մի՛ կռվեք երեխայի հետ վերը նշված կամ այլ վարքագծի դրսևորման ժամանակ, փորձե՛ք պարզել նրա հուզական վիճակը երկխոսության, զրույցի միջոցով, խաղալով և օգնեք նրան՝ օգտագործելով վարքի դրական կառավարման և (կամ) հույզերի կարգավորման ռազմավարություններ:

Ցանկալի է, որ դաստիարակը ծնողին տեղեկատվություն տրամադրի՝ համաձայն ստորև բերված աղյուսակի.

### Առկա ձև

- ✓ Առավոտյան նախադպրոցական հաստատություն ներկայանալու ժամանակը:
- ✓ Նախադպրոցական հաստատություն մտնելիս իրականացվելիք առօրյա գործողություններ և ընթացակարգեր (որտեղ են բաժանվում ծնողը և երեխան միմյանցից և նմ):
- ✓ Ով կլինի դաստիարակը (ցանկալի է անցկացնել նախնական հանդիպում ծնողների հետ շփման կամ ինտերնետի միջոցով):
- ✓ Մոտավորապես քանի երեխա կլինի խմբում:
- ✓ Ինչպիսին կլինի խմբի առօրյան և գործունեությունը:
- ✓ Բակ դուրս տանելու ընթացակարգեր:
- ✓ Որտեղ և ինչ ձևով են նրանք սնվելու: Սնվելու ռեժիմը և ընթացակարգերը:
- ✓ Ձեռքերը լվանալու հետ կապված ընթացակարգեր:
- ✓ Հաստատությունից գնալու ժամանակը և ընթացակարգերը:

### Հեռավար ձև

- ✓ Ինչ տիպի առցանց հանդիպումներ կլինեն (անհատական, փոքր խմբերում, միավորված խմբերում):
- ✓ Հրահանգներ առցանց միացումների մասին:
- ✓ Որ հարթակն է օգտագործում կոնկրետ նախադպրոցական հաստատությունը առցանց հանդիպումների համար:
- ✓ Որ առցանց հանդիպման ընթացքում ինչպիսի ակտիվություններ են տրամադրվելու:
- ✓ Երեխան ինչպես պետք է ներգրավվի առցանց գործողություններում և, ինչ դեր ունի ծնողը այս գործընթացում:
- ✓ Որոնք կլինեն առցանց հանդիպումների առօրյան և ակտիվությունները:

Նախադպրոցական հաստատության համար ցանկալի է ունենալ անհրաժեշտ տեղեկատվություն տարբեր ծառայությունների վերաբերյալ, որպեսզի որոշակի կարիքների կամ բարձր դիսթրեսի դեպքում տեղեկացված ծնողին ուղղորդի համապատասխան որակավորված մասնագետի մոտ կամ գործակալություն՝ լրացուցիչ աջակցության համար:

***Հիբրիդային ձև***

- ✓ Կրթական գործընթացը առկա և հեռավար ձևերի միջոցով իրականացնելու՝ ըստ ժամանակի բաշխված աղյուսակ (շաբաթվա օրեր կամ օրվա հատվածներ):
- ✓ Առկա ձևի օրերի վերաբերյալ տեղեկատվություն համապատասխան աղյուսակից:
- ✓ Հեռավար ձևի օրերի վերաբերյալ տեղեկատվություն համապատասխան աղյուսակից:

Նպատակահարմար է, որ նախադպրոցական հաստատությունը տիրապետի անհրաժեշտ տեղեկատվության տարբեր ծառայությունների մասին, որպեսզի որոշակի կարիքների կամ բարձր դիսթրեսի դեպքում տեղեկացված ծնողին ուղղորդի համապատասխան որակավորված մասնագետի մոտ կամ գործակալություն՝ լրացուցիչ աջակցություն ստանալու համար:

## Ինչպես է դաստիարակը նախապատրաստվում կրթության մեկնարկին

Կարևոր է նախադպրոցական հաստատության ծառայության ներկայացուցիչը և հատկապես դաստիարակն իմանան երեխայի առանձնահատկությունները և հետաքրքրությունները: Սա հատկապես կարևոր է COVID 19-ի պայմաններում, քանի որ որոշ երեխաներ հնարավոր է հուզական սթրեսի պայմաններում աջակցության կարիք ունենան: Երեխան կարող է ունենալ որոշ վախեր, տագնապներ, որոնք դաստիարակը պետք է իմանա, որպեսզի դա նախատեսի ուսումնական գործընթացում.

Երաշխավորվում է.

- Մինչև ուսումնական տարվա սկիզբը դաստիարակը ծանոթանա տարբեր գրականության, աուդիո և վիդեո նյութերի, որոնցից երեխաների մոտ ի հայտ եկած սթրեսի մասին տեղեկություններ կստանա:
- Դաստիարակը ծանոթանա երեխաների մոտ սթրեսի կառավարմանը, նրանց հուզական աջակցությանը և դիմադրողականությունը բարձրացնելու ռազմավարություններին (կարդացե՛ք հոդվածներ տրամադրված հղումներում)*:
- Նախադպրոցական կրթական հաստատությունների ներկայացուցիչներն ու դաստիարակը հանդիպեն ծնողների հետ փոքր խմբերում (անհրաժեշտության դեպքում՝ անհատապես), որպեսզի ավելի շատ տեղեկություններ ստանան երեխայի մասին:
- Դաստիարակը տեղեկատվություն ձեռք բերի երեխայի կարիքների, հետաքրքրությունների, առանձնահատկությունների մասին և այն նկատի առնի ուսումնական գործընթացում:
- Դաստիարակը գտնի և ստեղծի խաղեր, որոնք վերաբերում են՝ ձեռքերի լվացման ընթացակարգերին, ձեռքերով դեմքին չդիպչելուն, հազալիս կիրառվելիք կանոններին (երեխաները ինչպես պետք է հազան, որպեսզի ուրիշների համար անհարմարավետություն և վտանգ չստեղծեն): Այս խաղերը պետք է զվարճալի և հետաքրքիր լինեն:

* https://drive.google.com/file/d/1i2yCZxo0dzguvNPYIsPO2pcD-xZd3_nz/view?usp=sharing

**Իրավիճակային օրինակ**

Ծնողը դաստիարակին տեղեկություն է հայտնում, որ 3-ամյա Նինին շատ է սիրում իր փափուկ «արջուկը», միշտ այն իր մոտ է պահում, իսկ գիշերը քնում է նրա հետ: Հենց որ առաջարկում են մանկապարտեզ հաճախել, Նինին սկսում է խոսել այն մասին, որ ինքն ու «արջուկը» միասին կհաճախեն մանկապարտեզ: Քանի որ COVID 19-ի հարուցված վիճակի պատճառով չի թույլատրվում փափուկ խաղալիքներ տանել մանկապարտեզ՝ ծնողն անհանգստանում է, որ շատ դժվար կլինի երեխային տանել մանկապարտեզ, ապա՝ թողնել նրան խմբում: Դաստիարակը նկատի է ունենում դա և երեխայի ծնողի հետ քննարկում է տարբեր այլընտրանքներ, թե ինչպես կարելի է փոխարինել «արջուկին»: Տարբերակները մշակվում են:

Այլընտրանք 1. Դաստիարակը ծնողին առաջարկում է նախքան մանկապարտեզ գալը ծնողը քննարկի և երեխայի հետ խաղարկի առանց արջուկի մանկապարտեզ գնալու տարբեր սցենարներ, որտեղ արջուկը Նինիին ճանապարհում է մինչև տան դուռը, կամ արջուկը Նինիին ուղեկցում է մինչև մանկապարտեզ, այնուհետև ձեռքով թափահարում է նրան և Նինիի մոր հետ վերադառնում տուն:

Այլընտրանք 2. Տնային պայմաններում պատրաստե՛ք մանկապարտեզ, ուր կհաճախի արջուկը, Նինին կտանի նրան այնտեղ, մի փոքր ժամանակով կթողնի (մանկապարտեզը կարելի է կազմակերպել վրանի տիպի տարածքում առանձին սենյակում՝ խաղալիքներով, կամ կարող է պատրաստվել հատուկ անկյուն): Սրանով ծնողը կօգնի Նինիին տարանջատել իր և արջուկի մանկապարտեզները, ինչպես նաև արջուկից ժամանակավորապես բաժանվել:

Այլընտրանք 3. Դաստիարակն առաջարկում է ծնողին, որ նա լուսանկարի արջուկին և արջուկի լուսանկարով սցենար մարճնավորի, խաղարկի դեր, համաձայն որի Նինին մանկապարտեզ է տանում արջուկի լուսանկարը:

Այլընտրանք 4. Դաստիարակն ու ծնողը համաձայնության են գալիս Նինիի հետ, որ տեսազանգի միջոցով արջուկը ևս կդիտի մանկապարտեզի միջավայրը:

## Ինչպես է երեխան ծնողի աջակցությամբ պատրաստվում նախադպրոցական հաստատություն հաճախելուն

Կյանքի բոլոր փուլերում երեխայի զարգացման ամենակարևոր բաղադրիչներից մեկը զգացմունքային բարեկեցությունն է: Երբ կա աջակցության, անվտանգության, երջանկության զգացողություն, երեխան մոտիվացված է ընդգրկվել այս կամ այն ակտիվության մեջ, իրեն ապահով զգալ տարբեր միջավայրերում, փորձեր անցկացնել, լինել հետաքրքրասեր և շահագրգռված սերտելու նորը: Եթե երեխան ունի անվտանգության և նոր միջավայրին պատկանելու զգացողություն, եթե նա իրեն հարմարավետ է զգում և ունի բարեկեցության զգացողություն, ապա նա բարյացակամություն է ցուցաբերում ինչպես դաստիարակների, այնպես էլ հասակակիցների նկատմամբ և պատրաստակամություն է ցուցաբերում զբաղվել առաջարկվող գործողություններով:

Հուզական բարեկեցության, անվտանգության և պատկանելության զգացողություն ստեղծելու համար հոգածությունը պետք է սկսվի նախադպրոցական հաստատություն գնալուց առաջ: Նախադպրոցական հաստատության նկատմամբ վերաբերմունքն ու պատրաստվածությունը կրթական հաստատության և դրա առօրյա գործունեության նկատմամբ ոչ միայն նպաստում են երեխայի հուզական բարեկեցությանը, այլև ուղղակիորեն ազդում են ուսումնական գործընթացի մեջ նրա ներգրավվածության վրա: Որքան երեխան ավելի պատրաստված է, գիտի ռեժիմը, սպասվող գործողությունները, գիտի, թե ովքեր կլինեն գործընթացում ներգրավված անձինք և ինչ ակնկալիքներ գոյություն ունեն միջավայրի նկատմամբ, այնքան ավելի արագ և առանց ցավի է նա հարմարվում

նոր միջավայրին, նվազում է նորության (միջավայրը, մարդիկ) առաջացրած սթրեսը, և նա հաճույքով ընդգրկվում է կրթական գործընթացի մեջ: COVID 19-ի պայմաններում էլ ավելի կարևոր է երեխայի իրազեկումը, թե ինչ միջավայր, ակտիվություններ, ռեժիմ և ընթացակարգեր են սպասվում նրան կրթական հաստատությունում: Դա անելու համար նախադպրոցական հաստատության ծառայության ներկայացուցիչը պետք է մանրամասն տեղեկատվություն տրամադրի ծնողին և օգնի նրան երեխային պատրաստելու հարցում:

Երեխայի համար որոշակի ռեժիմի գոյությունը շատ կարևոր է առօրյա կյանքում: Փոքր տարիքի երեխաները բավականին համառ են, և նրանք պատրաստման կարիք ունեն: Նորության համար նախապես տրամադրված ժամանակացույցը նրանց օգնում է տրամադրվածություն ստեղծել, բարձրացնել մոտիվացիան և հետաքրքրություն բորբոքել: Ելնելով վերոնշյալից՝ օրվա և շաբաթվա ակտիվությունների ժամանակացույցին և առօրյային նախապես ծանոթանալը վճռական դերերից մեկն է կատարում երեխայի կրթական ներգրավման գործընթացում: Կարևոր է նաև ժամանակացույցը ծանոթացնելու ժամանակ լսել երեխային և նրանից հետադարձ կապ ստանալ, օրինակ, եթե դաստիարակն առաջարկում է նրան, որ շաբաթվա ընթացքում կխոսեն կենդանիների մասին, և երեխան պատասխանում է, որ ուզում է խոսել դինոզավրերի մասին, դաստիարակը նկատի է առնում նրա հետաքրքրությունը, նախազգուշացնում է երեխային, որ նրա հետաքրքրությունը նախատեսված կլինի և պլանավորված կենդանիներով գործունեության մեջ նա խոսում է դինոզավրերի, որպես հսկա կենդանիների մասին, որոնք այսօր այլևս գոյություն չունեն: Արդյունքում, երեխան գիտի, որ դաստիարակը նախատեսել է իր խնդրանքը, գիտի, թե ինչպիսի ակտիվություններ կունենա այս շաբաթ, սպասում է, մոտիվացված է և պատրաստվում է ամենօրյա հանդիպումների՝ կրթական գործընթացը զվարճալի և հուզիչ է ընթանում ինչպես երեխայի, այնպես էլ դաստիարակի համար:

## Ինչպե՞ս է ծնողը պատրաստում երեխային նախադպրոցական հաստատության համար:

### *Հանձնարարականներ դաստիարակների համար*

- Դաստիարակը ծնողին խորհուրդ է տալիս երկխոսել երեխայի հետ, հարցեր տալ նրան նախադպրոցական հաստատության վերաբերյալ, պարզել, թե ինչ սպասում ունի երեխան, ստեղծել նախատրամադրվածություն՝ ներգրավվելով տարբեր ակտիվությունների մեջ: Երաշխավորվում է առաջարկել ստորև տրված ակտիվությունները.
    - Ծնողը խնդրում է երեխային միասին նկարել մանկապարտեզը և այնուհետև քննարկում են նկարը: Ծնողը երեխային հարցնում է, թե ինչպիսին է մանկապարտեզը, ինչ պետք է անի երեխան մանկապարտեզում, ով է այնտեղ դիմավորելու, ով կտանի այնտեղ, որքան ժամանակ է երեխան այնտեղ լինելու, ով է նրան այնտեղից դուրս բերելու և այլն:
    - Ծնողը երեխային պատմում է մի պատմվածք, որում գլխավոր հերոսը գնում է մանկապարտեզ: Պատմվածքում նկարագրված է, թե ինչպիսի տեսք ունի մանկապարտեզը, ինչ գործողություններ են այնտեղ կատարվում, ինչպիսի կանոններ են և այլն:
    - Ծնողն ու երեխան միասին մուլտֆիլմ են դիտում և այնուհետև քննարկում դրանում ընթացող իրադարձությունները:
    - Լավ ռազմավարություններից մեկն է նաև դերային խաղը: Ծնողը երեխայի հետ տիկնիկներով «մանկապարտեզ-մանկապարտեզ» է խաղում, կամ հենց իրենք են գործող անձինք: Խաղի ընթացքում գործում են նույն կանոնները, ինչ նախադպրոցական հաստատությունում, օգտագործվում են նմանատիպ գործողություններ և այլն:
- Դաստիարակը ծնողին տալիս է մի շարք ռազմավարություններ, թե ինչպես կարելի է երեխայի հետ խոսել վիրուսների, բակտերիաների և դրա հետ կապված ընթացակարգերի մասին՝ նրա տարիքային

խմբի համար հասկանալի լեզվով և միջոցներով: Այս դեպքում ևս հնարավոր է օգտագործել վերը նշված ռազմավարությունները: Ցանկալի է, որ դաստիարակը ծնողին տրամադրի այդ թեմայով մանկական գրականություն կամ մատնանշի կայք, որտեղ տեղադրված են նմանատիպ նյութեր (նկարներ, էլեկտրոնային գիրք, տեսանյութ և այլն):
- Կարևոր է, որ նախադպրոցական հաստատության ներկայացուցիչը շեշտի. ծնողի կողմից երեխային տրամադրվող տեղեկատվությունը պետք է լինի հնարավորինս իրատեսական, հակառակ դեպքում երեխայի սպասելիքները տարբեր կլինեն, և նա կհիասթափվի նախադպրոցական հաստատություն հասնելուց հետո, ինչն իր հերթին կարտացոլվի երեխայի վարքի, գործընթացում ընդգրկման դժվարությունների վրա: Ճիշտ սպասումները նպաստում են երեխաների ներգրավվածությանը, դրական վարքին և կանոնների և ռեժիմի ընդունմանը:
- Ցանկալի է դաստիարակի օգնությամբ և ներգրավվածությամբ իրականացվի երեխաների հանդիպում փոքր խմբերում (առկա ձևի դեպքում՝ ֆիզիկական հանդիպում, իսկ հեռավար ձևով իրականացման դեպքում՝ առցանց հանդիպում): Հասակակիցների հետ նախնական ծանոթությունը կբարձրացնի երեխայի՝ խմբին պատկանելու զգացողությունը, ինչը նշանակում է, որ երեխան իրեն ապահով կզգա, կունենա ակտիվությունների մեջ ներգրավվելու բարձր մոտիվացիա, դրական տրամադրվածությամբ կգնա նախադպրոցական հաստատություն / կմասնակցի հեռավար/ առցանց հանդիպումներին:

Ցանկալի է, որ ծնողը երեխային նախապես նախապատրաստի և ծանոթացնի օրվա ռեժիմը՝ ըստ հետևյալ աղյուսակի.
- ✓ Առավոտյան ժամը քանիսին պետք է վեր կենա:
- ✓ Առավոտվա առօրյան մինչև նախադպրոցական հաստատություն գնալը:
- ✓ Ժամը քանիսին է գնում նախադպրոցական հաստատություն:
- ✓ Որոնք են ընդունման գործողություններն ու ընթացակարգերը:
- ✓ Ով է լինելու դաստիարակը (լուսանկար, հեռախոսային կամ առցանց հանդիպում):
- ✓ Մոտավորապես քանի երեխա կլինի խմբում (ցանկալի է, որ նրանցից մի քանիսը նախապես ճանաչեն միմյանց, և երեխան իմանա մի քանի երեխաների, ովքեր կլինեն խմբում):
- ✓ Ինչպիսին կլինեն խմբի առօրյան և գործունեությունը:
- ✓ Բակ դուրս գնալու ընթացակարգեր:
- ✓ Որտեղ և ինչ ձևով են սնվելու, սնվելու ռեժիմն ու ընթացակարգերը:
- ✓ Ձեռքերը լվանալու հետ կապված ընթացակարգեր:

## Կրթական գործընթացում ինչպե՞ս ստեղծենք առավելագույնս բարյացակամ հուզական միջավայր:

Նախ և առաջ նախադպրոցական կրթական ծառայության ներկայացուցիչը պետք է նկատի ունենա, որ երեխայի համար նախադպրոցական հաստատությունը և հատկապես այս փուլում այստեղ գոյություն ունեցած ընթացակարգերը կապված են մեծ փոփոխությունների և նորամուծությունների հետ, ուստի կարևոր է տարբեր գործողությունների և խաղերի միջոցով երեխաներին բազմիցս բացատրել օրվա ռեժիմը և կանոնները:

Անհրաժեշտ է հիշել, որ նախադպրոցական կրթության նպատակը ոչ միայն ճանաչողական և նախաակադեմիական հմտությունների զարգացմանը նպաստելն է, այլև, առաջին հերթին, երեխայի հուզական բարեկեցության և սոցիալական, հաղորդակցական հմտությունների խթանումը: Հետևաբար, չնայած առկա իրավիճակի պատճառով առաջացած ֆիզիկական հեռավորությանը, նախադպրոցական հաստատության հիմնական խնդիրներից մեկը երեխաների միջև սոցիալական փոխգործողության և հաղորդակցության պահպանումն ու խրախուսումն է: Խմբին պատկանելու զգացողությունը մեծացնելու համար անհրաժեշտ է, որ երեխան սոցիալական փոխգործողություն

հաստատի հասակակիցների հետ (պատկանելության զգացողությունը բազիսային և գլխավոր զգացողություններից մեկն է, որը որոշում է երեխայի հուզական բարեկեցությունը որոշակի համատեքստում):

### *Հանձնարարականներ դաստիարակի համար.*

- Պատին փակցրե՛ք օրվա ռեժիմն ու կանոնները պատկերող պատկերներ (օրինակ, մուտքի մոտ ջերմություն են չափում, ապա ախտահանող լուծույթ օգտագործում, ուտելուց առաջ և հետո լվանում են ձեռքերը և այլն), քանի որ տեսողական օժանդակ միջոցներն օգնում են երեխային տեղեկատվության յուրացման մեջ: Տվյալ նյութն ավելի հիշարժան կլինի, եթե այն ստեղծեք երեխայի հետ գունավոր թերթերի, մատիտների ու նկարների միջոցով: Այսպիսով, երեխան ինքը կներգրավվի կանոնների ստեղծման ու մշակման գործընթացում և ավելի շատ նկատի կունենա դրանք:
- Խրախուսե՛ք երեխաներին, որ բանավոր հաղորդակցություն հաստատեն: Փոքր խմբերում ստեղծեք ակտիվություններ, որտեղ նրանք հնարավորություն կունենան պահպանել հերթը, հաշվի առնել այլոց դիրքորոշումը, արտահայտել իրենց սեփական դիրքորոշումը, նաև՝ կունենան կանոնների պահպանումը սովորելու հնարավորություն:
- Հեռավար ձևով իրականացված կրթական գործընթացի ժամանակ փոքր խմբերի միացումների ժամանակ համոզվե՛ք, որ ձեր պլանավորած և իրականացրած գործողությունները երեխաներին հնարավորություն են տալիս կիսվել հույզերով, փորձով և հետաքրքրություններով միմյանց և ձեզ հետ:

Նշված ցանկացած տիպի ակտիվություն ընթացքում կարող եք կատարել ռեֆլեքսիվ ռեժիմով.

- Երեխային տվե՛ք հույզեր արտահայտելու հնարավորություն: Եթե նա պարբերաբար հարց է տալիս ձեռքերը լվանալու և ջերմությունը չափելու մասին, մի՛ թողեք նրա հարցն անպատասխան, միևնույն հարցը հաճախ տալը կարող է նշանակել բարձր անհանգստություն, և ձեր պատասխանները, բարյացակամությունը, հուզական փոխանակումն ու ապրումակցումը այս պահին հանգստացնող ազդեցություն կունենան նրա վրա: Կարող է որոշակի իրավիճակո ւմ որոշակի հարցի ճշգրիտ պատասխան չունենաք, այս անգամ ավելի լավ է երեխային ասել, ո ր չգիտեք, բայց հաստատ կպարզեք և կվերադառնաք պատասխանով:

## Եթե երեխան խմբում գտնվելու ժամանակ ունի բարձր ջերմություն (37⁰ կամ ավելի)

Առողջապահական կանոնակարգերի համաձայն, եթե նախադպրոցական հաստատությունում գտնվող երեխայի մոտ ջերմություն է արձանագրվում, դաստիարակը պարտավոր է նրան տեղափոխել մեկուսացման սենյակ: Այս ժամանակ նկատի՛ ունեցեք հետևյալը.

- Երեխային դո՛ւրս հանեք սենյակից հանդարտ գործողություններով և հանգիստ վարվելակերպով:
- Սթրեսից պաշտպանելու համար երեխային բացատրե՛ք, որ նրա հետ ժամանակավորապես պետք է տեղափոխվեք մեկ այլ սենյակ և խաղաք:
- Հնարավոր է երեխան որոշ ժամանակ անց խնդրի սենյակից դուրս գալ, հետևաբար նախապես պատրաստվե՛ք և հետներդ ունեցե՛ք խաղալիքների մի քանի այլընտրանք (այդ խաղալիքները կարող են նախապես դասավորված լինել սենյակում): Միևնույն ժամանակ նկատի՛ ունեցեք, որ երեխան կարող է զուգարան գնալու անհրաժեշտություն ունենալ: Այս և նման դեպքերում համոզվե՛ք, որ երեխային անվտանգ և հանգիստ եք տանում զուգարան և պահպանում եք բոլոր անհրաժեշտ կանոնները:
- Հետներդ տարե՛ք երեխայի սիրած խաղալիքները և խաղացե՛ք նրա հետ մեկուսացման սենյակում:

- Խորհուրդ է տրվում երեխաներին նախապես ներկայացնել մեկուսացման սենյակը և դիտել տալ այն, որպեսզի նրանք ունենան ծանոթության և անվտանգության զգացում:
- Փորձե՛ք երեխայի մասին տեղեկատվությունը ծնողին տրամադրել առանց երեխայի ներկայության:
- Ծնողին տեղեկատվություն տրամադրելիս՝ պահպանե՛ք հանգստություն և հաշվի՛ առեք նրա հուզական վիճակը:
- Երեխայի հետ հանգիստ սպասե՛ք ծնողին:
- Ընդհանրապես, որքան երեխան ծանոթ է ֆիզիկական միջավայրին, այնքան ավելի հանգիստ ու ապահով է զգում իրեն այդ միջավայրում: Քանի որ բնական է երեխային ծանոթացնելը, թե որտեղ է նրա խմբասենյակը, որտեղ է զուգարանը, որտեղ է այն տեղը, որտեղ կճաշի, նպատակահարմար է, որ երեխային ծանոթացնեք նաև մեկուսացման սենյակը: Սահմանափակվե՛ք բացատրելով, որ այս վայրը կարող է օգտագործվել, երբ իրենց վատ են զգում, կամ անհրաժեշտ է չափել ջերմությունը: Պետք չէ շատ մանրամասնել, բայց եթե երեխան հարցեր տա, փորձե՛ք պատասխանել առանց գեղեցկացնելու, միևնույն ժամանակ առանց սթրեսի, հանգիստ:
- Մեկուսացման սենյակի միջավայրը պետք է լինի երեխայակենտրոն: Այստեղ, անհրաժեշտության դեպքում, նա կկարողանա մեծահասակների աջակցությամբ և հետաքրքիր ռեսուրսների մոբիլիզացմամբ զբաղվել զվարճալի գործողություններով:
- Փորձե՛ք չլարել և սթրեսի չենթարկել երեխային: Եթե նա լալիս է, վախեցած է կամ կամակորություն է անում, հանգստացրե՛ք, ապահովե՛ք նրա հուզական և, անհրաժեշտության դեպքում, ֆիզիկական հարմարավետություն:

# ԿՐԹԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀՈՒԶԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ

**Երեխայի և ծնողի հուզական բարեկեցության համար կարևոր է դաստիարակների հուզական բարեկեցությունը: COVID 19-ի պայմաններում աշխատելը մեծ մարտահրավեր և պատասխանատվություն է նախադպրոցական հաստատության համար: Աշխատանքային ժամանակացույցի, շրջակա միջավայրի ռեժիմի փոփոխությունը սթրեսային է ինչպես դաստիարակների, այնպես էլ վարչակազմի համար:**

Նախադպրոցական կրթական գործընթացի հաջող անցկացման համար կարևոր է ոչ միայն երեխայի, այլև նրանում ներգրավված կրթական անձնակազմի հուզական բարեկեցությունը: Սթրեսը և դրա հետևանքները ազդում են ինչպես երեխաների, այնպես էլ մեծահասակների վրա, ինչն իր հերթին ազդում է այն միջավայրի վրա, որտեղ մեծահասակներն են, հատկապես երեխաների վրա, քանի որ փոքրիկները հաճախ առանց բառերի, նույնիսկ առանց բանավոր ազդանշանների զգում են ավագների հուզական տրամադրությունը:

Նախադպրոցական կրթական հաստատության անձնակազմի դերը երեխայի կյանքում ենթադրում է ոչ միայն ճանաչողական (խնդիրների վերլուծություն, խնդիրների լուծում, մտածողություն և այլն) և նախաակադեմիական հմտությունների (նկարչություն, հնչյունաբանական վերլուծություն և համադրություն և այլն) զարգացման մասին հոգածություն, այլև երեխայի սոցիալական հմտությունների զարգացման (թիմային աշխատանք) աջակցություն և երեխայի հուզական բարեկեցության ապահովում:

Հետևաբար, այս խնդիրներից յուրաքանչյուրը հաջողությամբ լուծելու համար կրթական հաստատության ներկայացուցիչն ինքը պետք է զգա և պահպանի հուզական բարեկեցությունը, կարողանա հաղթահարել սթրեսը, դրական կառավարի հույզերը և այլն: Կրթական հաստատության ներկայացուցիչների համար դա բավականին դժվար է առօրյա կյանքում, և գործընթացը ինքնին առանձնահատուկ մարտահրավեր է COVID 19-ի պայմաններում:

Փոփոխված օրվա ժամանակացույց, ռեժիմներ, ակտիվություններ, անվտանգության ավելի խստացված կանոններ, հեռավար հանդիպումներ փոքրիկների հետ, ծնողների ավելացած անհանգստությունը, - սա մի մասն է այն ցանկի, որ կարող է սթրեսային լինել կրթական հաստատության ներկայացուցիչների համար: Այս սթրեսի պայմաններում անհրաժեշտ է, որ դաստիարակները որոշակի աջակցություն ունենան ուսումնական հաստատության վարչակազմի կողմից, որն ուղղված կլինի նրանց հուզական բարեկեցության պահպանմանը:

## Հանձնարարականներ կրթական անձնակազմի հուզական բարեկեցության պահպանման համար

Կարևոր է, որ կրթական անձնակազմն իմանա, որ անհրաժեշտության դեպքում նրանց կլսեն: Անհրաժեշտ է կառուցողական երկխոսություն ինչպես կրթական հաստատության անձնակազմի և ծնողի, այնպես էլ աշխատակազմի և նախադպրոցական հաստատության վարչակազմի ներկայացուցիչների միջև: Օրինակ, դաստիարակը պետք է հնարավորություն ունենա տեղեկատվություն փոխանակելու հաստատության այլ ներկայացուցիչների հետ, եթե, օրինակ, նա ի վիճակի չէ ինքնուրույն կարգավորել այս կամ այն իրավիճակը և օգնության կարիք ունի: Օգնությունը կարող է լինել տարբեր տեսակի, օրինակ՝

խորհրդատվության մասնագետի հրավիրելը, դասընթացներ անցկացնելը, պարզապես մտքերի և առաջարկների փոխանակումը և այլն: Տվյալ օժանդակության կազմակերպումը և աջակցությունը պետք է ապահովի նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարությունը պլանային ձևով:

Ուսումնական անձնակազմը պետք է զգա, որ իրենց ֆիզիկական անվտանգությունը, հոգեբանական և հուզական բարեկեցությունը նույնքան կարևոր են ուսումնական հաստատության համար, ինչպես երեխաների անվտանգությունն ու բարեկեցությունը: Համավարակի պայմաններում աշխատելը կարող է հանգեցնել մասնագիտական ուժասպառության, և այս պահին կարևոր է, որ կրթական հաստատությունը կարողանա առողջ հոգեբանական սոցիալական միջավայր ստեղծել և անհրաժեշտության դեպքում հրավիրել մասնագետ (հոգեբան, դասընթացավար, որը ռազմավարություններ կծանոթացնի հոգեբանական ուժասպառությունից խուսափելու համար):

Ուսուցիչների համար մեծ նորություններից մեկը երեխաների հետ առցանց հանդիպումներն են, քանի որ նրանց մեծ մասը չունի նման փորձ և բավականին դժվար է հանդիպմանը մասնակցությունը կազմակերպել պատշաճ կերպով: Անհրաժեշտ է որոշակի տիպի տեղեկատվություն տրամադրել և այդ ոլորտում ուսուցիչներին կատարելագործել (օրինակ, ինչպես գրել առցանց հանդիպման ծրագիր, ինչպիսի գործողություններ կարելի է անել առցանց, որ տարիքային խմբի համար ինչպիսի տևողությամբ և ինչ տեսակի հանդիպումն է ընդունելի և այլն): Նշվածի հետ կապված՝ տվյալ ուղեցույցում ներկայացված են երաշխավորվող ձևեր և ռազմավարություններ, սակայն հաստատությունը կարող է կրկին քննարկել և իրականացնել իր հաստատությանը հարմարեցված երեխայակենտրոն ձևաչափ):

Անկախ ծանրաբեռնված ժամանակացույցից, անհրաժեշտ է, որ ուսումնական հաստատության անձնակազմին օրվա ընթացքում տրամադրվի հասանելի ընդմիջման ժամանակ:

Կարևոր է պարբերաբար անցկացնել ուսումնական հաստատության անձնակազմի հանդիպումներ փոքր խմբերով (2 շաբաթը մեկ կամ 3 շաբաթը մեկ անգամ), որի ընթացքում ուսումնական անձնակազմը կկիսվի նորություններով ուսումնական գործընթացի պլանավորման այս կամ այն մեթոդի, ինչպես նաև փործի և հույզերի մասին: Այս հանդիպումները պետք է դիտարկվեն որպես աշխատանքային ժամեր, որպեսզի ուսուցիչներին իրենց ազատ ժամանակում լրացուցիչ գործողություններ չառաջարկվեն:

Մինչև ուսումնական գործընթացի սկիզբը ցանկալի է հանդիպել հոգեբանների հետ, ովքեր մանկավարժներին կտրամադրեն որոշ ռազմավարություններ, և ճիշտ սպասումներ կստեղծեն երեխաների սթրեսին արձագանքելու համար: Օրինակ՝ հոգեբանը կարող է դաստիարակին խորհուրդ տալ, թե ինչպես քննարկի վիրուսի և հիգիենայի կանոնները տարբեր տարիքային խմբերի երեխաների համար հասկանալի լեզվով կամ ինչպես որոշի երեխաների և մեծահասակների սթրեսային արձագանքները, ինչպես նաև, համավարակի պայմաններում նախադպրոցական ծառայության առկա կամ հեռավար ձևով իրականացման ժամանակ հոգ տանի երեխաների հուզական բարեկեցության պահպանման մասին: Եթե ուսումնական հաստատությունը չունի հոգեբան, նմանատիպ տեղեկատվության համար կարող է կապվել համապատասխան կազմակերպության կամ հատուկ հոգեբանի հետ:

Ինչ վերաբերում է ուսումնական գործընթացի փոփոխություններին, ցանկալի է, որ դաստիարակը որոշ ժամանակ ունենա հարմարվելու համար: Ուսումնական հաստատության անձնակազմի մոտիվացիան բարձրացնելու համար ցանկալի է, որ վարչակազմը նրանց պարբերաբար ապահովի դրական հետադարձ կապով:

# ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ ՀԱՏՈՒԿ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ

**Ուղեցույցի այս բաժնում քննարկվում են լրացուցիչ առաջարկություններ, որոնց նախատեսումը նպատակահարմար է երկրում առկա համաճարակաբանական իրավիճակում հատուկ կրթական կարիք ունեցող երեխաների կրթական գործընթացն արդյունավետ և անվտանգ կազմակերպելու համար:**

Ուղեցույցում վերլուծված են կրթական գործընթացի կազմակերպման և իրականացման հանգուցային խնդիրները.

ա) նախադպրոցական կրթական գործընթացի առկա ձևով իրականացման դեպքում.
բ) նախադպրոցական կրթական գործընթացի հեռավար ձևով իրականացման դեպքում՝ լինի դա ամբողջովին առցանց (անհրաժեշտության դեպքում հեռախոսային կապ), թե հիբրիդային ձևով ընթացող կրթական գործընթաց:*

Որոշումն այն մասին, թե կրթության որ ձևը պետք է իրականացվի տվյալ պահին, հիմնվում է երկրում առկա իրավիճակի նախատեսմամբ Վրաստանի գրավյալ տարածքներից տեղահանված անձանց, աշխատանքի, առողջապահության և սոցապահովման նախարարության հանձնարարականներին:

## Նախադպրոցական կրթության առկա ձևը հատուկ կրթական կարիք ունեցող երեխաների համար

COVID 19-ով հարուցված իրավիճակի պատճառով նախադպրոցական հաստատությունները պարտավոր են կրթական միջավայրում և գործընթացում հաստատել նոր կանոնակարգեր և կանոններ: Առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում մինչ ուսումնական գործընթացի սկսվելը նախապատրաստական փուլը:

Նշված փուլի բաղկացուցիչ մասերն են՝ կրթական հաստատությունում նույնականացված հատուկ կրթական կարիք ունեցող երեխաների կարիքների խորը վերլուծությունը և կրթական գործընթացն առկա ձևով ապահովելու նպատակով նրանց համար այն անհատապես պլանավորելը/կազմակերպելը:

Հատուկ կրթական կարիք ունեցող յուրաքանչյուր երեխայի հարցը անհատապես քննարկելու նպատակով կարևոր է, որ նախադպրոցական հաստատության ղեկավարությունը կազմի ժամանակացույց և կազմակերպի աշխատանքային խմբային հանդիպումներ ուսումնական գործընթացի մեկնարկից առնվազն մեկ շաբաթ առաջ: Այդ հանդիպումներին պետք է մասնակցեն երեխայի դաստիարակը, հատուկ մանկավարժը կամ հոգեբանը (եթե այդպիսի հաստիք կա հաստատությունում) և ծնողը:

Հանդիպումները կարող են անցկացվել ինչպես առկա, այնպես էլ հեռավար՝ էլեկտրոնային հարթակների օգտագործմամբ, օրինակ՝ եթե ծնողը մինչև ուսումնական գործընթացը սկսելը տեղում չէ:

* Վրաստանի հանրակրթական հաստատություններում ուսումնական գործընթացը հեռավար վարելու և ստացված արդյունքները գնահատելու կարգ:

Առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում այն հատուկ կրթական կարիք ունեցող երեխաների կրթական գործընթացի պլանավորումը, որոնք առաջին անգամ են գնում մանկապարտեզ: Ծնողների հետ միասին նրանք հնարավոր է ավելի շատ աջակցության և վերապատրաստման կարիք ունենան, հատկապես համավարակային իրավիճակի պատճառով: Մինչև կրթական գործընթացը սկսելը, փորձի բացակայության պատճառով, ծնողներին ավելի շատ հարցեր են հուզում. Ինչպե՞ս կկարողանա երեխան հարմարվել նոր միջավայրին և կյանքի նոր փուլին, ի՞նչ աջակցություն կստանա նա, ո՞վ կաջակցի նրան, որքանով անվտանգ է նախադպրոցական հաստատությունը նրա համար և այլն:

Հանդիպումների նպատակը անվտանգության հարցերի, երեխայի հոգեբանական, սոցիալական վիճակի, զարգացման առաջընթացի քննարկումն է և գործողության համաձայնեցված պլանի կազմումը՝ կրթական գործընթացն անվտանգ և երեխայակենտրոն սկսելու և իրականացնելու նպատակով:

Քննարկումը կվերաբերի հետևյալ հարցերին.

***Առողջապահության և անվտանգության հարցեր***

✓ **Առողջապահության և անվտանգության կանոնակարգերի ծանոթացում ծնողներին***

Նպատակահարմար է առերես հանդիպման ժամանակ ծնողներին մանրամասն տեղեկատվություն տրամադրել նոր լրացուցիչ կանոնակարգերի վերաբերյալ և դրանք մշակել քննարկման ձևաչափով:

Որպեսզի ծնողների համար սահմանված կանոնակարգերը մատչելի լինեն, կարևոր է, որ նախադպրոցական հաստատությունը լրացուցիչ ապահովի նշված կանոնակարգերի հարմարեցում ծնողի համար՝ տեղեկատվական բրոշյուրի տեսքով: Նախապատվությունը տրվում է բրոշյուրի էլեկտրոնային տարբերակը տարածելուն: Եթե ծնողը չունի էլեկտրոնային փոստ, նրան կտրվի տպագիր բրոշյուր:

Հանդիպմանը նախադպրոցական հաստատությունների ներկայացուցիչները պետք է կենտրոնացված լինեն ոչ միայն տեղեկատվության փոխանցման, այլ նաև վերստուգման վրա, որպեսզի ծնողին տրամադրվող տեղեկատվությունը հասկանալի և ընդունելի լինի: Կարևոր է, որ ծնողն ունենա իր համար հրատապ հարցեր տալու և սպառիչ պատասխաններ ստանալու հնարավորություն: Եթե ծնողի կողմից տրված հարցերը դուրս են նախադպրոցական հաստատության ներկայացուցիչների իրավասությունից, ապա նպատակահարմար է որոշել նախադպրոցական հաստատության այն աշխատողին, որն ակտիվորեն կճշտի ծնողին հետաքրքրող հարցերը և սահմանված ժամկետում կտրամադրի պատասխաններ:

✓ **Երեխաների առողջության հետ կապված հարցերի քննարկում**

Նպատակահարմար է նախադպրոցական հաստատության կողմից վերստուգել, թե արդյոք երեխան պատկանո՞ւմ է բարձր ռիսկի խմբի՝ առողջական վիճակի նախատեսմամբ: Արդյոք չե՞ն սահմանվել անվտանգության պահպանման հատուկ հանձնարարականներ երեխայի բուժող բժշկի կողմից, որոնք պետք է նկատի առնվեն նախադպրոցական հաստատության կողմից: Ծնողը չի՞ շնորհում արդյոք առավելություն կրթական գործընթացին երեխայի հեռավար հաճախմանը/ մասնակցությանը, ինչպե՞ս է հնարավոր դա կազմակերպել, ո՞րն է դրա պատճառը և այլն:

* Վրաստանի գրավյալ տարածքներից տեղահանված անձանց, աշխատանքի, առողջապահության և սոցապահովման նախարարության կանոնակարգեր նոր կորոնավիրուսով (SARS-CoV-2) հարուցված վարակի հետ (COVID-19) կապված ընդհանուր հանձնարարականներ հանրակրթական հաստատությունների համար:

### ✓ Երեխայի համար լրացուցիչ օգնության սահմանում

Կրթական գործընթացի պլանավորման ժամանակ նպատակահարմար է, որ մասնագետները և ծնողները գնահատեն երեխայի հնարավորությունները և սահմանեն, թե կանոնակարգերի պահպանման ժամանակ որքանով ունի երեխան հասակակիցների համեմատ ավել կամ տարբերվող աջակցության կարիք։

Անհրաժեշտության դեպքում կարևոր է բացահայտել այն մեխանիզմները, որոնց միջոցով հնարավոր կլինի երեխային աջակցել անվտանգ հեռավորության պահպանման, հիգիենիկ ընթացակարգերի, վարվելակերպի կանոններին համապատասխանության առումով։ Նախադպրոցական հաստատությունում դրա համար կարող են պատասխանատու լինել խմբում ներգրավված մասնագետները (դաստիարակը, կամ հատուկ մանկավարժը), եթե անձնակազմում կա այդպիսին։

Միևնույն ժամանակ, հիգիենիկ ընթացակարգերի և դրանց հաճախականությունը որոշելու համար պետք է հաշվի առնել օժանդակ սարքերի (անվասայլակ, քայլակ, ակնոցներ) օգտագործման հարցը։ Լրացուցիչ ախտահանման համար կարող են պահանջվել նաև օժանդակ նյութեր։ Որոշ երեխաների կարող է անհրաժեշտ լինի ավելի ինտենսիվ ֆիզիկական շփում շրջապատի հետ՝ տեղաշարժման կամ/և տեսողության դժվարության պատճառով ինտենսիվ կերպով հենվել կամ շոշափելով շփվել մակերեսների հետ։

Հիմնականն այն է, որ համաձայնեցվի, թե ինչպես և ում կողմից են ձեռնարկվելու անհրաժեշտ միջոցառումները։

> **Իրավիճակային խնդիր**
>
> Ա.Բ.-ի մոտ նկատվում է առատ թքարտադրություն։ Թիմային հանդիպման ժամանակ հարցը նույնականացնելուց հետո, պայմանավորվել են, որ նրա հիգիենիկ ընթացակարգերը հոգալու է խմբի կրթական անձնակազմը (դաստիարակը, դաստիարակի օգնականը կամ հատուկ մանկավարժը), որը յուրաքանչյուր 20 րոպեն մեկ կվերահսկի Ա.Բ.-ի հիգիենայի ընթացակարգերը։ Միևնույն ժամանակ, նրանք վերահսկում են Ա.Բ.-ի կողմից խաղալիքների օգտագործումը և, անհրաժեշտության դեպքում, ապահովում են, որ դրանք օգտագործելուց հետո ախտահանվեն կամ պահվեն անվտանգ վայրում, մինչև ախտահանվեն։

### ✓ Երեխայի իրազեկում նոր կանոնների մասին և նրա նախապատրաստում

Նպատակահարմար է, որ աշխատանքային հանդիպումների ժամանակ համաձայնեցվի, թե ինչ ռազմավարությամբ, ինչ ձևով և ում կողմից երեխան կիրազեկվի վարքագծի նոր կանոնների մասին և կնախապատրաստվի դրանց կիրառման։ Առաջարկվում է, որ առաջին փուլում դրա համար պատասխանատվություն ստանձնի ծնողը, իսկ դրա ամրապնդման մասին հոգ տանի կրթական անձնակազմը։ Կարևոր է, որ երեխան նախապես տեղեկացված լինի նախադպրոցական հաստատությունում հաստատված նոր կանոնների մասին և պատշաճ կերպով տեղեկացված լինի։

- Երեխային պետք է տեղեկատվությունը տրամադրվի՝ հաշվի առնելով նրա տեղեկատվության ընկալման և գիտակցման առանձնահատկությունները։
- Նոր վարք սովորելը կարող է սկսվել տնային պայմաններում և ամրապնդվել այն միջավայրում, որտեղ այն պետք է կիրառվի։
- Մինչև կրթական գործընթացի սկսվելը հնարավոր է անհրաժեշտ դառնա, որ երեխան մի քանի անգամ այցելի նախադպրոցական հաստատություն՝ ախտահանիչ արգելագորգիկի, հեռավորության

գծանշումների նույնականացման, ջերմության չափման ընթացակարգի և այլն ծանոթանալու համար:

- Առաջարկվում է նաև, որ նախադպրոցական հաստատությունը երեխայի համար մատչելի ձևով ունենա կազմած անվտանգության կանոնների վերաբերյալ տեղեկատվական գրքույկ, որը կփոխանցի ծնողին՝ երեխային ծանոթացնելու նպատակով: Որոշ դեպքերում կարող է անհրաժեշտ լինի երեխայի համար անհատապես կազմել այս տեղեկատվական գրքույկը (օրինակ՝ նկարների փոխարեն օգտագործել լուսանկարներ):

**✓ Կոնտակտային անձի նույնականացում**

Նախադպրոցական հաստատության կողմից կազմակերպված հանդիպումներին անհրաժեշտ է, որ ծնողը որոշի երկու անձի, որոնց հետ կապ կհաստատեն այն դեպքում, եթե երեխայի մոտ նախադպրոցական հաստատությունում գտնվելու ընթացքում որոշակի ախտանիշներ ի հայտ գան: Երկու անձի նույնականացումը կարևոր է նրա համար, որ մեկ անձի անհասանելի լինելու դեպքում կապվեն երկրորդ անձի հետ:

**✓ Նախադպրոցական կրթական ծառայության հեռավար ձևի հնարավորությունների քննարկում**

Տվյալ հանդիպման ժամանակ հնարավոր է նաև սկսել զրուցել, թե ինչպես կկազմակերպվի երեխայի կրթական գործընթացն այն դեպքում, եթե նա ստիպված լինի տեղափոխվել կրթության հեռավար ձևի, արդյոք ընտանիքի անդամները կարիք ունե՞ն վերապատրաստվելու թվային տեխնոլոգիաների օգտագործման, երեխայի կրթական գործընթացի կազմակերպման, հրահանգների տրամադրման, վարվելակերպի կառավարման առումով:

Աշխատանքային հանդիպման ժամանակ անհրաժեշտ է անդրադարձ կատարել նրան, թե անցյալ կիսամյակի ճգնաժամային իրավիճակում վարած կրթական գործընթացը ինչպես է հաղթահարվել (նման փորձի առկայության դեպքում), և վերլուծել ինչպես երեխայի համամասնակցությունն ու առաջընթացը, այնպես էլ նրա հոգեբանական-հուզական վիճակը:

Իդեալական դեպքում, այս խնդիրները պետք է գնահատվեին երեխաների հետ աշխատող թիմի կողմից անցյալ տարվա վերջին: Հետևաբար, եթե նախադպրոցական հաստատությանը հայտնի են այս հարցերը, ապա այս փուլում նրանց համար կարևոր կլինի պարզել, թե ինչպես են ընթացել արձակուրդները, արդյոք երեխան որոշակի փոփոխություններ չի՞ կրել զարգացման դինամիկայի և հոգեբանական-հուզական վիճակի առումով. ստացած գիտելիքներն արդյոք տեղափոխվե՞լ են առօրյա կյանք (գործառնական կիրառություն), արդյոք ձե՞ռք են բերվել նոր հմտություններ ու կարողություններ, կամ հակառակը՝ որոշակի հմտություններ չե՞ն կորել/մոռացվել: Ինչպիսի՞ն էր երեխայի հոգեբանական-հուզական վիճակն ու պահվածքը, կարգավորվե՞լ է արդյոք (եթե ճգնաժամային իրավիճակի պատճառով վերջինս փոփոխության էր ենթարկվել) և ի՞նչ ռազմավարությունների օգտագործմամբ: Միևնույն ժամանակ, կարևոր է լսել ծնողին և կիսվել նրա տեսլականով. արդյոք տվյալ պահին երեխան կարի՞ք ունի հոգեբանական-հուզական աջակցության և (կամ) վարքի կարգավորման, կամ ծնողը կարիք ունի՞ այս հարցերի վերաբերյալ հանձնարարականների:

Եթե անհրաժեշտություն լինի, կարևոր է երեխային և ծնողին ուղղորդել համապատասխան իրավասություն ունեցող մասնագետի մոտ: Ուստի նախադպրոցական ուսումնական հաստատության համար նպատակահարմար է ունենալ համապատասխան ծառայություններ մատուցող կազմակերպությունների տվյալների շտեմարան: Ընտանիքը կարող է նաև աջակցություն ստանալ այն սոցիալական ծառայություններից (օրինակ՝ վաղ միջամտության ծառայություններից), որտեղ երեխան ներգրավված է: Բնականաբար, գուցե անհրաժեշտ լինի կազմել անհատական զարգացման ծրագիր:

✓ **Կրթական միջավայրի, իրերի և հիգիենայի պարագաների կազմակերպում կրթական հատուկ կարիք ունեցող երեխայի համար**

Եթե հատուկ կրթական կարիք ունեցող երեխան ներգրավված է առանձին՝ մեկը մեկի հետ կամ փոքր խմբերում կազմակերպված ուսումնական գործընթացի մեջ, նախադպրոցական հաստատության ղեկավարությունը և նրա մոտ աշխատող մասնագետները պետք է մշակեն այն իրերի անվտանգ օգտագործման կանոններ, որոնք երեխան օգտագործում է այդ գործընթացում: Հատկապես, եթե օգտագործված պարագաներն ու իրերը բազմակի օգտագործման են, և դրանք կարող են երեխաների կողմից ընդհանուր օգտագործվել փոքր խմբերում կամ առանձին հանդիպումների ժամանակ:

Առաջարկվում է.

- Սահմանել այն իրերն ու պարագաները, որ կիրառվում է կոնկրետ երեխայի համար, իհարկե, դա որոշվելու է՝ հաշվի առնելով երեխայի համար սահմանված նպատակներն ու շահերը:
- Սահմանել անհատական զետեղարան յուրաքանչյուր հատուկ կրթական կարիք ունեցող երեխայի համար և այնտեղ զետեղել նշված իրերը՝ զետեղարանի վրա գրել երեխայի անունը, փակցնել նրա լուսանկարը կամ խորհրդանշան, որի միջոցով երեխան կկարողանա նույնականացնել իր իրերի գտնվելու տեղը:
- Երեխային սովորեցնել, թե որտեղ են պահվում իր իրերը, ինչպես նաև սեփական իրերն օգտագործելու կանոնները.
- Այն դեպքում, եթե մի քանի երեխա է օգտվում տվյալ իրերից ու պարագաներից.
  ա) Խելամտորեն բաշխել դրանք երեխաների միջև, խուսափել տարբեր երեխաների կողմից նույն իրի օգտագործումից:
  բ) Առանձին զետեղարան տրամադրել ընդհանուր օգտագործման իրերի համար և ապահովել, որ իրերն ախտահանվեն յուրաքանչյուր օգտագործումից հետո, եթե այն նյութը, որից պատրաստված են այդ իրերը, տալիս են դրա հնարավորություն: Այն իրը, որը հնարավոր չէ ախտահանել, պետք է հանվի սպառումից (օրինակ՝ փափուկ, գործվածքից պատրաստված դիդակտիկ պարագաները) կամ օգտագործվի միայն երեխաների կողմից անհատապես, այլ ոչ թե ընդհանուր օգտագործմամբ (օրինակ՝ գունավոր թերթեր):
  գ) Որոշել այն վայրը, որտեղ հավաքվում են օգտագործված ընդհանուր իրերն ու պարագաները ախտահանման համար և տեղադրվի այնտեղ յուրաքանչյուր օգտագործումից հետո: Ախտահանելուց հետո դրանք կարող են վերադարձվել իրենց տեղը:
  դ) Ստեղծել տեսողական քարտեր (նախընտրելի է լամինացված) և վարվելակերպի կանոնների հետ կապված պաստառներ ու դրանք տեղադրել տեսանելի տեղում:
  ե) Երեխայի հետ առաջին հանդիպումները տրամադրվեն տվյալ կանոնները ծանոթացնելուն (լամինացված քարտերի օգտագործմամբ) և սերտելուն:
  զ) Կազմել այն իրերի և պարագաների ցուցակը, որոնք մի քանի երեխաների անհրաժեշտ են միաժամանակ և դիմեք նախադպրոցական հաստատությունների ղեկավարությանը՝ դրանք ձեռք բերելու համար:
- Սահմանել խմբերի օգտագործման համար նախատեսված խելամիտ ժամանակացույց (ապահովել, որ հասցվի աշխատանքային մակերեսների և իրերի ու պարագաների ախտահանում ըստ երեխաների հերթափոխի) և տարածքն օդափոխել:
- Սահմանել և տեսանելի տեղում տեղադրել ախտահանման ամենօրյա գրառման թերթիկը, ախտահանումն իրականացնել երեխաների հերթը փոխվելու ժամանակ: Ախտահանման համար պատասխանատու սահմանվի այն անձը, ով աշխատել է հատուկ կրթական կարիք ունեցող երեխաների հետ: Տվյալ աշխատակիցը պետք է վերապատրաստում անցնի՝ կապված ախտահանման ընթացակարգերի և կանոնների հետ:

# Նախադպրոցական կրթության հեռավար ձևը հատուկ կրթական կարիք ունեցող երեխայի համար

Կրթական գործընթացի հեռավար ձևով վարումն էլ ավելի շատ կազմակերպում, երկարատև պլանավորում և ընթացակարգերին անդրադարձ է պահանջում:

Չնայած նրան, որ նախադպրոցական հաստատությունները առկա ձևով են վերադառնում ուսումնական գործընթացին, նպատակահարմար է, որ նրանց վարչությունը հետևողականորեն ձեռնարկի պարտադիր միջոցառումներ, որպեսզի առկա ձևից կատարի անցում հեռավարի կամ հիբրիդային ձևի:

Ուստի նպատակահարմար է, որ վարչակազմը ուսումնական տարվա մեկնարկից անմիջապես հետո սկսի մշակել հեռավար ուսուցման անցնելու պլան (օրինակ, երբ աշխատող մասնագետները, երեխաներն ու ծնողները կողմնորոշվեն առկա կրթական գործընթացի կանոնակարգերում): Տվյալ պլանի բաղադրիչ է նախադպրոցական հաստատությունում ներգրավված հատուկ կրթական կարիք ունեցող երեխաների՝ հեռավար կրթական գործընթացի մեջ ներգրավման հնարավորությունը և դրա հետ կապված մարտահրավերների անհատական քննարկումը:

Հատուկ կրթական կարիք ունեցող երեխաների դեպքերի անհատական վերանայման գործընթացում անհրաժեշտ է նախադպրոցական հաստատությունում ներգրավել ծնողին, կրթական անձնակազմին և աջակցության մասնագետներին, ովքեր ներգրավված են նշված երեխայի կրթական գործընթացում:

Հեռավար ձևին անցնելու պլանի քննարկմանը կարող է տրամադրվել մի քանի խմբային հանդիպում: Նպատակահարմար է, որ այն անցկացվի գործող մանկավարժների և ծնողների համար հարմար ձևաչափով `առկա հանդիպումների տեսքով (եթե եղած կանոնակարգերը չեն սահմանափակում այս ձևաչափը) կամ հեռավար կարգով և օգտագործելով ձևաչափ, որը մատչելի է բոլոր կողմերի համար:

Այս հանդիպումների արդյունքում ներգրավված բոլոր կողմերի համար հստակ պետք է դառնան իրենց գործառույթներն ու պարտականությունները և այն ռազմավարությունները, որոնք ավելի արդյունավետ կդարձնեն հատուկ կրթական կարիք ունեցող երեխայի մասնակցությունը հեռավար կրթական գործընթացում:

Հատուկ կրթական կարիք ունեցող երեխայի համար հեռավար կրթական գործընթացի կազմակերպման հետ կապված որոշում կայացնելու համար կարևոր է, որ ծնողը և գործող մանկավարժները նկատի ունենան երեխայի պատրաստվածությունը և անդրադառնան անցած տարվա փորձին (Նման փորձի առկայության դեպքում): Դա անելու համար թիմը կարող է առաջնորդվել հարցարանով. Երեխաների պատրաստակամությունը հեռավար ուսուցման նկատմամբ (տե՛ս Հավելված №5. Երեխաների պատրաստակամությունը հեռավար ուսուցման նկատմամբ) և, ելնելով իրենց սեփական փորձից և ծնողների արձագանքներից, հետևողականորեն հստակեցնի այն հանգուցային հարցերը, որոնց վրա հիմնվելով կկազմակերպվի երեխայի համապատասխան հեռավար կրթական գործընթացը: Հարցաշարի վարչարարության համար պատասխանատու է երեխայի դաստիարակը կամ հատուկ մանկավարժը (եթե այդպիսի հաստիք գոյություն ունի):

Երեխայի հեռավար ուսուցման գործընթացի կազմակերպման համար կարևոր է ճշգրտել հետևյալ հարցերը.

- Ինչպես է երեխան արձագանքում դաստիարակի և այլ երեխաների հետ հեռավար հանդիպմանը:
- Որքանով է երեխան ընկալում և արձագանքում կրթական գործընթացի հեռավար ձևին:
- Որքանով է երեխան շփվում դաստիարակի հետ` հեռավար կարգով անհատական ակտիվությունների ներգրավվելիս:
- Որքանով է երեխան շփվում հասակակիցների հետ հեռավար հանդիպումների ժամանակ:

- Որքանով է տարբերվում երեխայի ինտերակցիան դաստիարակի հետ խմբում լինելիս և իրար հետ մենակ մնալիս:
- Որքան ժամանակ կարող է երեխան անցկացնել էկրանի մոտ՝ առանց ուշադրությունը ցրվելու:
- Որ ռազմավարություններն են օգնում երեխային պահպանել ուշադրության կենտրոնացումը հեռավար ուսուցման ընթացքում:

Եթե երեխայի հետ թիմային աշխատանքի ժամանակ ի հայտ գան երեխայի հետ խմբում աշխատելու մարտահրավերներ, թիմը պետք քննարկի.
- Ավելացվի արդյոք մեկը մեկի հետ անհատական աշխատանքի ինտենսիվությունը:
- Արդյոք չափազանցված չի լինի երեխայի շփումը համակարգչային տեխնոլոգիայի հետ, եթե նրան անհրաժեշտ են լրացուցիչ անհատական հանդիպումներ:
- Նվազեցվի արդյոք խմբի մեջ ներգրավվածությունը:

Վերջնական որոշումը պետք է կայացվի շատ զգույշ: Ավելին, նույնիսկ այն դեպքում, եթե, երեխայի հնարավորության նախատեսմամբ, նրա ակտիվ մասնակցությունը հեռավար ուսուցման գործընթացներին հնարավոր չէ, ցանկալի է, որ երեխան թեկուզ պասիվ մասնակցի հեռավար գործընթացներին: Դա անհրաժեշտ է նրա նրա հոգե-հուզական կայունության, սոցիալական կապերի շարունակականության և պատկանելության զգացողության համար:

Երեխայի համար խմբային և անհատական (մեկը մեկի հետ) հանդիպումների ինտենսիվությունը պետք է որոշվի նրա կարողությունների խորը վերլուծությամբ:

Հեռավար ուսուցման ձև ընտրելիս որոշիչ կլինեն.
- Երեխայի հնարավորությունները հեռավար (առցանց հարթակի միջոցով) շփում հաստատել դաստիարակի և երեխաների հետ, տրամադրված հրահանգներին և նյութերին արձագանքելը:
- Գործընթացում աջակցող չափահասի օգնությունը:
- Դաստիարակի կամ հատուկ մանկավարժի հետ անհատական ուսուցումը շարունակելու կամ ավելացնելու անհրաժեշտությունը՝ այս կամ այն հմտությունը բարելավելու կամ վարժելու նպատակով:

## Ծնողի դերը հեռավար կրթական գործընթացի կազմակերպման և իրականացման գործընթացում

Հեռավար կրթական գործընթացի տրամադրման ժամանակ որոշիչ է ծնողի մասնակցությունը: Երեխաների կրթական գործընթացում ներգրավվածությունը ստեղծված իրավիճակում այնպես է կախված ծնողների ներգրավվածությունից, ինչպես երբեք: Հեռավար կրթական գործընթացն ավելացրել է ծնողների ներգրավվածության պարտավորությունները, ինչը նրանից ավելի է, ինչ ծնողները մինչև համավարակն իրականացնում էին իրենց երեխաների համար կրթական գործընթացի համակարգման կամ մշտադիտարկման նպատակով:

Միևնույն ժամանակ, հեռավար ձևով կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպումը էապես կախված է ծնողի և դաստիարակի միջև եղած համագործակցությունից: Ուստի կարևոր է, որ նախադպրոցական հաստատության ներկայացուցիչները՝ վարչակազմը, կրթական անձնակազմը, հատուկ մանկավարժը գիտակցեն և պատրաստակամություն ստեղծեն նրա համար, որ իրենք պետք է ծնողների հետ ավելի ինտենսիվ, համակարգված և տարբեր միջոցներով շփվեն:

Այն, թե ինչ ձևով ու ինտենսիվությամբ կլինի ծնողը ներգրավված իր երեխայի կրթական գործընթացում, կախված է հենց երեխայի հնարավորություններից, ուսումնական պլանի պահանջներից և նույնիսկ

ծնողի ունեցած ժամանակի չափից: Ծնողների ներգրավվածության հարցերը պարզելու համար թիմին կօգնի հարցարանը՝ Հեռավար կրթության համար երեխաների պատրաստակամությունը (տե՛ս Հավելված № 5. Երեխայի պատրաստակամությունը հեռավար կրթական գործընթացի նկատմամբ:)

Այս հարցաշարի հիման վրա կհստակեցվի հետևյալը.

- Ծնողների հետադարձ կապը անցած տարվա, ծեր սեփական դերի և արդյունավետության վերաբերյալ:
- Ընտանիքում հասանելի տեխնոլոգիաներն ու ռեսուրսները:
- Ծնողների իրավասությունները թվային տեխնոլոգիաների օգտագործման մեջ:
- Ծնողների ծանրաբեռնվածությունը և կրթական գործընթացում ակտիվորեն մասնակցելու հնարավորությունը (հրատապ է այն դեպքում, եթե երեխան անմիջական աջակցության կարիք ունի ուսումնական գործընթացին մասնակցելու համար):

Ցանկացած դեպքում, նախապատրաստական փուլում անհրաժեշտ կլինի, որ նախադպրոցական հաստատության ղեկավարությունը ծնողներին տեղեկացնի հեռավար կրթության գործընթացին անցնելու կանոնակարգերը, առաջարկի և, անհրաժեշտության դեպքում, անցկացնի թվային տեխնոլոգիաների օգտագործման դասընթաց:

Ստորև բերված աղյուսակն արտացոլում է հեռավար կրթական գործընթացում ծնողի ներգրավման ձևերը.

| |
|---|
| Ծնողը ներկա է գտնվում **խմբում** ընթացող կրթական գործընթացին և աջակցում երեխային այս գործընթացում: |
| - Նրա ուշադրությունն ուղղորդում է դեպի կրթական գործընթաց:<br>- Դաստիարակի ցուցումով առաջարկում է համապատասխան կրթական ակտիվություն:<br>- Օգնություն ցուցաբերողի համապատասխան ձևերի պահպանմամբ՝ օգնում է կատարելիս: |
| Ծնողը ներկա է գտնվում **անհատական՝ մեկը մեկի հետ** ընթացող կրթական գործընթացին և աջակցում երեխային այս գործընթացում: |
| - Նրա ուշադրությունն ուղղորդում է դեպի կրթական գործընթաց:<br>- Դաստիարակի ցուցումով առաջարկում է համապատասխան կրթական ակտիվություն:<br>- Օգնություն ցուցաբերողի համապատասխան ձևերի պահպանմամբ՝ օգնում է կատարելիս: |
| Ծնողը **լրացուցիչ անհատապես** երեխայի հետ վարում է /անմիջականորեն իրականացնում է երեխայի զարգացնող ակտիվություններ՝ դաստիարակի հանձնարարականների նախատեսմամբ: |
| Ծնողը **լրացուցիչ** (նրանից ավելի հաճախ, քան խմբում այլ ծնողներ) անհատապես հանդիպում է դաստիարակի և/կամ հատուկ մանկավարժի հետ՝ երեխայի կրթական գործընթացի քննարկման նպատակով: |

Անկախ նրանից, թե ինչ ձևով տեղի կունենա ծնողի ներգրավվածությունը հեռավար կրթական գործընթացում, անհրաժեշտ է, որ ծնողը ճշգրիտ պատկերացում և գիտելիք ունենա հետևյալ հարցերի վերաբերյալ.

- **Ինչ սպասում ունեն իրենից:**
- **Ինչ նպատակներ են նախանշված իր երեխայի համար:**
- **Ինչպիսի ակտիվություններ են իրականացվելու կամ ինչպիսի աշխատանք պետք է ստեղծվի:**
- **Ինչ հրահանգներ պետք է տրվեն:**

- **Որ նյութի օգտագործումն է տեղին:**
- **Որն է երեխայի ցանկալի կատարումը:**

Անհրաժեշտ է, որ ծնողը ակտիվորեն ներգրավվի կրթության և զարգացման համապատասխան նպատակների համաձայնեցման (վերագնահատում, վերանայում) գործընթացում: Շատ կարևոր է, որ նա կապ տեսնի երեխային առաջարկվող գործողությունների և սահմանված կրթական նպատակի միջև։ Խորհուրդ չի տրվում, որ նա, առանց վերջինս հասկանալու, իր երեխային միայն մեխանիկորեն ներգրավի դաստիարակի կողմից սահմանված գործունեության մեջ: Սա էլ ավելի հրատապ է այն դեպքում, եթե ծնողը ստիպված է լրացուցիչ աշխատել երեխայի հետ:

Արդյունավետ է, եթե դաստիարակն ու հատուկ մանկավարժը (այսպիսի հաստիքի առկայության դեպքում) նախապես սահմանում են հրատապ նպատակին համապատասխան բազմազան ակտիվություններ (օրինակ՝ գրի են առնում այն ակտիվությունները, որոնք երաշխավորվում են երեխայի համար ընթացիկ շաբաթվա ընթացքում), կիսվում են դրանցով ծնողի հետ և հեռավար հանդիպման ձևաչափով մանրամասնորեն քննարկում յուրաքանչյուր ակտիվությունը, դրանց կարևորությունը, կրթական նպատակի հետ կապը, անհրաժեշտ նյութերը, հրահանգը, ցանկալի/ ակնկալվող կատարումը, գործունեության օժանդակության ձևափոխման հնարավորությունները և այլն:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է, որ դաստիարակը մանրամասն տեղեկություններ ստանա երեխայի կողմից գործունեության փաստացի կատարման վերաբերյալ, քանի որ միայն այդ տեղեկատվության հիման վրա կարելի է որոշել երեխայի զարգացման դինամիկան, հետագա զարգացման գործողությունները:

Համապատասխանաբար, երեխային գործունեությունը ներկայացնելուց հետո ծնողը պետք է ուշադիր հետևի երեխայի կատարմանը և դաստիարակի հետ կիսվի գործընթացի ընթացքով և ստացված արդյունքով: Դա անելու համար ծնողը և դաստիարակը հնարավոր է լրացուցիչ հանդիպումների կարիք ունենան, քան ստանդարտ ձևով էր սահմանված։ Ծնողը կարող է կատարել գրավոր կամ աուդիո, տեսաձայնագրություններ և դրանք քննարկել մանկավարժի և/կամ հատուկ մանկավարժի հետ:




Միևնույն ժամանակ կարևոր է, որ դաստիարակը ճշգրիտ պատկերացում կազմի, թե ինչպիսին է ծնող-երեխա փոխներգործությունը։ Հետևաբար, նպատակահարմար է, որ նա հետևի ծնողի կողմից իրականացված կրթական գործընթացին և հետադարձ կապ տրամադրի ինչպես երեխային, այնպես էլ՝ ծնողին (ծնողին հետադարձ կապի տրամադրումը երաշխավորվում է ծնողի հետ անհատական հանդիպման ձևաչափում)։

Կարևոր է ճշգրիտ կերպով սահմանել ծնողի՝ կրթական գործընթացում մասնակցության ինտենսիվությունը և նրա պատասխանատվությունը։ Անթույլատրելի է, որ դաստիարակը ուսուցման գործընթացի ողջ պատասխանատվությունը տեղափոխի ծնողի վրա և այդպիսով նվազեցնի սեփական պատասխանատվությունն ու ներգրավվածությունը: Կարևոր է, որ դաստիարակները ծնողին ընկալեն որպես կրթական գործընթացի աջակցող, այլ ոչ թե՝ հիմնական վարող։

# Հատուկ մանկավարժի դերը հեռավար կրթական գործընթացի կազմակերպման և իրականացման ժամանակ

Հեռավար կրթական գործընթացի պլանավորման և իրականացման գործընթացում պետք է զգուշորեն սահմանվի հատուկ մանկավարժի դերը (եթե նախադպրոցական հաստատությունում այդպիսի հաստիք կա): Ինչպես սովորական կրթության գործընթացում, հատուկ կրթության ուսուցիչների դերն ու պարտականությունները կարող են փոխվել և հարմարվել տարբեր երեխաների: Բնականաբար, սա էապես սահմանում են հենց երեխայի կարիքները:

Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս հատուկ մանկավարժների ներգրավման ձևերը.

**Հատուկ մանկավարժի ներգրավվածության ձևերը.**

| |
|---|
| ☐ Դաստիարակի և հատուկ կրթական կարիք ունեցող երեխայի աջակցություն խմբում կրթական գործընթացի իրականացման ժամանակ: |
| ☐ Մեկը մեկի հետ անհատական հանդիպումներ երեխայի հետ՝ սահմանված նպատակների և ակտիվությունների վրա աշխատելու նպատակով: |
| ☐ Մանկավարժի աջակցություն երեխային՝ կրթական նպատակների, ակտիվությունների էլեկտրոնային կրթական ռեսուրսի ընտրության և հրահանգների ձևակերպման գործընթացում: |
| ☐ Դաստիարակի հետ կամ ինքնուրույն ծնողին հանձնարարականներ և հրահանգներ տալ՝ կրթական գործընթացի պլանավորման-իրականացման հարցերի վերաբերյալ: |
| ☐ Երեխայի և նրա ծնողի աշխատանքի գործընթացի դիտարկում (հնարավոր է իրականացվի կենդանի ռեժիմում (live) կամ ձայնագրության վերլուծության հիման վրա), ծնողին հետադարձ կապի տրամադրում: |

Կրթական գործընթացի հեռավար կառավարման պայմաններում հատուկ մանկավարժի համար կարևոր է ունենալ հստակ և հնարավորինս ֆիքսված աշխատանքային ժամանակացույց և ցանկ, որն ամբողջությամբ արտացոլում է նրա մասնակցությունը հատուկ կրթական կարիք ունեցող ունեցող երեխաների կրթական գործընթացին: Միևնույն ժամանակ, ցանկալի է, որ ժամանակացույցը հստակ ցույց տա ժամանակները.

- Երբ և ում հետ է հատուկ մանկավարժը մասնակցում հեռավար խմբային հանդիպումներին:
- Երբ և ում հետ է աշխատում անհատապես:
- Երբ է ներգրավված ծնողի, դաստիարակի խորհրդատվության գործընթացում:
- Երբ է պլանավորում ուսումնական գործընթացը:

✓ **Երեխաների խմբում ընթացիկ կրթական գործընթացի դիտում / մանկավարժի աջակցություն**

Կարևոր է, որ հատուկ մանկավարժը նախադպրոցական հաստատությունում ներկա գտնվի հատուկ կրթական կարիք ունեցող բոլոր երեխաների հեռավար ուսուցման խմբային կրթական գործընթացին:

Այս կերպ հատուկ մանկավարժը պատկերացում կկազմի այն մասին, թե ինչպես է ընթանում երեխաների այս գործընթացը, և որտեղ ունեն երեխաները, ծնողները և դաստիարակները աջակցության կարիք:

Հատուկ մանկավարժին պետք է ուղարկվի այն խմբային հանդիպումների ժամանակացույցը, որտեղ բաշխվում են հատուկ կրթական կարիք ունեցող երեխաները: Դրա հիման վրա հատուկ մանկավարժը կստեղծի ուսումնական գործընթացին ներկա գտնվելու և դիտարկելու իր սեփական ժամանակացույցը:

✓ **Մեկը մեկի հետ աշխատանք երեխայի հետ նրա անհատական նպատակի շուրջ**

Անհրաժեշտության դեպքում հատուկ մանկավարժը որոշում է կոնկրետ երեխայի հետ անհատական աշխատանքի ժամանակը: Նրա հետ մեկը մեկի հետ աշխատելու համար հատկացված ժամանակը չպետք է համընկնի խմբային հանդիպումների հետ:

Կարևոր է, որ երեխայի հետ լրացուցիչ անհատական աշխատանքի վերաբերյալ որոշումները զգույշ կայացվեն: Այս ժամանակ չպետք է ակամա խրախուսվի համակարգչային տեխնոլոգիաների գերազանցված օգտագործումը։ Հնարավորության դեպքում պետք է խրախուսվի ծնողի ռեսուրսի օգտագործումը։ Ստացված մանրամասն հրահանգների հիման վրա ծնողները պետք է երեխայի հետ անհրաժեշտ լրացուցիչ աշխատանք կատարեն ոչ հեռավար ռեժիմով (ինչն ավելի արդյունավետ կլինի):

✓ **Երեխայի հետ մեկը մեկի հետ ընթացող կրթական գործընթացի դիտարկում: Դաստիարակի, ծնողի աջակցություն**

Հատուկ մանկավարժը կարող է ներգրավվել անհատապես ընթացող կրթական գործընթացում, որը երեխայի հետ վարում են դաստիարակը կամ ծնողը: Այս ներգրավվածությունների նպատակը կլինի շարունակական փոխգործակցության և երեխայի առաջընթացի գնահատումը, դաստիարակին կամ ծնողին լրացուցիչ հրահանգներ տալու անհրաժեշտության որոշումը: Այս հանդիպումների հիման վրա հատուկ մանկավարժը կարող է նաև սահմանել լրացուցիչ գործողություններ և ռեսուրսներ երեխայի համար, որոնցով կկիսվի դաստիարակի և/կամ ծնողի հետ:

Նպատակահարմար է հատուկ մանկավարժին ուղարկվի հատուկ կրթական կարիք ունեցող երեխաների և նրանց ծնողների հետ անհատական հանդիպումների ժամանակացույցը։ Դրա հիման վրա նա կստեղծի անհատական կրթական գործընթացին ներկա գտնվելու և դիտարկելու իր ժամանակացույցը:

✓ **Անհատական խորհրդատվություններ ծնողների և կրթական անձնակազմի հետ**

Նպատակահարմար է, որ հատուկ մանկավարժը առնվազն շաբաթը մեկ անգամ անհատական խորհրդատվություն ունենա հատուկ կրթական կարիք ունեցող երեխայի ծնողի և խնամողի հետ:

Անհատական խորհրդատվության ընթացքում հատուկ մանկավարժը ծնողի և/կամ դաստիարակի հետ անդրադարձ կկատարի ընթացիկ շաբաթվան (ժամանակահատվածի վերջին հանդիպումից) և կբացատրի առաջիկա շաբաթվա (կամ հանդիպմանը նախորդող ժամանակահատվածի) աշխատանքային նպատակները, միևնույն ժամանակ, եթե ծնողն անձամբ է աշխատում երեխայի հետ, կծանոթացնի կատարվելիք ակտիվությունները, դրանց նպատակը և ակտիվության կատարման հետ կապված այլ հարցեր:

✓ **Կրթական գործընթացի պլանավորում**

Նշվածը հատուկ մանկավարժի գործունեության կարևոր բաղադրիչն է: Ուստի, նպատակահարմար է հատուկ մանկավարժը որոշակի ժամանակ հատկացնի տվյալ գործունեությանը: Պլանավորման գործընթացում հատուկ մանկավարժը որոշում է հետևյալը.

- Երեխայի զարգացման անհատական նպատակները, ակտիվությունները, նյութերը, որոնց հիման վրա նա պետք է աշխատի երեխայի հետ:
- Երեխայի անհատական կրթական կամ զարգացման նպատակները, ակտիվությունները, նյութերը, որոնք կարող են առաջարկել դաստիարակին՝ երեխայի հետ աշխատելու համար,

հանձնարարականներ դաստիարակին՝ ինչպես առաջնորդել ուսումնական գործընթացը, նպաստել երեխայի ներգրավմանը և կառավարել նրա վարքը (հնարավոր է, որ այդ հարցերը հատուկ մանկավարժը լուծի ոչ թե ինքնուրույն, այլ հենց սկզբից դաստիարակի հետ մշակի):
- Երեխայի զարգացման անհատական նպատակները, գործողությունները, նյութերը, որոնք կարող են առաջարկվել ծնողին՝ երեխայի հետ աշխատելու համար, հանձնարարականներ ծնողի համար (ինչպես վարել երեխայի հետ աշխատանքի գործընթացը, ներգրավվածությունը և վարքը, երեխայի հոգեբանական-հուզական վիճակի վերաբերյալ մտորումները և այլն):

Իհարկե, անհրաժեշտ է, որ հատուկ մանկավարժը մշակված ծրագիրն ու հանձնարարականները գրավոր և մանրամասնորեն արտացոլի յուրաքանչյուր երեխայի զարգացման անհատական պլանում և այն հասանելի դարձնի համապատասխան կողմի համար (դաստիարակի և/ կամ ծնողի):

Ելնելով վերոնշյալից՝ խորհուրդ է տրվում, որ հատուկ մանկավարժը յուրաքանչյուր երեխայի համար ստեղծի անհատական աղյուսակ ` որտեղ կնշի նրա հետ կապված ակտիվությունները:

## Աջակցող ծառայությունների տրամադրման անհրաժեշտություն

Մինչև ուսուցման հեռավար ձևին անցնելը կամ դրանից հետո կարող է անհրաժեշտ համարվել ծնողի խորհրդատվություն երեխայի հոգե-հուզական աջակցության և/կամ վարքի կարգավորման հարցերով, որոնք կարող են սրվել ֆիզիկական հեռավորության պայմաններում: Կարող է անհրաժեշտ լինի աշխատել նաև երեխայի վարքի վրա:

Հետևաբար, կարևոր է նախադպրոցական հաստատության դաստիարակը և երեխայի հետ կապված հատուկ մանկավարժը, ուսուցման հեռավար ձևի տեղափոխվելուց առաջ, երեխայի և ծնողի հետ ինտերակցիայի հետևանքով որոշեն երեխայի հոգեբանական-հուզական կարիքները և տրամադրեն համապատասխան հանձնարարականներ կամ վարքի կարգավորման մասին խորհուրդներ ինչպես ֆիզիկական մեկուսացման պայմաններում, այնպես էլ այն ավարտվելուց հետո: Միևնույն ժամանակ, երեխաների հոգեբանական-հուզական վիճակի շուրջ մտորումները պետք է շարունակվեն հեռավար կրթական գործընթացում:

Հետևաբար, հատուկ մանկավարժը պետք է ուշադիր դիտարկի երեխային հեռավար հանդիպումների ժամանակ: Անհրաժեշտության դեպքում կարևոր է, որ ինչպես երեխան, այնպես էլ ծնողը ստանան համապատասխան աջակցություն, որը պետք է իրականացվի համապատասխան մասնագետների հրավիրմամբ: Հնարավոր է նաև, որ երեխան և ծնողը աջակցություն ստանան այն սոցիալական ծառայություններից, որոնցում ներգրավված է երեխան:

# Հավելվածներ

## Հավելված №1
## Նախադպրոցական հաստատության մաքրման պրոտոկոլի նմուշ

**Նախադպրոցական հաստատության մաքրման պրոտոկոլ**
**COVID-19-ի համավարակի ժամանակահատվածում աշխատելու համար**

**Նորմատիվային հիմք.** ______________________________
**Պատասխանատու անձինք.** __________________________

**Մաքրելը.**
- Որ զետեղարանները (սենյակները) ինչ ինտենսիվությամբ են մաքրվում
- Որ զետեղարանները մաքրելու համար որ մեթոդներն են օգտագործվում (թաց մաքրում, փոշին սրբել ...)
- Որ զետեղարաններում որ մակերեսներն են մաքրվում
- Որ զետեղարաններում որ մաքրման / լվանալու միջոցներն են օգտագործվում
- Ինչպես է տեղի ունենում թափոնների կառավարումը (պահանջներ՝ կապված տարաների հետ)

**Մաքրելու համար հատկացված գույք և միջոցներ**.
- հատակի մաքրման փայտ՝ թաց մշակման համար,
- երկու բաժին ունեցող դույլ՝ մաքուր ջուր/լվացող հեղուկ,
- աղբահավաք և ավել,
- ձեռնոց և պահեստային ձեռնոց,
- մոմլաթե գոգնոց սանհանգույցում օգտագործման համար,
- լաթեր, այս թվում հատակի, ապակիների և կահույքի համար,
- լաթ զուգարանները մաքրելու համար,
- մաքրող սպունգ, խոզանակ, փափուկ մետաղական պարույր,
- օդի դեզոդորանտ,
- փայտե կահույքի մշակման միջոց (անհրաժեշտության դեպքում),
- կաշվե մակերևույթների մշակման միջոց (այսպիսինի առկայության դեպքում),
- լաթերը լվանալու համար լվացքի փոշի,
- մակերեսները մաքրելու փոշի կամ կրեմ,
- հեղուկ՝ հատակի մաքրման և փայլեցման համար, ըստ հատակի տեսակի (փայտ, սալիկ, լինոլեում և այլն),
- զուգարանակոնքի մշակման հեղուկ,
- ապակու մաքրման միջոց,
- նիկելի, արույրի և այլ մետաղական մակերևույթների մշակման միջոց,
- տրապների և կոլեկտորների մշակման միջոց,
- մեծ և փոքր աղբի տոպրակներ,
- մաքրման գործընթացն ավարտելուց հետո մաքրման գույքի մշակման համար ախտահանիչ լուծույթ։

**Հավքարարի հանդերձանք** (անձնական պաշտպանիչ միջոցներ).
- դիմակ
- դիմավահան

- մեկանգամյա խալաթ
- ձեռնոց
- փակ կոշիկներ

**Նախապատրաստում մաքրելու համար**.
Հանդերձավորման փուլերը և հաջորդականությունը.
- Ձեռքերի ախտահանում:
- Մեկանգամյա անջրաթափանց խալաթ հագնել՝ ետին մասում կոճկվող:
- Դիմակ և դեմքի վահան կրել:
- Ձեռնոցներ հագնել այնպես, որպեսզի խալաթի թևքերը ծածկվեն:

**Մաքրելն ավարտելուց հետո**
- Ձեռնոցները հանել՝ շրջելու սկզբունքով:
- Խալաթը հանել:
- Հանել դիմակը և դեմքի վահանը
- Ձեռքերի կրկնակի ախտահանում:



# Հավելված №2
# Աշխատակիցների համար կազմված նշման թերթիկի նմուշ

### Նշման թերթիկ աշխատակիցների համար

Տվյալ հարցաշարը աշխատակիցներին հնարավորություն կտա նախադպրոցական հաստատությունում արդյունավետ և գործուն պլանավորել, վերականգնել և վարել կրթական գործընթացը

| № | Անցկացվելիք միջոցառումներ | Ավարտված | Ընթացիկ | Դեռ չսկսված |
|---|---|---|---|---|
| 1 | Նախադպրոցական հաստատությունում սահմանված են պատասխանատու անձինք համավարակի պայմաններում տարբեր հարցերի համակարգման համար: | | | |
| 2 | Մինչև նախադպրոցական հաստատություն մուտք գործելն իրականացվում է այցելուների ջերմաչափում և ձեռքերի հիգիենայի ընթացակարգեր: | | | |
| 3 | Այցելուները համապատասխանաբար և ճիշտ են կիրառում անհատական պաշտպանության միջոցները: | | | |
| 4 | Երեխաների ընդունումն ու ճանապարհումն իրականացվում է նախադպրոցական հաստատության մուտքի մոտ: | | | |
| 5 | Սահմանված է նախադպրոցական հաստատության ներկայացուցիչ, որը շփվում է ծնողի/օրինական ներկայացուցչի հետ և ստանձնում պարտավորություն երեխային ընդունելու/ճանապարհելու համար: | | | |
| 6 | Աշխատակիցները կիրառում են անհատական պաշտպանության միջոցներ: | | | |
| 7 | Աշխատակիցների միջև պահպանված է ֆիզիկական/սոցիալական հեռավորությունը: | | | |
| 8 | Շենքում ապահովված է բնական կամ արհեստական օդափոխության համակարգի արդյունավետ աշխատանք: | | | |
| 9 | Ապահովված է COVID-19-ի համավարակի պայմաններում գործող նախադպրոցական հաստատությունների հետ կապված այլ հանձնարարականների և պահանջների կատարում: | | | |
| 10 | Նախադպրոցական հաստատությունում ապահովված է երեխայի պաշտպանություն բռնությունից: | | | |
| 11 | Նախադպրոցական հաստատությունը հեռավար կրթական գործընթացում որևէ ձևով բռնի գործողության արձանագրման պես, իրեն շնորհված լիազորությունների շրջանակներում գործում է ըստ գործող Օրենսդրության: | | | |
| 12 | Նախադպրոցական հաստատությունում պաշտպանված են երեխայի անհատական տվյալները: | | | |
| 13 | Նախադպրոցական հաստատությունում ապահովված է երեխայի տեղեկացվածությունը, և խրախուսված է որոշումների կայացման գործընթացի մեջ նրա ներգրավումը: | | | |

| № | Անցկացվելիք միջոցառումներ | Ավարտված | Ընթացիկ | Դեռ չսկսված |
|---|---|---|---|---|
| 14 | Նախադպրոցական հաստատության աշխատակիցները աջակցում են մունիցիպալիտետին նախադպրոցական հաստատություններում մինչև կրթական գործընթացի սկսվելը կարիքների հետազոտման և վերլուծության գործընթացում: | | | |
| 15 | Նախադպրոցական հաստատությունը կայացնում է խորհրդատվական խորհրդի օգնությամբ, ժամանակին և համամասնականության սկզբունքի վրա հիմնված որոշումներ՝ կապված COVID-19-ով հարուցված հարցերի հետ: | | | |
| 16 | Աշխատակիցները պատրաստված են կարգավորող մարմինների կողմից տրամադրված հանձնարարականների նախատեսմամբ: Ապահովված է կանոնակարգերի ներդրում պրակտիկա: | | | |
| 17 | Նախադպրոցական հաստատությունում առանձնացված է մեկուսացման սենյակ: Մեկուսացման սենյակն ունի բնական կամ արհեստական օդափոխության համակարգ: Մեկուսացման սենյակում կա. աթոռ/բազկաթոռ/թախտ, լվացարան, մեկանգամյա անձեռոցիկներ, հեղուկ օճառ և ձեռքերի մանրէազերծող միջոցներ: | | | |
| 18 | Մեկուսացման սենյակում ստեղծված է երեխայակենտրոն, պաշտպանված և անվտանգ, սթրեսից ազատ ֆիզիկական և սոցիալական միջավայր: | | | |
| 19 | Մեկուսացման սենյակը մշակվում է թաց եղանակով և ախտահանվում է այն ազատվելուն պես: | | | |
| 20 | Բարձր ջերմության արձանագրման պես, հաստատության ներկայացուցիչը կապվում է ծնողի հետ, նրան տրամադրում երեխայի առողջական վիճակի հետ կապված տեղեկատվություն, խնդրում, որ երեխային տանեն նախադպրոցական հաստատությունից և տրամադրում տեղեկատվություն հետագա քայլերի մասին: | | | |
| 21 | Պահպանված է տեղեկատվության գաղտնիությունը բարձր ջերմություն (37$^{0}$C կամ ավելի) ունեցող երեխայի, անձնակազմի ինքնության և նրա առողջական վիճակի մասին: | | | |
| 22 | Նախադպրոցական հաստատությունում աշխատակիցները պահպանում են 1 մետրանոց հեռավորություն, այդ թվում ընդհանուր օգտագործման տարածքներում, ինչպիսիք են, օրինակ՝ ճաշարանը կամ հանգստի սենյակը: | | | |
| **Կրթական գործընթաց** | | | | |
| 1 | Նախադպրոցական հաստատությունը ընտրել է նախադպրոցական կրթական ծառայության տրամադրման ձևը: | | | |
| 2 | Աշխատակիցները առավելագույն ջանքեր են ներդնում նախադպրոցական կրթական ծառայության որևէ ձևով տրամադրման և իրականացման մեջ: | | | |

| № | Անցկացվելիք միջոցառումներ | Ավարտված | Ընթացիկ | Դեռ չսկսված |
|---|---|---|---|---|
| 3 | Աշխատակիցների կողմից կրթական գործընթացը պլանավորված է հաստատության ռեսուրսների և յուրաքանչյուր երեխայի հետաքրքրությունների և հնարավորությունների նախատեսմամբ։ | | | |
| 4 | Առաջին հանդիպումները (օրինակ՝ ընդունելը) անցկացվում են բաց տարածքում, ինչի համար օգտագործվում են հաստատության բաց տարածքները՝ բակը, ծածկապատշգամբը և այլն։ Վերոնշյալ փորձի իրականացման ժամանակ պահպանված է մեծահասակների միջև 1 մետրանոց ֆիզիկական/սոցիալական հեռավորությունը, և ապահովված է ողջամիտ քանակի անձանց մասնակցություն ակտիվությանը։ | | | |
| 5 | Ընդհանուր օգտագործման տարածքներում (բակ, դահլիճ, ճաշարան և այլն) ակտիվություններն իրականացվում են ըստ նախապես կազմված ժամանակացույցի (աղյուսակի), այնպես, որ մեկ տարածքում երեխաների և անձնակազմի քանակն այնքանով է նվազեցված, որքան ողջամտորեն հնարավոր է։ | | | |
| 6 | Յուրաքանչյուր խմբի հետ աշխատում է միայն միևնույն թիմը։ | | | |
| 7 | Խմբում հատուկ կարիք ունեցող երեխա լինելու դեպքում, խմբում աշխատում է ինչպես դաստիարակ, այնպես էլ՝ օգնական։ | | | |
| 8 | Աշխատակիցները կանոնավոր կերպով վարում են, ըստ ընտրված ընթացիկ ձև(եր)ի, անցկացված կրթական գործընթացում երեխաների հաճախման հաշվառում։ | | | |
| 9 | Աշխատակիցները որոշում են ընտրված տարբեր ընթացիկ ձև(եր)ով անցկացված ուսումնական գործընթացից երեխայի բացակայելու պատճառները։ | | | |
| 10 | Այն դեպքում, երբ բացակայությունը հարուցված է երեխայի / կանոնավոր ներկայացուցչի կողմից համապատասխան տեխնիկական աջակցության (սարքերի կամ ինտերնետի հասանելիության) բացակայությամբ, աշխատակիցները մինչև խնդրի կարգավորումը գործընկերների հետ մեկտեղ քննարկում են առկա հնարավորությունները և պլանավորում այլընտրանքային միջոցառումներ երեխային կրթական գործընթացում ներգրավման համար ինչպես առկա, այնպես էլ՝ հեռավար։ | | | |
| 11 | Այն դեպքում, երբ կրթական անձնակազմը չի կարողանում տնից միանալ կամ չունի համապատասխան տեխնիկական սարք/ինտերնետ, նախադպրոցական հաստատությունն ապահովում է համապատասխան տարածքի տրամադրում անձնակազմի կողմից (դաստիարակ, հատուկ մանկավարժ և այլ կրթական անձնակազմ) ակտիվությունների պլանավորման և անցկացման համար։ | | | |

| № | Անցկացվելիք միջոցառումներ | Ավարտված | Ընթացիկ | Դեռ չսկսված |
|---|---|---|---|---|
| 12 | Աշխատակիցն ապահովել է երեխաների կարիքների, հնարավորությունների, հետաքրքրությունների և ռեսուրսների նույնականացում: | | | |
| 13 | Նախադպրոցական հաստատությունում իրականացվում է հեռավար կրթական գործընթացից դուրս մնացած երեխաների հաշվառում և պատճառների հետազոտում: | | | |
| 14 | Նախադպրոցական հաստատությունում պահպանվում են էթիկայի և վարքի ընդհանուր նորմերն ու անվտանգությունը: | | | |
| 15 | Դաստիարակը, մինչև կրթական գործընթացի սկսվելը, ծանոթացել է տարբեր գրականության, աուդիո և տեսանյութերի, որոնք երեխաների մոտ դրսևորված սթրեսի մասին նրան տեղեկատվություն են տրամադրում: | | | |
| 16 | Դաստիարակը ծանոթացել է երեխաների մոտ սթրեսի կառավարմանը, նրանց հուզական աջակցությանը և դիմացկունության ավելացման ռազմավարություններին: | | | |
| 17 | Նախադպրոցական հաստատության ներկայացուցիչները և կրթական անձնակազմը հանդիպեցին ծնողներին փոքր խմբերում և անհրաժեշտության դեպքում՝ անհատապես, որպեսզի երեխայի մասին լրացուցիչ տեղեկատվություն ստանան: | | | |
| 18 | Դաստիարակը հայթայթել է և ստեղծել խաղեր, որոնք վերաբերում են. ձեռքերը լվանալու ընթացակարգերին, ձեռքերը դեմքին չդիպցնելուն, թե ինչպես պետք է երեխաները հագնվեն այնպես, որ ուրիշների համար անհարմարավետություն կամ վտանգ չստեղծեն: Նշված խաղերը երեխայի համար զվարճալի են և հետաքրքիր: | | | |
| 19 | Դաստիարակը ծնողին/օրինական ներկայացուցչին տրամադրել է տարբեր ռազմավարություններ, թե ինչպես կարելի է երեխայի հետ նրա տարիքային խմբին համապատասխան լեզվով և միջոցներով խոսել վիրուսների, բակտերիաների և դրանց հետ կապված ընթացակարգերի մասին: Այս դեպքում ևս կարելի է կիրառել վերոնշյալ ռազմավարությունները: Դաստիարակը ծնողին տրամադրել է մանկական գրականություն տվյալ թեմայի վերաբերյալ, կամ մատնանշել է կայքեջ, որտեղ դրված է նման նյութ (նկարներ, էլեկտրոնային գիրք, տեսանյութ և այլն): | | | |
| 20 | Դաստիարակը խրախուսել է ծնողին՝ երեխայի հետ վարելու երկխոսություն, նրան հարցեր տալու՝ կապված նախադպրոցական հաստատության հետ, թե ինչ սպասումներ ունի երեխան, նրա մոտ ստեղծի նախատրամադրվածություն և համապատասխան սպասումներ՝ տարբեր ակտիվությունների մեջ ներգրավմամբ: | | | |
| 21 | Դաստիարակը հետաքրքիր շփում ունի երեխայի ծնողի/օրինական ներկայացուցչի հետ: | | | |

| № | Անցկացվելիք միջոցառումներ | Ավարտված | Ընթացիկ | Դեռ չսկսված |
|---|---|---|---|---|
| **Սանիտարահիգիենիկ նորմերի պահպանում** | | | | |
| 1 | Նախադպրոցական հաստատությունում ապահովված է Վրաստանի գրավյալ տարածքներից տեղահանված անձանց, աշխատանքի, առողջապահության և սոցապահովման նախարարության կողմից տրված հանձնարարականների կատարումը: | | | |
| 2 | Կազմված է պրոտոկոլ թաց կետերը/սանհանգույցները թաց կարգով մշակելու և մաքրելու համար, որում գրված են՝ մաքրելու պարբերականությունը, օգտագործած սանիտարահիգիենիկ միջոցները, լվացարանների, զուգարանակոնքերի և այլ մակերևույթների մշակման կանոնները: | | | |
| 3 | Ապահովված է հավաքելու, մաքրելու, ախտահանելու, սննդի և ջրի օգտագործման պրոտոկոլների պահպանումը: | | | |
| 4 | Ապահովված է մակերևույթները ախտահանելու պրոտոկոլը: | | | |
| 5 | Ապահովված է խոհանոցի սանիտարահիգիենիկ վիճակը և սննդի հարցերի կառավարումը: | | | |
| 6 | Դիսպենսերները տեղադրված են նախադպրոցական հաստատության շենքի մուտքի մոտ, ընդհանուր օգտագործման տարածքների մոտ (մեկուսացման սենյակ, ճաշարան և այլն) և հասանելի են բոլորի համար: Կից տրված է նաև ձեռքերի մշակման հրահանգ: | | | |
| 7 | Ձեռքերը լվանալու համար կան համապատասխան պայմաններ. ձեռքերի լվացարանակոնք, հոսող ջրի անխափան մատակարարում, հեղուկ օճառ և մեկանգամյա անձեռոցիկներ: | | | |
| 8 | Նախադպրոցական հաստատությունում չեն օգտագործվում խաղալիքներ, որոնք անհնար է մշակել թաց կարգով: | | | |
| 9 | Կրթական ռեսուրսների (խաղալիքներ և այլն) խնամքն իրականացվում է հանձնարարականներին համապատասխան: | | | |
| 10 | Մաքրելու համար հատկացված գույքը (օրինակ՝ լաթ, զուգարանակոնքը մաքրելու խոզանակ և այլն) լվացվում և չորացվում են: | | | |
| 11 | Հաստատությունն ունի հավաքելու համար հատկացված գույք և միջոցներ: | | | |
| 12 | Հաստատության հավաքարարն ապահովված է և կիրառում է հատուկ հանդերձավորում (անհատական պաշտպանության միջոցներ): | | | |

| № | Անցկացվելիք միջոցառումներ | Ավարտված | Ընթացիկ | Դեռ չսկսված |
|---|---|---|---|---|
| **Գործընկերություն և հաղորդակցություն աշխատակիցների հետ** | | | | |
